



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an antique book. The cover is decorated with a marbled paper pattern featuring a network of red veins on a dark blue-green background. The spine, visible on the left, is bound in a dark green, textured material. A small white rectangular label is affixed to the bottom left corner of the cover, containing handwritten text in blue ink.

242
498



Նկար՝ Յ. Պատկանեան.

Ռօրինիցն Առիւղօ.

Սերգի
605

3

ւր

ՌՕՒԻՆՔՕՆ

ԿՌԻՒՔՕՒ

Պատմութիւնը:




869

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ.

1883

Յակոբ Եօնսօնի Տպարանումը.

1857.



Նիկողայոս Աբիմեանին

Աբէլ Հանչիեանին

եւ

Իշխան Սիբայէլ Բէհրուտեանին

498-60



Նուիրուժ է

Խոնարհ աշխատասիրողը:

498

1840

1841


1842



1843

Ա.Օ. Դ

Ռօբինզօն Առիւղօի Տետաբրքիր պատմութիւնը ամէնին յայտնի է, պատճառօր՝ գրեթէ ամէն ազգ թարգմանած ունի իւր լեզուով այդ գիրքը որոյ նախագաղափարը շարադրած է անգլիերէն : Նորա Տեղինակը Դանիէլ Փօէն է, որ Ռօբինզօնի կեղծած անունով պատմում է մի Սկոտլտացի նաւաստիի կեանքը, որոյ վերայ շատ անցքեր աւելացնելով, շատ փորձանքներու Տանդիպեցնելով՝ շարժում է կարգացողի Տետաբրքրութիւնը : Ռօբինզօնի վարքը խիստ Տետաբրքիր է մանաւանդ երեխայոց Տամար, որոնք կենդանի օրինակով տեսնում են անՏնազանդութեան դառը Տետեւանքը եւ կարօտութեան Տնարագիտութիւնը : Բայց այսքան չէ՛ Ռօբինզօնի ընթերցանութեան օգուտը : սյս գիրքը կարդալով՝ երեխայք տեղերիցը



ՌՕԻԻՆ, ՕՂՕՆ ԿՌԻԻ, ՕՂՕ.



Գ Լ Ո Ի Խ 1.

=

Այս ծնայ 1632 թուին Աօրք քաղաքումը, ուր-որ հայրըս առուտուրի գործերը աւարտած՝ առանձնացել էր իւր բոլոր ընտանիքով: Ծնողներէս ստացայ ես բաւական ընդարձակ կրթութիւն, այսինքն այնքան, որքան մարդ կարող է ստանալ գերդաստանի մէջ ու նահանգական դըպրոցումը:

Ծնողացրս ցանկութիւնը այն էր, որ ես մի օր իրաւաբան լինիմ: Բայց ես միանգամայն դորա ներհակ գոլով՝ խելքըս միտքըս տուել էի ճանապարհորդութիւններ անելու թէ ծովի եւ թէ ցամաքի վերայ: Այս մասին հաստատուն նպատակ չ'ունենալով՝ ես ուղում էի ուր-ասես

Թափառել, միայն - որ տանը չի մնամ ու նրատուկ կեանք չ'անց-կացնեմ: Ո՛չ մի հնարով չի կարողացան իմ ծնօղբբա զսպել այս իմ մոլի կիրքը. ոչ մօրբն դառն արտասոււնքը, ոչ հօրբն խելոք եւ ազդու խօսքերը կարողացան խախտել այս ցնորամիտ եռանդըս: Հայրբն ինձ նախագուշակում էր որ՝ եթէ յետ չի կենամ այս արկածախնդիր կեանքից՝ մեծ մեծ տարաբախտութիւններ կ'անցնին իմ գլխովս, եւ ես մի օր կ'ափսոսամ, որ նորա խրատները բանի տեղ չի դրի. բայց ուշ կ'լինի եւ օգնելու հնար չ'եմ ունենալ այն ժամանակ:

Տեսնելով որ հնար չիկայ ծնօղներէս յօժարութիւն ստանալու՝ ես շատ անգամ մտադիր էի փախչել նոցանից, եւ վերջապէս դտայ յաջողակ դիպուած վաղուցուայ ցանկութիւնքս կատարելու:

Մի օր Հիւլումն էի: Պատահեցայ այնտեղ ծանօթներիցրս մինին, որ փոքր ժամանակից յետ մտադիր էր նաւ նրստելու ու ծովով Անդոն երթալու: Անդրեց, համոզեց ինձ, որ ես նորա հետ միասին փոքրը ինչ շուրջ անեմ: Աս անփորձ գոլով, ինչպէս եւ ամէն ցնորամիտ պատանի, աւելորդ համարեցի եր-



Նկար՝ Յ. Պատկանեան.

Ռօբինզօնի հօրը իմաստուն խրատները.

Թալ Տօրըս եւ մօրըս յօժարուիր ստանալ կամ երկնային Տէրէս օրհնութիւն եւ հովանաւորութիւն խնդրել. նստայ նաւ եւ ընկայ ճանապարհ: Եւ կենաց այս օրհասական օրը եղաւ Սեպտեմբերի 1ին 1651 թուին:

Հաղիւ թէ Հուլիէր դետից դուրսեկանք եւ մտանք ծով՝ մին-էլ տեսնես մի պինդ քամի սկսեց փչելու. ես, որ ծովաշրջիկ կեանքի միանգամայն անսովոր եւ անտեղեակ էի՝ կարծեցի թէ սարսափելի փոթորիկի պատահեցանք: ԱՏ ու դողի մէջ ընկայ. սրտնեղութիւնը անմեկնելի կերպով սկսեց տանջել ինձ. ինքըս ինձի հաստատ խօսք տուի, որ եթէ ողջ եւ առողջ տեղ հասնեմ՝ շուտով տուն կ'դառնամ, կ'ընկնեմ ծնողացըս ոտերը, անառակ որդու նման կըխոստանամ միւս անգամ նոցա կամքէն ամենեւին չի հեռանալ եւ ամէն բան նոցա կամքով կատարել: Բայց միւս օր քամին հանդարտեցաւ, ծովի ալիքները իջան, ու փոթորիկի հետ դնացին կորան իմ բարի դիտաւորութիւնները. սկսեցի ծովաշրջիկների հետ միասին նոցա սովորական կեանքը վարել. առաջ բերին շաքարօղին (ոսմ). ախորժակով խմեցի նորանից եւ հարբեցայ, եւ այդ ուրախ երեկոն

խսարառ մոռացայ ծնօղբքս, զղջումբս, եւ ամէն
խոստամունքքս, որ տուել էի ասպագայիս համար.
եւ որ ամենաւատթարն է մարդուս արարմուն-
քումը՝ խսարառ լռեցուցի իմ մէջ խղճմտանքիս
ձայնը: Անաչառ Նախախնամութիւնը վերին
այս իմ պախարակելի գնացքը պատժելու հա-
մար՝ ինձ պատրաստեց երկրորդ եւ սարսափելի
խրատ: Առումութ նաւահանգրատին չիհասած՝
խակական փոթորիկի հանդիպեցանք, որի հա-
մեմատ առաջինը մեղմ՝ զեփիւռ կարող էր երե-
ւել. նորից ահ ու դողի մէջ ընկայ. խղճմտանքքս
սկսեց ինձ չարչարել: Նաւաստիները անգամ
զարհուրած մնացել էին. ձեռները դէսլի երկինք
բարձրացուցած՝ ջերմեռանդ աղօթքներ եւ ուխ-
տեր էին անում, եւ վերջապէս տեսնելով-որ
փրկութեան յոյս եւ հնար չի կայ՝ սկսեցին
մահուան պատրաստութիւններ տեսնել: Նաւի
տակը փնասուել էր, եւ նորա մէջ անդադար
ջուր էր մտնում. թէ եւ նաւաստիները ան-
խոնջ աշխատում էին ջրհանով դուրս-թափե-
լու, բայց նոցա աշխատանքը ՚ի զուր էր: Քիչ
մնաց-որ նաւը բոլոր ճամբորդներով, կահ կա-
րասիներով խեղդուէր, եւ սյդ անշուշտ կ'կա-
տարուէր, եթէ մի ուրիշ նաւ, որ այն միջոցին

մեր մօտից անցնում էր՝ մեղ օգնութիւն չի
հասնէր: Հազար ու մէկ դժուարութիւններ
յաղթելով՝ վերջապէս կարողացանք մի նաւակի
միջոցաւ, որ օտար նաւից մեղ օգնութիւն ու-
ղարկեցին՝ ոտերըս ցամաք դնել, եւ այդ կերպով
աղատուեցանք վերահաս մահից:

Ահա հիմի ես պիտի թողնէի այն թը-
շուառ ճանապարհը, որ բացւում էր իմ առաջ.
բայց սուտ ամօթը չ'էր թողնում ինձ իմ բարի
դիտաւորութիւնը կատարելու. հազար անգամ
կ'յօժարէի սարսափելի մահ ստանալ, քանթէ
ճնօղացրա եւ ծանօթներուս առաջ սեւերես
մնալ. միւս կողմից արկածախրնդիր կեանքը ան-
համար բերկրութիւններ խոստանում էր իմ
մոլորած երեւակայութեանը: Նորից նրստայ
նաւ, որ նշանակած էր դէպ'ի Գուլինէա չուե-
լու. եթէ այս ճանապարհորդութիւնը յաջողէր՝
մի եւ նոյն ժամանակ պիտի լցնէր իմ փափազը
եւ հարըստացնէր ինձ, պատճառ-որ՝ ճնօղքըս
իմ դառը վիճակին խրղճալով՝ ուղարկել էին ինձ
մի նըշանաւոր դումար, որ ես միտք ունէի վա-
ճառականական դարձուածի գործ ածել, որ քիչ
միջոցումը կարող էր ինձ մեծ արդիւնք բերել:

Առաջի ճանապարհորդութիւնըս բաւականին

յաջողեցաւ. ձեռնարկութիւնքս առաջ-գնաց. այս յառաջագիմութիւնք քաջալերեց եւ ոգեւորեց ինձ: Արկորող անգամ աւել մեծ յուսով խիզախեցայ ճանապարհորդելու. բայց այս անգամ բախտը չի յաջողեց: Կանարեան կրղղիներու եւ Ափրիկայի ավերի մէջ յարձակուեցան մեր վերայ տաճիկ աւազակներ, գերեցին մեր նաւը, կողոստեցին մեր բոլոր կայանքը եւ մեզ գերութիւն տարին: Աս Սաղէ քաղաքումը մի վաճառականի ստրուկ եղայ, եւ այդ դառը վիճակի մէջ մնացի երկու տարի՝ օրըս ու գիշերըս սուգի եւ արտասունքի մէջ անցնելով, եւ ոչ մի հընար չ'էի գըտնում այս սարսափելի դրութիւնից ազատուելու: Մէկ օր պարոնըս ուղարկեց ինձ ձուկ որսալու, որ պէտք է սլատրաստէի նորա ճաշի համար: Այս դիպուածը խիստ յարմար էր իմ ցանկութեանըս, որ ես վաղուց սպասում էի: Հուսով պատրաստեցի մի նաւակ, դրի նորա մէջ բաւականին ուտելու պաշար, նըստայ մէջը, եւ յաջողակ քամիով քիչ ժամանակումը երկար տարածութիւն անցայ եւ ավր կորցրի աչքէս:

Բայց այստեղ-էլ կեանքըս միանգամայն ասպահովուած չ'էր, սլատճառ-որ չ'գիտէի՝ ո՞ր


կողմը պէտք է ուղղել նաւակըս այս լայնատարած
ծովի մէջ : Յանկարծ տեսայ մի Պօրտուգալի
նաւ, որի նաւապետը կարծելով ինձ ալեկոծ-
եալ նաւից ազատուած՝ խրղճաց վերաս, կանգ-
նեցրուց նաւի ընթացքը ու սպասեց իմ հաս-
նելուն : Այս ազնուաբարոյ նաւապետը մար-
դասիրաբար եւ վեհանձնութեամբ ընդունեց
ինձ իւր նաւը բոլոր կայանքովս, տարաւ իւր
հետ Բրազիլիա, ուր-որ ինքն էր գընում,
ձամբուս ծախսը անգամ չ'յօժարեցաւ ինձանից
առնելու. բայ՛ի դորանից՝ գընեց ինձանից իմ
նաւակը : Նորանից ստացած փողով ես գնեցի
հողագործութեան համար հարկաւոր գործիներ
եւ զբաղեցայ տընկարկութիւնով : Չեռնարկու-
թիւնըս քանի գընաց յառաջացաւ, եւ նորանից
ստացած արդիւնքըս մի քանի տարիից բաւական
նշանաւոր գումարի հասնում էր :

Ասլուածքներէս ստացած բերքը ըստ մե-
ծի մասին ծախում էի Անգլիացի վաճառա-
կաններուն, որոնք յօժարութեամբ գընում էին
ինձանից իրանց առուտուրի համար :

Աթէ այսպէս մընայի՝ հաւանական է որ
միանգամայն կ'ապահովուցնէի ապագաս եւ խա-
ղաղ կեանք կ'անցնէի. բայց իմ թափառական

կեանք վարելու կիրքը նորից սկսեց շարժել եւ
ամենեւին հանգրստութիւն չ'էր տալի ինձ.
Ոչ բարեկամներու բարի խրատը, ոչ առող-
ջամրտութիւնըս եւ ոչ անցած տարաբախտու-
թիւններըս կարող էին դէմ կենալ այս մուլեկան
ցանկութեանըս:

Նորից նըստայ նաւ, որ երթամ Ափրիկա
եւ այնտեղ գընեմ իմ տընկարկութեան համար
սեւ ստրուկներ: Ինչպէս շատերը հաւատաց-
նում էին՝ այս ճանապարհորդութիւնը խիստ
արժան պիտի նըստէր ինձ եւ մեծ արդիւնքներ
պիտի բերէր:



Գ Լ Ո Ի Խ 2.

=

Ղանապար ընկանք 1659 թուին Սեպտեմբերի 1ին, եր նոյն իսկ օրը, երբ-որ ութը տարի առաջ փախել էի ծընօղացրս տընից՝ արհամարհելով նոցա բարի խրատը եւ խորհուրդը: Հաղիւ թէ տասը օր տեւեց մեր նաւարկութիւնը՝ մին-էլ տեսնես մի սարսափելի փոթորիկ բարձրացաւ ծովի վերայ, որ անդադար եւ սոսկալի կերպով փչելով՝ միանգամայն հանեց մեզ ուղիղ ձանապարից: Բոլոր այդ ժամանակը մեր նաւը կատաղած ալիքներու կամքով առանց նրպատակի առաջ ու յետ էր գընում: Այնքապէս-որ փոթորիկը փոքր ինչ

498-60

857 498

Հանդարտեցաւ՝ հնար չի գըտնելով Ափրիկաի
ափը հասնելու՝ նաւը ուղղեցինք դէպ'ի Ռար-
բարիա: Տարաբախտաբար նորից փչեցին պինդ
պինդ քամիներ եւ նաւը անհնարին ուժգնու-
թեամբ տարին արեւելք: Այդ ժամանակ մեր
երկիւղը եւ սարսափանքը սահմանից վեր ան-
ցան. ինչու-որ՝ եթէ նաւը խորտակուէր՝ ամէ-
նըս պիտի կորչէինք Ովկիանոսի անդունդների
մէջ. եթէ հասնէինք մի կըղզի՝ նորա խուժա-
դուժ մարդակեր բնակիչներին զոհ պիտի լի-
նէինք. այս երկու դիպուածն-էլ մեզ համար
վտանգաւոր եւ կորըստական էր: Ռայց քիչ-որ
անցաւ՝ յանկարծ մեր նաւը սաստիկութեամբ
լսփուեցաւ մի ժայռի եւ անշարժ մընաց տե-
ղումը. փրփրած ալիքները կատաղաբար սկսե-
ցին նորա մէջ մըտնել: Մեր դրուժիւնը ան-
մեկնելի դառն էր. նաեւ չ'գիտէինք թէ ո՞ր երկ-
րումն ենք, արդեօք այնտեղ կա՞ն մարդիկ, թէ
ոչ: Նախ համար խօսելն անգամ աւելորդ
էր, պատճառ-որ՝ սովն ըսպէ սպասում էինք որ
կ'փլչի ու կ'խորտակի: Ռայց եւ այնպէս ուժե-
րըս մի անելով, մին մինի քաջալերելով՝ թողինք
նաւը, նըստանք նաւակի մէջ եւ ապաւինե-
ցանք Աստուծոյ սուրբ կամացը: Աւր պիտի

Հասնէինք, որոնց ձեռք պիտի ընկնէինք, ինչպէս պիտի ձարէինք այնուհետեւ մեր ապրուստը — այս ամէնը մեզ միանգամայն անյայտ էր. ամէն բոսէ սոսկալի մահը աչքերիս առաջ ունէինք. եւ այս փորձը, որ վերջի անգամ փորձեցինք մեզ ազատելու՝ խիստ երկբայելի էր. բայց ասած է որ՝ մահը ամէն տարաբախտութիւններից-էլ վատթարն է, մանաւանդ ինձ պէս անխրատ երիտասարդին խիստ սոսկալի էր նորա մօտենալը: Մեր նաւակը խաղալիկ էր դարձել կատաղած ալիքներուն, մէկ բարձրանում էր նա մինչի ամպերը, մէկ խորասուզում էր մինչի անդունդը, որ փորվում էր մեր առաջ: Քէ եւ ավիը տեսնում էինք, բայց նորա մօտենալ անհնարին էր: Արք-որ մենք այսպէս երկար կրուվում էինք ծովի եւ քամիներու հետ եւ աշխատում էինք դէպի ցամաք հասնել՝ յանկարծ մի լեռնաձեւ ալիք կատաղաբար վազեց նաւակի վերայ եւ շուռ-տուեց նորան, ու մէջի իլած-է՛իլածը բոլորը ընկղմեցուց ծովի յատակը. հաղիւ թէ ժամանակ ունեցանք Աստուծոյ անունը կարգալու:

Մի խօսք է՛ եմ գրտնում, որ կարողանար բացայայտել մըտացս շիտթը եւ այլայլութիւնը,

երբ-որ ինքքս ինձի զգացի ծովի մէջ: Թէ եւ
ես լաւ լող-տալ գիտէի, բայց տատանած ջու-
րը չ'էր թողնում ինձ արձակ շունչ-առնելու,
այնպէս որ՝ մէկ ոտքըս կեանքի մէջ էր, միւսը՝
մահի: Յանկարծ մի ահագին ալիք առաւ ինձ
իւր մէջ, տարաւ մին չեւ ափը, ու կիսամեռ ձրգեց
քարերու եւ աւաղներու վրայ: Թէ եւ մին չեւ
վերջի աստիճանը թուլացած էի մարմնով, բայց
հոգուս ներկայութիւնը պահել էի. որքան զօ-
րութիւնըս հասաւ՝ շտապեցի ոտքի վրայ կան-
գնել ու ցամաք գետնին հասնել, որ ալիքը
նորից չի թափուին վրաս. բայց երկու անգամ
էլ ջանքքս ունայն եղան. փրփրած ալիքը ինձ
արգելում էին ոտքի վերայ հաստատ կանգնե-
լու. երրորդ անգամին բոլոր ոյժըս մի արի, որ
ազատուիմ այս յարածուփ ջրէն, մին-էլ տեսնես
մի ահագին ալիք առաջ մղեց ինձ եւ չարաչար
խփեց սալառափին: Եամանակ չի կորցրի, ինչ
պէս եւ իցէ ոտըս դրի նորա վրայ. այլ եւս
երկիւղ չ'ունէի ջրի մէջ խեղդուելու. հոգւով
եւ մարմնով վաստակած ընկայ դալար խոտի
վրայ:



Նկար՝ Յ. Պատկանեան.

Նաւարեկութիւն.

Գ Լ Ո Ի Խ 3.

=


Դժուար է եւ գրեթէ անհնարին է նկարագրել հոգևոյս հիացումը, երբ-որ ինքրս ինձի տեսայ ազատուած վերահաս եւ անփախուստ մահից: Չեռներրս դէպ'ի երկինք կարկառած ման էի գալի ծովի ափին եւ խորհում էի բարեգութ Մախսանամութեանը վրայ, որ իմ բոլոր ընկերներուս մէջից միայն ինձ արժանի տեսաւ ազատելու: Մայում էի փրփրած եւ զայրացած ծովի վրայ եւ չ'էի հաւատում ինքրս ինձի, որ կարողացայ ազատուել նորանից եւ ցամաք հասնել: Բայց որ փոքր ինչ աւել սկսեցի մըտածել՝ տեսայ որ ազատութիւնըս մի

տարօրինակ պատիժ էր ինձ համար : Քէ վրայիս հագուստը եւ թէ մարմինըս միանգամայն թաց էին, բայց ես ուրիշ շոր չ'ունէի, որ կարողանայի փոխելու . քաղցածութիւնըս չարաչար տանջում էր ինձ , ու ես չ'զիտէի այս ամայի տեղումը ո՛րտեղաց ճարեմ՝ ու տեղու բան . ծարաւ էի եւ հնար չ'էի տեսնում զովացնել սրապակած բերանըս . թուլացած էի, բայց ինչո՛վ կազդուրուեմ՝ չ'զիտէի : Առաջիս տեսնում էի մի սարսափելի մահ երկու քրտորմնելի կերտով , այսինքն՝ կամ սովատանջ մեռնել, կամ վայրենի դազաններուն զոհ լինել : Օ՛հնք չ'ունէի , որ տարաբախտ դիպուածին կարողանայի ինքըս ինձի սրաշտպանելու, կամ սովից ազատուելու համար՝ կենդանի սպանելու եւ ուտելու . բոլոր ունեցած-չունեցածըս մի դանակ , մի ծխաքարչ եւ փոքր ինչ ծխաստոս էին :

Գիշերը մօտենում էր ու սրտիս նեղութիւնը քանի գընում էր սաստկանում էր : Ինչ պիտի լինի իմ վերջը , ասում էի սրտէս ծանր ա՛խ քաշելով եւ խելագարի նրման դէս ու դէն վազվզելով . վա՛յ ինձ , եթէ այս ամայի երկրի մէջ կենում եմ գիշատիչ գազաններ, որոնք

ամէն գիշեր որսի ելլելով՝ անշուշտ ինձ կը-
ծըւոտեն ու կըլափեն :

Ուրիշ հընար չ'էի տեսնում ազատութեան
բայց եթէ ելլել մի ծառի վրայ ու նորա ճու-
ղերու եւ տերեւներու մէջ ապաստան եւ իջե-
լան գըտնել : Քիչ ժամանակից յետ գըտայ
աղբիւր , ախորժակով խըմեցի նորա քաղցր
ջրից . սովըս հանդարտեցնելու համար՝ բերանըս
առի փոքր ինչ ծխախոտ , սկսեցի ծամել ու
թուրքս կուլ-տալ : Աղբիւրի մօտ կար մի մեծ
ծառ , որ խիստ յարմար էր ինձ նորա վրայ գի-
շերըս անցնելու . ելլայ վրան . ամէն հնարը գործ
ածեցի , որ վրայից ցած չի գլորուիմ ու այդ-
պէս խոր քունի մէջ ընկղմեցայ :



Փ Լ Ո Ի Խ 4.

=

Միւս օր որ զարթեցայ՝ լոյսը բացուել էր. հանգիստ քունը կաղզուրել էր հոգնած մարմինըս. օրը սպայծառ էր եւ ծովը միանգամայն հանդարտած:

Օարմացած մընացի տեղումըս, երբ-որ տեսայ նաւը մօտեցած այն ժայռին, որի վրայ ինձ ձրգել էին արէքը. բայց աւելի զարմանալուն այն էր, որ փոթորիկը իսպառ խորտակած չէր նորան, ինչպէս-որ կարելի էր կարծել: Խիստ ցանկանում էի ինչպէս եւ իցէ հնարքով ելլել նորա վրայ եւ ազատել մէջից մի քանի առարկաներ, որոնք ինձ համար խիստ հարկաւոր եւ

օգտաւէտ էին այս անբընակ եւ ամայի երկրումը :

Չորս կողմըս որ մըտիկ-արի՝ երկու մղոն հեռի ինձանից տեսայ նաւակը, որի վրայ երեկ ընկերներուս հետ միասին միտք ունէինք աղատուելու. բայց այդ նաւակը ինձ էլ պէտք չ'էր գալի. իմ բոլոր ուշկը դարձած էր դէպ'ի նաւը, որից կախած էր իմ ապագան եւ կարելի է ասել՝ կեանքը:

Յետ կէսօրէին, երբ-որ ծովը խիստ հանդարտ էր՝ լողալով մօտեցայ նաւին մինչեւ քառորդ մղոն. դառնութեամբ նկատեցի որ՝ եթէ մնացել էինք նորա մէջ՝ անշուշտ փրկուած պիտի լինէինք, յաջողութեամբ, ողջ եւ առողջ ցամաք պիտի հասնէինք. բայց եւ այնպէս երկու աչքերիցըս աղբիւրի պէս առատ ցօղաց արտասունքը, երբ-որ միտքըս բերի նոցա տարաբախտ վիճակը. յետ դարձայ :

Օրը անասելի տաք էր. հանեցի հագիս շորերը ու նորից ընկայ ջուրը: Արբոր հասայ նաւի ստորոտը՝ կարծեցի որ անհնարին է նորա վրայ բարձրանալ: Բայց յետոյ տեսայ նաւի առաջակողմից մի պարան կախ-ընկած. բըռնեցի նորա ծայրը եւ փաթաթուելով բարձրացայ մին-

չեւ տախտակամածը: Մաւը կէսուակէս ճեղքուած էր, ներքին յարկը լիքն էր ջրով, բայց վերի դըստիկոնին ջուրը չ'էր հասել, եւ ինչ որ կար վրան՝ բոլորը չոր ու անփսաս մընացել էր: Մախ եւ առաջ սկսեցի ամէն տեղ ման-գալ եւ զննել՝ ինչ փնասուել է եւ ինչ անփսաս է մնացել. յետոյ գըրպաններըս լցրի սպարսիմատով եւ սկսեցի երկու սարտաւորութիւն կատարել, առաջինը՝ փորըս կշտացնել (որովհետեւ խիստ սոված էի) եւ երկրորդը՝ հարկաւոր առարկաները աչքէ անցնել: Հատուտելեղէններու եւ խրմիչքներու մէջ գըտայ նա եւ շաքարօղի. նորանից խըմեցի մի ամբողջ բաժակ, որ գօրացուց վաստակած անդամներըս:

Արօտութիւնը ստիպեց ինձ պէսպէս հնարագիտութիւններ ցոյց-տալ եւ գիւտեր անել: Տախտակամածի վերայ տեսայ շատ առագաստակալներ, մէկ թէ երկու կայմ՝ եւ քանի հատուրիշ մեծ գերաններ. այդ ամէնը կանխագոյն չուաններով մին մինի հետ կապեցի, որ իրարմէ չի բաժանուին, եւ յետոյ ջուրը ձրգեցի: Այս ամէնը կատարելից յետ ինքըս-էլ ընկայ ջուրը, դէպ' ինձ քաշեցի գերանները. ծայրերը

պընդացնելով՝ նոցա լաստի ձեւ տուի . այդ քառանկիւնի շրջանակի վերայ տախտակներ գամեցի այնպէս որ՝ վրան կարելի լինէր հարկաւոր առարկաները դընելու եւ անվնաս ցամաք հասցնելու : Արբ-որ լաստը միանգամայն պատրաստեցի՝ սկսեցի մըտմըտալ՝ արդեօք ի՞նչ առարկաներ ամէնից առաջ պիտի ազատուի եւ ի՞նչ է ինձ ամէնից աւել հարկաւորը . եւ այս եզրակացութեանը եկայ որ՝ ժողովեմ նաւի վրայ դըտնուած ամէն տախտակները եւ դընեմ նոցա լաստի վրայ , որ եւ այդպէս կատարեցի : Յետոյ երեք հատ արկղ (սընդուկ) առի եւ նմանապէս չուաններով իջուցի լաստի վրայ . նոցա մէջ դրի ինչ-ասես կերակրեղէն՝ հաց , բրինձ , ցորեն , պանիր , ապուխտ , եւ : Բաց ՚ի դոցանից նա եւ շատ շիշեր դանաղան օղիներով . այս ամէնը զգուշութեամբ դարսեցի լաստի վերայ :

Արբ-որ ես այսպէս դառնա՞ծ էի՝ ծովի խաղացքը սկսեցաւ . աչքըս ձրգեցի ափը եւ ի՞նչ տեսնեմ , — շորերըս ծովի մէջ ցրուած լող էին տալի . վրաս մնաց միայն բաձկոնակըս եւ շապիկըս : Այդ կորուստը մասամբ վարձատրեցի նաւի մէջ . բայց չ'էի համարձա-

կում հետըս շատ բան առնել, որ չի ծանրաբեռնեմ լաստը . հետըս միայն այն բաները առի, որ ինձ կարեւոր էին: Հատ պըտրտելից յետ վերջապէս գըտայ ատաղձագործի գործիներ, որ ինձ համար սնդին դանձ էր, աշխարիս ամէն հարըստութեան հետ չ'էի փոխիլ այն: Նըմանապէս ինձ խիստ հարկաւոր էին պէսպէս զէնքեր: Նաւապետի սենեակումը գըտայ երկու հատ հրացան, քանի հատ վառօդաման, մի փոքրիկ պարկ արձձի գընդակներով ու երկու հատ ժանգոտած թուր: Ծակուծուկերը պըտրտելիս՝ գըտայ երկու փոքրիկ տակառ վառօդ, որ զէնքերու հետ միասին նըմանապէս դրի լաստի վըսյ:



Գ Լ Ո Ւ Խ 5.


xx

Առաջի անգամի համար կարծեցի որ՝
բաւականին բան ժողովեցի. այժմ՝ ինձ մընում
էր միայն ինչպէս եւ իցէ հնարքով այս ամէնը
ցամաք հասցնել. տարաբախտաբար ոչ թիակ-
ներ ունէի, ոչ առագաստ եւ ոչ զեկ. ամե-
նաթեթեւ քամին կարող էր շուռ-տալ լաստըս
վրայի բոլոր առարկաներովը, կամ ծըռել
ճամբաս. բայց ինձ երեք բան քաջալերում էին,
մի որ՝ ծովը հանդարտ էր, երկրորդ՝ խաղացքը
դէպ'ի ափըն էր քրշում ալիքըն, երրորդ՝ մի
թեթեւ քամի փչում էր դէպ'ի ցամաք: Նա-
ւի մէջ գըտոյ երեք հատ կիսաբեկ թիակ,

երկու խարտոց, մի ուրազ, որ նմանապէս դրի
լաստի վերայ : Այս ամէնը կատարելից յետ
սկըսեցի դէպ'ի ամի ուղղել ընթացքըս : Այի
մըղոնի չամի լաստըս զարմանալի յաջողութեամբ
առաջ էր գընում. մին-էլ տեսնեմ՝ փոքր ինչ խո-
տորեցաւ ուղիղ ճամբից, եւ ես հասայ ցամաք
փոքր ինչ հեռու այն տեղից ուրտեղից-որ մըտել
էի ծով : Այս հանգամանքը ինձ կարծիք տուեց
որ՝ ծովի մէջ մի հոսող ջուր պիտի լինի. այդ
պատճառաւ յոյս ունեցայ գըտնել մի խորշ կամ
գետ, որ կարող էր ինչպէս նաւահանգիստ
ծառայել ինձ համար :

Եւ յիրաւի-որ գըտայ մի գետաբերան,
դէպ'ի ուր հոսող ջուրը տանում էր իմ
լաստը : Որքան ոյժըս հասնում էր՝ ես աշխա-
տում էի չի խոտորուել այդ ընթացքէն. բայց
որ այդ տեղերը ինձ միանգամայն անձանօթ
էին՝ քիչ մընաց-որ երկրորդ նաւաբեկութեան
չի սլատահեցայ : Լաստի մի ծայրը խրուե-
ցաւ աւազի մէջ, իսկ միւսը անդադար տա-
տանում էր ջրի վրայ . եթէ ես չի շտապէի
հաւասարակշռութիւն պահել ոտով պինդ կո-
խելով լաստի թեթեւ կողմը՝ նորա վրայի
բոլոր բեռը եւ ես անտարակոյս ջուրը պիտի

գլորուէինք: Այս դրութեամբ մնացի մօտ
կէս ժամ, մինչեւ-որ ծովի խաղացքը ա-
մէն կողմից բարձրացուց լաստը: Չուրը բար-
ձրանալով բարձրանալով՝ մղեց լաստըս մէնչեւ
մի փոքրիկ գետի բերան: Այնտեղումը սպա-
սեցի մինչեւ-որ ջուրը վերջին աստիճան բար-
ձրացաւ, ես մի եւ նոյն ժամանակը թիակով
կանգնեցրի նորա ընթացքը մի տափակ հողի
մօտ, որ ջուրը շուտ պիտի ծածկէր: Այս
հնարագիտութիւնըս յաջողեցաւ. երբ-որ նկա-
տեցի, որ լաստը բաւական ջուր ունի տակը՝
քաշեցի դէպի տափակ գետինը եւ կազնեցրի
նորա վրայ: Արկու կողմից թիակներ խրեցի
գետնի վերայ այնպէս, որ լաստը անշարժ մընաց
տեղումը: Յետոյ որ ծովի խաղացքը իջաւ՝
բոլոր բեռըս առանց վնասի մնաց ցամաք հողի
վրայ:



Գ Լ Ո Ւ Խ 6.

=

Դորանից յետ սկսեցի երկրի ամէն կողմերը ման-դալ ու սլաքերէլ մի ապահով տեղ, ուր-որ կարելի էր դարսել հաւաքած առարկաներըս եւ մի եւ նոյն ժամանակ ինձ ապաստան գըտնել. այդ վախճանին առի հետըս մի հրացան, մի ատրճանակ, մի վառօդաման եւ մի փոքր քսակ արձձէ գընդակներով ու ընկայ ճանասար:


Երբ-որ հասայ մի գահալէժ սարի գագաթ՝ դառնութեամբ նըկատեցի որ՝ ես կղզի մէջ եմ. որքան աչքըս զօրում էր՝ ուրիշ բան չ'էի տեսնում, բայց եթէ մի քանի ապառաժներ

եւ երկու փոքրիկ կղզի երեք մղոն հեռի իմից՝
դէսլի արեւմուտք:

Այնուհետեւ տեղեակ իմացայ որ՝ ես բո-
լորովին բաժանուած եմ մարդկային ընկերու-
թիւնից, պատճառ-որ՝ իմ կղզին ըստ երեւու-
թիւն անբնակ էր, դոնէ գիշատիչ գաղաններ
րից աւել ուրիշ բնակիչ չի պիտի ունենար :
Բայց առ մեծի ուրախութեանըս առաջի օրերը
գաղաններ անգամ չ'տեսի. բայց նոցա փո-
խարէն անթիւ անհամար թրուչուններ կային
մէջը, որոնք ըստ մեծի մասին ինձ անձանօթ
էին : Փորձի համար հրացանըս քաշեցի մի
մեծ թրուչունի վերայ, որ թառած նըստել
էր մի ծառի ճուղի վրայ . շատ կարելի է որ՝
աշխարհս ստեղծմանէն 'ի վեր այս տեղումը
առաջի անգամ լսուեցաւ հրացանի թրնդու-
մը . մին-էլ տեսնես՝ հազար ու բիւր զանազան
ձայներ եւ ճղոցներ լսուեցան ամէն կողմից
զարհուրած թրուչուններից. իմ սպանած թրու-
չունը շահէնի մի աղգն էր, միսը ուտելու պէտք
չ'էր գալի :

Յետ դարձայ դէսլի իմ լաստը ու բոլոր
մնացած ժամանակը պարապեցայ դուրս - հա-

ներով նորա մէջից նաւից հանած առարկաները : Գիշերուադէմին երեկուայ նեղութիւնըս նորոգուեցաւ . բայց սյս անգամին ես միանգամայն անճարացած չ'էի . արկղները մին մինի մօտ շարելով՝ ինչպէս եւ իցէ մի խրցիկ շինեցի ու նորա մէջ հանգիստ անցրի գիշերըս :



Գ Լ Ո Խ Խ 7.

=

Միւս օր միտըս դրի նորից ճամբայ ընկ-
նել դէպ'ի նաւ . յոյս ունէի ազատել նորա մէ-
ջից էլի շատ բաներ . սէտք է'եր ժամանակ
կորցնել, պատճառ-որ՝ հէնց առաջի ալէկոծու-
թիւնը իսպառ սլիտի խորտակէր նորա, եւ մէջի
բաները բոլորը ծովը ձրգէր: Այժմ աւել
փորձառած՝ լաստը առաջուանից թեթեւ պատ-
րաստեցի ու շատ չի ծանրաբեռնեցի: Այս
անգամ նաւի մէջից առի երեք պարկ դամ ու
մախաթ, մի մեծ շաղափ, տասը - տասներկու
հատ կացին, մի հատ յեսան, երեք հատ եր-
կաթէ լծակ, երեք հատ պատրուգաւոր հրացան.

եւ մի հատ որսի հրացան . փոքր ինչ վառօդ,
երկու պարկ գընդակ, շատ հազըստեղէն, մի
կախուն մահճակալ, մի անկողին , մի քանի
հատ վերմակ : Այս ամէնը յաջողութեամբ
ցամաք հասցրի :

Ինչ-որ թողել էի գնալու ժամանակ՝ ամ-
մէնն-էլ անփնաս մնացել էր . ոչ մարդու եւ ոչ
գազանի յարձակման նշան չ'էր երեւում . միայն
մի մեծ վայրի կատու տեսայ արկղներուս վրայ
պառկած, որ ինձ տեսներով ամենեւին չի վա-
խեցաւ եւ չի փախաւ , ընդհակառակն՝ երբ-որ
տուի նորա պարսխմատ՝ առաւ ու կերաւ, եւ
փոքր ինչ ժամանակից յետ հեռացաւ :

Ամնաց կամաց՝ նաւի առագաստներից եւ
յատկաբար դորա համար իմ ձեռքով կըտրած
եւ տաշած ցիցերից սկսեցի մի վրան շինել,
եւ երբ-որ պատրաստեցի պըրծայ՝ բերի դար-
սեցի նորա մէջ սյն ամէն առարկաները, որոնք
անձրեւից կամ արեգակից կարող էին փաստուել .
այդ վրանի չորս կողմը դրի արկղներ եւ տա-
կառներ, որոնք սէտք եղած ժամանակը ինձ կա-
րող էին ծառայել ինչպէս պարիսպ : Դուռը
ամրափակեցի տախտակներով եւ արկղով : Ա-
ռաջի անգամ պառկեցայ անկողնի վրայ՝ կան-

խաղոյն մօտիս հրացան դրած եւ բարձիս տակ ատրճանակ, ամբողջ դիշերը հանդիստ քրնեցի :

Հտեմարանբըս, ինչպէս տեսնում էի, մի մարդու համար խիստ բաւական, եւ կարելի է ասել՝ չափազանց մեծ եւ հարուստ էր. բայց այդքանը ինձ բաւական չ'էր, — ես ուզում էի նաւից հանել այն առարկաները, ինչ-որ կարելի էր աղատել: Այդպէս ամէն օր մի մի անգամ գնում էի դէպ'ի նաւ: Բերած առարկաներըս ըստ մեծի մասին դռքա էին՝ նաւի սրահաններ, հաստ կամ բարակ չուաններ, կրտսւ, և: Այս աւարներէս մէջ ամէնից աւել ինձ ուրախացուցին մի մեծ տակառ սպաքսիմատը, երեք տակառիկ շաքարօղին, մի արկղ շաքարի աւազը եւ մի մեծ սարկ ալիւրը: Տակառով սպաքսիմատը որքան կարելի էր շուտ դատարկեցի, բաժանեցի քանի մի մասն ու փաթաթեցի զանազան լաթերու մէջ: Այս անգամ-էլ առաջուայ պէս յաջողութեամբ հասցրի ցամաք:

Վերջի ճանապարհորդութիւնբս ձախողակ էր. գրէթէ բոլոր բեռը ջրի մէջ կորաւ. բայց այդ կորուստը ինձ ցաւալի չի թուեց, սատաճառ-որ՝ բաց 'ի հաստ սրահաններից եւ երկաթ-

ներից աւել ուրիշ բան չի կար նորա վերայ :

Տասնը երեք օրուայ մէջ տասնը մի ճանապարհորդութիւն կատարեցի դէպ'ի նաւը, եւ եթէ ծովը առաջուայ սէս խաղաղ մընար՝ անտարակոյս բոլոր նաւը մէջի եղած-չեղածով կըտոր կըտոր կըբերէի ցամաք : Արբ-որ տասնըերկու երորդ ճանապարհորդութեան էի պատրճատվում՝ օրը սաստիկ փոթորիկ էր դուշակում, բայց ես կարծելով-որ ժամանակին ողջ առողջ յետ կըդառնամ՝ ընկայ ճանասար : Այս անգամ նաւի մէջ գըտայ մի սահարան, որի գըրոյների մէջ կային երկու մըկրատ, տասը—տասներկու դանակ եւ պատառաքաղ . երեսուն վեց ստէրլին կէսը ոսկի, կէսը արծաթ ու մի քանի ուրիշ դրամներ . բայց այդ փողերը աչքումըս ամենեւին գին չ'ունէին, հազարաւոր անգամ գերադաս կըհամարէի, եթէ նոցա տեղ հարկաւոր գործիներ ձեռք-բերէի :

Հաղիւ թէ մըտադիր էի նըստել լաստի վերայ ու ցամաք երթալ՝ մին-էլ տեսնեմ պինդ քամին սկսեց փչելու ու եղանակը միանգամայն փոխուեցաւ . փրկութեան ուրիշ հնար չ'էր մընում ինձ, բայց եթէ շուտով թողնել

նաւը մէջի եղած-չեղածով նա եւ լաստըս, ու
լող-տալով ցամաք հասնել : Յաջողութեամբ
հասայ տեղըս, մըտայ վրանիս մէջ, ուր տեղ
էր իմ բոլոր կայանքը եւ հարըստութիւնը : Փո-
թորիկը սկսեց ու բոլոր գիշերը տեւեց. միւս
օր նաւի հետքը անգամ չ'էր մընացել ծովի
վերայ : Այդ տարաբախտ դիպուածը ինձ չի
ախտասացուց, սրտոճառ որ նորա մէջի հարկա-
ւոր առարկաները ըստ մեծի մասին ես արդէն
աղատել էի :



Գ Լ Ո Ւ Խ 8.

=

Հիմի ես միտք էի անում՝ ինչպէս պատրաստարուիմ դիշատիչ գազաններից եւ վայրենի մարդակերներից, եթէ նորա յանկարծ իմ վերայ յարձակուին : Այս վախճանին ես միտըս դրի շինել մի ամուր խրճիթ ու նորա չորս կողմը փոս փորել : Բնակութեանըս համար ընտրեցի սըստիկ հովիտ մի բարձր, գահաւէժ եւ անել բլուրի ստորոտը, այնպէս որ՝ ամենեւին երկիւղ չ'ունէի վերի կողմից որպէս եւ իցէ թշնամեաց յարձակմանէ. բնակարանիցըս մինչեւ ծով կապերտի նրման ձրգվում էր դալար հովիտը : Խրճիթըս չի շինած՝ բլուրի առաջ

կէս շրջան քաշեցի, որ իւր մէջ քսան կանգուն տեղ էր սարունակում: այս կէս շրջանը պատեցի երկու կարգ ցիցերով, որ տակաւին չի տընկած՝ ամէն մինի համար իրարմէ վեց մատ հեռի խորը փոսեր փորեցի. յետոյ նոցա մէջը տընկեցի ցիցերը ու նոցա վերի ծայրը սուր տաշեցի: Այս կերպով մեծ դժուարութիւններ վերաս առնելով՝ երկար միջոցումը վերջացուցի աշխատանքս: Պատը այնքան սլինդ եւ սպահով էր, որ այնուհետեւ երկիւղ չ'ունէի ոչ դաղաններու եւ ոչ վայրենի մարդակերներու յարձակմունքէն, պատճառ-որ՝ երկուսների համար-էլ անմատչելի էր: Գուռ չի շինեցի, այլ նորա տեղ դործածում էի չուանէ սանդուղք, որ տուն մըտնելիս ներս էի քաշում: այս վերջի հնարըս միանգամայն սպահովացուց ինձ ամէն անակընկալ եւ ձախողակ արկածքէ:

Ահա այս բերդի մէջ կամաց կամաց տեղաւորեցի բոլոր կայանքըս. եւ որպէս զի չի վնասուին անձրեւից, որ այս երկիրումը տարուայ մի որոշ ժամանակը անդադար գալիս է՝ այդ մասին յատկաբար առաջաստներից շինեցի մի ընդարձակ վրան:

Վրանըս-որ աւարտեցի, սկսեցի մառանի

Համար պատրաստութիւն տեսնել . այդ վախ-
ճանին ապառաժի մէջ փորեցի մի խոր գուր,
եւ այնտեղից դուրս եկած քարերը եւ հողը
ձրգեցի ցցապատիւ մօտ , որով բաւական ամ-
բութիւն ստացաւ բերդըս , եւ մի եւ նոյն ժա-
մանակ ունեցայ խիստ ամուր շտեմարան :

Այլ օր որ այս աշխատանքով զբաղած էի մի
անտանելի սրտնեղութիւն զգացի . յորդ անձրեւ
եկաւ , ամպերը սաստիկ սկսեցին գոռգոռալու :
Այս անցքը ինքը ըստ ինքեան խիստ բնական եւ
սովորական բան էր . բայց իմ սրտնեղութեան
պատճառը այն էր , որ եթէ պատահամք
վառօդըս բռնկէր՝ ինչ պիտի լինէր իմ դրու-
թիւնը : Այս չար պատահարից զարհուրած՝
հաստատ միտըս դրի որ՝ եթէ անձրեւը եւ
որոտմունքը դադարին , ամէն սովորական աշ-
խատանքըս թողնեմ , ու որքան կարելի է
շուտով պատրաստեմ շատ մանր քսակներ
ու նոցա մէջ փոքր փոքր ածեմ վառօդըս , որ
մի եւ նոյն ժամանակ կըսրահսպանուի խոնաւու-
թիւնից եւ բռնկելից . ինչու-որ՝ եթէ մի մա-
սը պատահմունքով բռնկէր , գոնէ միւսը ան-
փնաս կըմընար : Այդ ձեռնարկութիւնը տեսեց
երկու շաբաթ . այդ միջոցին ես պատրաստեցի

մօտ հարիւր հատ մանր քրտակներ եւ նոցա մէջ լցրի հարիւր քսան դրուանքայ վառօդ :

Սովորութիւն արել էի ամէն օր ժուռ-դալ կղզիիս մէջ, մանրամասնաբար զննել նորա բերքը ու ասլրուստիս համար ուտելի կենդանիներ որսալ. այդ զբօսանքի ժամանակ նկատեցի որ՝ կղզիիս մէջ շատ այծեամներ կան, բայց այնպէս վայրենի, այնպէս զգաստ եւ այնպէս արագընթաց, որ հնար չի կար նոցա մօտենալու: Եւ յոյսըս չի կրտրեցի նոցա որսալու ու սկսեցի նոցա բնաւորութիւնը եւ սովորութիւնը զննելու, եւ վերջապէս այս եզրափակութեանը եկայ, այսինքն՝ երբ-որ ես բարձր տեղումն էի եւ նոքա ցած՝ ինձ տեսնելով՝ նոքա փախչում էին. ընդհակառակն՝ երբ-որ նոքա ցած տեղումն էին արածում եւ ես բարձր տեղումը կանգնած՝ այծեամները ինձ չ'էին տեսնում: Այդ կերպով ես հասկացայ որ նոցա աչքերը այնքան ցած են խոնարհած, որ փոքր ինչ բարձր կեցած առարկաները չ'են կարող տեսնել: Այնուհետեւ սկսեցի բարձր տեղերից որսալ եւ ուզածիս չափ սպանում էի նոցա: Բայց եւ այնպէս հազար ու մէկ մըտմըտանքներ չարչարում էին միտքըս, երբ-որ մըտածում էի իմ թշուառ

Ներկայ դրութեանըս եւ ասպագայիս վերայ. ան-
թիւ անհամար հարկաւոր բաներից զըկած էի,
բոլոր աշխարէ հեռացած, մենակ այս ամսյի
եւ խոսկանացած երկրումը. քանի՛ անգամ տըր-
տընջել եմ Նախախնամութեան վերայ, բայց
յիշելով՝ որ միայն ես արժանի եղայ ազատու-
ելու նաւաբեկութիւնից, եւ երբ-որ միտըս բերի
նաւի ափի մօտ գալը, որից ես կարողացածիս
չափ ազատեցի ինձ հարկաւոր առարկաներ,
այսպիսի մըտածմունքները փոքր ինչ մխիթա-
րեցին ինձ:



Գ Լ Ո Ւ Խ 9.


=

Հիմի ես կըդառնամ դէսլիմ միաձեւ եւ միայնակեաց բնակութիւնը, եւ կարգաւ կ'շարունակեմ իմ օտարոտի եւ վշտալի սլատմութիւնը :

Սեպտեմբերի 30 ըն էր, երբ-որ ես ոտըս դրի այս թշուառ երկրին աշնան հաւասարութեան ժամանակ, որ ժամանակ-որ արեգակը ուղղահայեաց գլխիս էր նետում իւր բոցոտ նշոյլները: Տասը-տասներկու օրից սկսեցի անհանգըստանալ՝ արդեօք ինչ սկիտի լինի իմ ճարը, եթէ դրիչս ու թուղթըս պրծնին, ու ես կորցնեմ ժամանակիս հաշիւը եւ չի կարողանամ կիրակին լուր օրից որոշել: Այս վախ-

Ճանինն առի մի մեծ գերան , խաչի ձեւ տուի նորա ու տընկեցի ծովի ափը ուղիղ այն տեղ, ուր-որ ձգել էին ինձ ալիքը . խոշոր տառերով գրեցի նորա վերայ՝ «Այս հասայ այս կողի 1659 ին Սեպտեմբերի 30 թուին» : Այս սիւնի վերայ ամէն օր դանակով մի մի նշան էի անում, եօթը օրից այդ նշանը սովորականից մեծ, իսկ երեսուն օրից առաւել մեծ քանթէ երկրորդը : Այսպէս ճիշդ բըռնում էի ժամանակիս հաշիւը :

Մոռացայ ասելու որ՝ նաւից ազատած առարկաներուս մէջ կային նաեւ կողմնացոյցներ, մաթեմատիկական գործիչներ, նաւարկութեան գրքեր, երեք հատ աստուածաշունչ, երկու հատ կատու եւ մի շուն, որոնք յօժարակամ հետըս ցամաք եկան : Հատ տարիներ շունը հաւատարմութեամբ ծառայեց ինձ եւ ուղեկից էր լինում իմ ամէն քայլափոխին : Ինչ-որ հրամայում էի՝ բերում էր, որսի ամէն հարկաւոր սպամանները գիտէր, միայն մի բանից զուրկ էր, որ եթէ այն եւս ունենար՝ աշխարհս ամենաերջանիկ մարդը ես պիտի լինէի, որ է կենդանի լեզուն կամ խօսքը :



Գ Լ Ո Ի Խ 10.

==

Թէ եւ շտեմարանն թաւական հարուստ էր, բայց եւ այնպէս դեռ եւս շատ բանի կարօտութիւն ունէի. ոչ թիակ ունէի, ոչ բաճ, որ գետինը փորել կամ հողը մի տեղից միւս տեղ տանել կարողանայի. նրմանապէս չ'ունէի ոչ թել, ոչ ասեղ, ոչ գրնդասեղ եւ ոչ կրտաւ. բայց քիչ ժամանակից յետ սուլորեցայ նոցա ուրիշ բանով փոխանակել:

Թէ եւ աշխատանքը խիստ երկարատեւ եւ ձանձրալի էին, բայց ամենեւին չ'էին զարհուրեցնում կամ յուսահատեցնում ինձ: Աթէ սուլորաբար մեղամաղձութիւն գար վրաս, կամ

երբ-որ միտքըս ընկնէր այս դառը վիճակըս՝ այդ ժամանակ սկսում էի քննել նորա լաւ եւ վատ կողմերը, եւ դորանով վերջապէս այն եզրափակութեան էի հասնում որ-աշխարհս երեսին չիկայ այնպիսի թշուառական, որ չի կարողանայ իրա համար մսիթարութիւն գըտնել. այդպէս կամաց կամաց սովորեցայ առանձնութեան եւ ինքըս ինձի հաստատ խօսք տուի ամէն հնարը եւ միջոցը՝ ի դործ դնել իմ դառը վիճակը ամփելու :

Վրանիս մէջ ուր-ասես ցիր ու ցան ընկած էին նաւից դուրս-հանած սաշարները, կարասիքը, գործիները, անօթները, որոնք այնքան տեղ էին բըռնել, որ ինձ համար հազիւ թէ մի խորշ էր մընացել : Աս սկսեցի ամէն կողմից լայնացնել քարայրըս, բաց ՚ի դորանից մի նոր դուռ բացի, որ հաղորդութիւն չ'ունէր բերդի հետ : Արբ-որ քարայրըս ընդարձակուեցաւ՝ նորա մէջ շարեցի սահարաններ, ուր կարգաւ դրի հարկաւոր ամաններըս եւ անօթներըս, իսկ գործիներըս եւ զէնքերըս կախեցի պատի վրայ. այս կերպով քարայրիս մի ընդհանուր շտեմարանի ձեւ տուի, ուր-որ դիւրութեամբ կարողանում էի դընել ինձ ամէն հարկաւոր

առարկաները, — այնքան մեծ էր նորա մէջի կարգը :

Քէ եւ մինչեւ այնօր ոչ մի ձեռարուեստ սովորած չ'էի եւ ոչ մի գործիք չ'էի իմանում գործ ածել, բայց աշխատելով, մըտածելով՝ այն աստիճանին հասայ, որ վերջապէս միայն կացինով եւ քերիչով կարողացայ ինձ համար շատ հարկաւոր առարկաներ շինել: Բայց դժուարութիւնս չափազանց մեծ էր: Օրինակի համար՝ եթէ ուզում էի մի տախտակ տաշել, առաջ ու առաջ մի ծառ պիտի կըտրէի, յետոյ նորա երկու կողմերը տաշէի մինչեւ որ բարականար. այս կերպով մի ամբողջ ծառից ստանում էի մի հատիկ տախտակ, եւ այդ մեծամեծ աշխատանքով եւ անասելի դժուարութիւններով. բայց ես ոչ ժամանակս էի խնայում, ոչ ծառերը: Նախից ստացած տախտակներից շինեցի մի աթոռ եւ մի սեղան :



Գ Լ Ո Ւ Խ 11.

=

Երբ-որ բոլոր կայանքըս եւ բնակարանըս
փոքր ինչ հաւար տեղակ արի ու կարգի ձրգե-
ցի՝ այնուհետեւ սկսեցի նկատմունքներըս, օրա-
կանս կամ օրագիրըս շարունակել:

Օրագիրըս սկսվում էր Սեպտեմբերի
20 ից 1659, այսինքն իմ նաւարեկութեան օրից.
առաջի օրերըս անցան ինչսլէս-որ արդէն սլատ-
մեցի:

Նոյեմբերի 17. սկսեցի քարոյրըս փորել
եւ ընդարձակել. այդ աշխատութեան ժամանակ

երէք առարկայի կարօտութիւն զգացի. մի բաՏի, մի թիակի եւ մի սայլակի. երկաթի լծակս ինչպէս եւ իցէ բըռնեց բաՏի տեղը, թիակի կարօտութիւնը խիստ տանջում էր ինձ: Անտաների մէջ ման-գալու ժամանակ մի կերպ ծառ տեսայ այնքան ամուր եւ կարծր, որ Նրազիլիացիք նորա սնունը երկաթի ծառ են ասում. անմեկնելի դժուարութիւնով կարողացայ կըտրել մի կըտոր, եւ երկար ժամանակ աշխատելով վերջապէս նորան բաՏի ձեւ տուի :

Նոյեմբերի 23. նորից սկսեցի աշխատանքըս, 18 օր շարունակաբար ընդարձակեցի քարայրըս այնպէս որ՝ մի եւ նոյն ժամանակ շտեմարանի, խոհանոցի եւ ճաշարանի տեղ կար նորա մէջ ինձ համար:

Դեկտեմբերի 10. մի օր, երբ-որ քարայրիս կամարը միանգամայն աւարտած էի կարծում՝ նորա մի կողմը փուլ-եկաւ. այս ձախողակ սրտաճարը չափազանց սարսափեցուց ինձ. եթէ տակը մընայի՝ անշուշտ այնտեղ սլտի գըտնէի դերեղմանըս: Անտանելի չարչարանքներ կրեցի մինչեւ-որ կարողացայ այս աւերածը վերանորոգելու. նախ եւ առաջ սէտք էր

փուլ-եկած հողը եւ մանրախիճը դուրս-հանել
քարայրից եւ յետոյ նեցուկներով կամարը ամ-
րացնել :

Դեկտեմբերի 11. երկու սիւն տընկեցի
քարայրի մէջ, որոնք հասնում էին մինչեւ
կամարը, խաչաձեւ տախտակներ դրի ամէն
մինի վերի ծայրին. Երբ-որ սյս յաջողակ հա-
մարեցի կամարը հաստատ պահելու՝ սկսեցի
շարունակաբար մին մինի մօտ սյնալիսի սիւ-
ներ տընկել, որոնք կարգաւ հասնում էին
քարայրի մի ծայրից մինչեւ միւսը եւ բաժանում
էին բնակարանը երկու լայնարձակ մասեր :

Եղանակը պղտորուեցաւ, անձրեւը սկսեց
ողողի պէս դալու, սյնալէս որ չ'էի համարձա-
կում ոտըս տընից դուրս դընել : Այդ միջո-
ցին անխոնջ զբաղած էի ներքին կարգադրու-
թիւնով :

Դեկտեմբերի 17. մի այծեամ սալանեցի
եւ միւսի ոտը ջարդեցի ու պարանը վզին կա-
պած՝ քաշաքաշ տուն տարի. այնտեղ զգու-
շութեամբ կապեցի վիրաւորած ոտը եւ այն-
քան հոգացի վերան, որ միանգամայն բըժշկե-




Նկար՝ Յ. Պատկանեան.

Ռօրինկօճը որսի է գնում:



ցի ցաւած տեղը . եւ այս հոգացողութեանըս
փոխարէն կատարելապէս վարձատրեցայ , երբ-
որ այժեամբ ընդելացաւ տանըս . այս հանգա-
մանքը մի նոր դաղափար ծնցուց իմ մէջ , այս-
ինքն՝ այս վայրենի անասուններէն մի քանի
հատը կենդանւոյն որսալ եւ ընդելացնել , որոնց-
մով ես կարող էի մի օր ապրուստ ձարելու
ինչ ժամանակ-որ պաշարըս պրծնէր :



Գ Լ Ո Ի Խ 12.

=

Յունուար ամսից մինչեւ 14ը Ապրիլի անդադար պարապած էի բերդըս ամրացնելով. թէ եւ շատ անգամ անձրեւները խանդարում էին աշխատանքըս, բայց ես հաստատուն կամքով եւ անխոնջ վաստակով վերջապէս այն ատիճանին հասայ, որ կարողացայ բնակարանըս ամէն կողմանէ ապահովացնել: Այդ միջոցներին ես ամէն օր անտառների մէջ ժուռ-գալիս էի ու գիւտեր էի անում: Այդ զբօսանքների ժամանակ զբոսայ մի կերպ վայրի աղաւնի, որի միսը խիստ քրնքոյշ եւ համեղ էր եւ ինքը թրուչունը խիստ դիւրութեամբ որսւլում էր:

Բայց եւ այնպէս ես դեռ եւս շատ բաներու կարօտութիւն ունէի, զորօրինակ՝ տակառի. այդ թէ եւ ինքրս սկսեցի շինելու, բայց ամենեւին չի կարողացայ, մանաւանդ զըժուարանում էի շրջանակներ շինելու եւ տակառի վրան անցնելու: Երկու-երեք շաբաթուայ աշխատանքս անսլոտուղ կորաւ:


Նրմանապէս ճրագ չ'ունէի, այդ պատճառաւ ինչպէս-որ մութը կոխում էր՝ ես ստիպուած էի երթալ ու նընջել, այսինքն երեկոյան եօթը ժամից միանգամայն անգործ մընալ: Որպէս զի այս անհարթութեանը փոքր մի դարման տանեմ՝ սպանած սյծեամների ճարպը սկսեցի խնայողութեամբ պահել: Այդ ճարպիցը առնում էի ու ձէթի տեղ դընում էի մի ամանի մէջ եւ մի կըտոր բարակ չուան գործ-ածում էի պատրոյզի տեղ. այդ կերպով իմ հնարած կանդեղը գիշերները ինձ տալիս էր լոյս, որ թէ եւ շատ պայծառ չ'էր, բայց ինձ խիստ ուրախացնում էր:

Սէկ օր շտեմարանըս քրքրելիս ձեռքըս ընկաւ փոքր ինչ ցորեն, որ ես նաւից ազատել էի, բայց որ երկար ժամանակ անհոգս մնացել էր մի խորշումը՝ մուկերը կերել էին. մնացորդը

տութի ու թափեցի քարայրի ստորոտը ու այնու-
հետեւ միանգամայն մոռացայ: Այս բանը պա-
տահեցաւ անձրեւային եղանակներից փոքր ինչ
առաջ: Մի քանի ամսից յետ տեսայ մի քանի
հասկ եւ չի ճանաչելով՝ օտար բոյս կարծեցի.
բայց ինչպէս զարմացայ, երբ-որ մի քանի ժա-
մանակից յետ տեսայ նորա վերան տասը-տաս-
ներկու հատ հասուն գեղեցիկ քիտտեր ըստ
ամենայնի այնպէս, ինչպէս-որ Աւրոսառումն է
բրննում: Մինչեւ այն օրը կրօնի վերայ ոչ
մի ծանրակշիռ գաղափար չ'էի ունեցել. իմ
կարծիքով աշխար արարած պատահմունքով
առաջ էր եկել. բայց մի հատիկ ցորենը, որ
առանց, ուշադրութեան թողել էի, եւ որ բու-
սաւ այն հողի մէջ, որ ես նորա աճման հա-
մար անյարմար էի կարծում, մի հատ ցորենը,
ասում եմ, կարողացաւ իմ մըտածողութիւնը
գէպ'ի Աստուած բարձրացնել եւ օրհնել տալ
նորա սուրբ անունը: Կարո՞ղ էր արդեօք զօրել
իմ կարճ խելքը, որ մի քանի ցորենահատը պա-
տահմունքով ասպառածի ստորոտը ձրգած՝ մի օր
պիտի ծլին, կանանչանան, հասունանան ու ինձ
համար կենաց ասպահով պաշար ու հանապա-
զօրդեան կերակուր դառնան: Ո՞վ, եթէ ոչ բա-

րեինամ Աստուած այդպէս պիտի հոգար նոցա
վրայ, պիտի պահպաներ նոցա արեւի կիզիչ
ճառագայթներից եւ վնասակար միջատների
բերնից:

Արբ-որ Յունիս ամսին հասկերը բոլո-
րովին հասունացան, եւ զգուշութեամբ հըն-
ձեցի նոցա ու պահեցի հետեւեալ սերմնացանի
համար, յուսալով որ մի օր նոցանից եւ հաց
կըստանամ: Տասնը երեք հատ բրինձի քիստեր
գըտայ ցորենների մէջ, նոյն հոգացողութեամբ
պահպանեցի նոցա միւս սերմնացանի համար.
պատճառ-որ՝ բրինձը կրկնապատիկ օգտաւէտ
կարող էր լինել ինձ ինչպէս հաց եւ ինչպէս
կերակուր:



Գ Լ Ո Ի Խ 13.

=

Բերդը աւարտելուս միւս օրը քիչ մնաց
որ այսքան ժամանակուայ տաժանական աշխա-
տութիւնըս չի կորցրի՝ կեանքըս-էլ հետը: Այս
անցքը այսպէս սկստահեցաւ, ես մի գործով
զբաղած էի վրանիս յետի կողմը. յանկարծ
տեսնեմ-որ բնակութեանըս կամարից սկսեց
հողը փուլ-գալ ու ցած-թափուիլ. սիւները
ճարճատուժ էին, ես զարհուրած փախայ դէպ՛ի
սկստնէշը: Այս երկրաշարժ էր: Արեք այն-
պիսի ստորերկրեայ հարուածներ եղաւ, որ
ժայռի մի մասը, որ կէս մըղոն ինձանից հե-

ուի էր՝ սաստիկ դժբաղձներով փուլ-եկաւ, ծովը սկսեց սղտորուիլ ու ալէկոծուիլ: Սարսաճ մնացի տեղումըս, երբ-որ տեսնում էի բնակարանըս եւ բոլոր կայանքըս մօտ անփախուստ կորըստեան: Ասիսիցս երկար ժամանակ չ'էի համարձակում տեղիցըս շարժել կամ վրանըս մըտնել, որ նորա տակ չի թաղուիմ: Հատ ժամանակ չ'անցաւ՝ մին-էլ տեսնես երկինքը թուխպ ամպերով ծածկուեցաւ ու մի սարսափելի փոթորիկ սկսեց փչելու, ծովը սպիտակացաւ փրփրած ալիքներից, որոնք ուժգին եւ կատաղաբար խփում էին սեսպցած ափերին. ծառերը արմատներով դուրս-հանուած գետնից՝ ուր-ասես ցիր ու ցան էին լինում: Փոթորիկը երեք ժամ շարունակաբար փչում էր եւ նորա հետ ուղիսի նման տարափ էր դալի: Արջապէս տեսնելով-որ երկար ժամանակ բաց օդի տակ մնալը անհնարին է՝ ստիպուեցայ վրանըս մըտնելու. բայց տարաբախտաբար այնտեղ-էլ շատ ապոհոված չ'էի անձրևից, այնպէս որ ճարըս կըտրած դողդղղալով մըտայ քարայրըս եւ ամէն բոպէ ստասում էի որ շուռ կըգայ գլխիս: Բայց կամաց կամաց հանդըս-տացայ ու փարատեցի երկիւղըս ու մի բաժակ

օղին բոլորովին յետ-դարձուց ոյժըս եւ քաջութիւնըս :

Բոլոր այն գիշերը եւ միւս օրուայ կէս մասը անձրեւը շարունակ դալիս էր ու ինձ ստիպում էր տանը մընալ : Այս դիպուածով ես մի խորհրդածութիւն արի , որ ասպագայիս համար խիստ փրկարար եւ օգտաւէտ էր . որովհետեւ կղզիս երկրաշարժի ենթարկած էր , ուստի գանկացայ մի բաց տեղումը խրճիթ ունենալ , որպէս զի այնուհետեւ երկիւղ չ'ունենամ ոչ սարերի աւերակներու տակ մնալ եւ ոչ ասպառածէ կամարի փլատակների տակ կեանքըս վերջացնել :

Ապրիլի 23 ին առաւօտը կանուխ միտըս դրրի կատարելու այս խորհուրդը . բայց տարաբախտաբար գործիներըս խիստ վնասուած էին . կացիներս եւ ուրագըս միանգամայն գութացել էին կարծր եւ ոստախիտ ծառեր կըտրելով եւ տաշելով : Ես թէ եւ ունէի ճախարակաւոր յեսան , բայց առանց մեքենայի չ'էի իմանում թէ ինչպէս պրտուտ-տամ : Այս դժուարութիւնը ինձ մեծ սրբանեղութիւն պատճառեց : Վերջապէս շինեցի մի անիւ , որ կարողանում էի ոտով

ստուտացնել, այնինչ ձեռներըս ազատ էին մընում, այս մէքենան շինելու համար մի ամբողջ ամիս գործածեցի, եւ այդ քրտնաջան աշխատանքըս յաջողութեամբ վարձատրուեցաւ. այնուհետեւ գործըս հեշտութեամբ յառաջանում էր եւ գործիներըս առհասարակ սուր էին :

Ապրիլի 30. տեսնելով-որ պաքսիմատըս քանի գընում է քիչանում է, ես կանոն դրի ինձ համար օրը մի հատից աւելի չ'ուտել, թէ եւ այդ զրկողութիւնը խիստ զգալի էր ինձ համար:

Մայիսի 1 ին ծովի ափումը գըտայ մի քանի հատ տախտակներ խորտակած նաւից, երկրաշարժը այնքան մօտացրել էր նաւը, որ կարողացայ մի քանի բաներ ազատել նորանից : Այնուհետեւ ես միանգամայն փոխեցի միտքըս նոր բնակարան շինելու : Քառասուն երկու օր շարունակաբար գնում էի այն տեղ, մեծ դժուարութիւններով եւ աշխատանքով այնքան ստաղձ եւ երկաթ ժողովեցի, որ կարող էի մի ամբողջ նաւ շինել, եթէ իմանայի նաւաշինութեան արուեստը : Մանասէս կտոր կտոր հարիւր լիտր կապար ազատեցի :

Յունիսի 16. Տովի մօտ գընալու ժամանակ մի կրիայ գըտայ. այդ կրիան առաջինն էր, որ ես տեսայ կղզիս մէջ: Արբ-որ սպանեցի եւ փորոտիքը բացի՝ նորա մէջ վաթսուն հատ ձու գըտայ: Որովհետեւ շատ ժամանակ այժեամի եւ թըռչունների մսից աւել բան չ'էի կերել՝ այդ սխտճառաւ կրիայի միսը ինձ խիստ համեղ եւ ազնիւ թուեց:



Գ Լ Ո Ի Խ 14.

=

18 եւ 19 Յունիսի ես ամենեւին տունից դուրս-չ'եկայ եւ բոլոր այդ ժամանակը մըրսում էի: Նոյն ամսի 20 ին դիշերը ամենեւին չի կարողացայ քնելու, տենդը եւ դլխացաւը անդադար չարչարում էին ինձ: Սիւս օր հիւանդ ու անճարացած էի այս ամսյի անբնակ երկրումը մարդկային օգնութենէ զրկած, հազար ու մէկ յուսահատ եւ անմխիթար մտածողութիւններ դալիս էին վրաս. սկսեցի աղօթք անել Աստուծոյ առաջ, բայց ինքրս չ'էի հասկանում ասածրս: Այս տրկարութիւնը երեք

որ շարունակ տեւեց: Տիւանդութեանքս չոր-
րորդ օրը գլուխքս հաղարսպատիկ առաւել
սաստիկ սկսեց ցաւել եւ տենդքս եօթը ժամ
անդադար դողացնում էր բոլոր մարմինքս՝ յետոյ
առատ քրտինք եկաւ, որ խիստ թուլացուց
ինձ:

Ամիս 26 ին փոքր ինչ առողջ էի. առի
հրացանքս ու սկսեցի անտառներումը ման-գալ,
որ ուտելու համար մի քանի կենդանի կարո-
ղանամ որսալ: Սպանեցի մի այծեամ, վրայից
կըտրեցի մի քանի կտոր ու խորովեցի: Հաս
ուզում էի մի կտոր-էլ խաշել, որ մսաջուրը
կարողանամ թանի տեղ ուտել, բայց տարա-
բախտաբար կաթսայ չ'ունէի: Միւս օր նորից
սկսեց տենդքս այնպէս որ բոլոր օրը չի կարո-
ղացայ ոտս անկողնից դուրս դնել. ծարաւքս
չարաչար տանջում էր ինձ, բայց այնքան թոյլ
էի, որ չ'էի կարողանում երթալ ջուր առնել:
Այս թշուառ դրութեան մէջ քանի անգամ
կանչեցի՝ «Տէր Աստուած, գթա՛ իմ վրայ, մի՛
թողնիլ ինձ անօգնական:» Արբ-որ փոքր ինչ
ժամանակ անցաւ՝ քուն մըտայ ու քընիս մէջ
սարսափելի երազներ տեսայ. ինձ երեւում էր
իրբ թէ առաջիս կանգնած է մի անձոռնի հա-

սակով մարդ բոցոտ եւ ծխոտ ամպի մէջ. նորա կոխած տեղը դետինը շարժ էր գալի. ձեռին մի տէգ բրոնած՝ մօտենում էր ինձ ու ասում էր այս խօսքերը՝ «Որովհետեւ այսքան նշաններ եւ հրաշներ տեսնելով դարձի չ'եկար՝ այժմ դու պիտի կորչիս.» ու իսկոյն բարձրացուց տէգը, որ ինձ սպանէ: Այս տեսիլը խորին ահ եւ սարսափ ձգեց սրտիս մէջ, եւ նորա տըպաւորութիւնը չի փարստեցաւ ինձանից նա եւ այն ժամանակ, երբ-որ լոյսը ծագեցաւ: Աւա՛ղ, բարի խրատները, որ մանկութեանըս ժամանակ ստացել էի՝ միանգամայն բանի տեղ չ'էի դրել. չար ու բարի անխտիր մի կերպ էին ինձ համար. մոլութեանըս սկիզբը եղաւ ծնօղներուս կամքէն հեռանալը, եւ այն թշուառութիւնները, որ այնուհետեւ գալիս էին իմ վրայ՝ ես ամենեւին Աստուծոյ արժանահաս պատիժը չ'էի համարում իմ վրայ ուղարկած. նա եւ մի անգամ գոհ չ'եղայ այն միսիթարութեանց համար, որ նա շատ անգամ տալիս էր ինձ: Բայց երբ-որ մահը աչքիս առաջին տեսայ՝ խղճմտանքս զարթեցաւ, հոգիս չարաչար տանջվում էր նորա խայթից. այն օր առաջի անգամ ջերմեռանդութեամբ աղօթք արի Աս-

տուճոյ, խընդրեցի նորանից, որ ինձ օգնու-
թիւն հասցնէ :

28 ին տընքտընքալով վեր-կացայ տեղիցըս
եւ էգուցուայ համար ուտելու ու խրմելու բան
պատրաստեցի, պատճառ - որ տենդըս օրամէջ
հասնում էր վրաս : Մի մեծ շիշ լցրի ջրով,
նորա հետ փոքր ինչ շաքարօղի խառնեցի ու
դրի կողքս. երեք հատ կրիայի ձու կերայ եւ
յետոյ փորձեցի փոքր ինչ առաջ ու յետ ման
գալու. բայց որովհետեւ խիստ թուլացած էր
մարմինըս՝ չի կարողացայ շատ հեռու գընա-
լու. նրասոյ գետնի վրայ, տխուր տրտում
սկսեցի ծովի վրայ նայելու. փոքր ինչ ժամա-
նակից յետ տուն դարձայ. ու երբ-որ ահ ու
դողով սպասում էի տենդիս յետ գալուն՝
յանկարծ միտս եկաւ որ Ռրազիլիացիք բոլոր
իրանց ցաւերը ձխախտտով են բըժշկում : Մը-
տիս գալիս էր որ՝ արկղներիցըս մինի մէջ պի-
տի փոքր ինչ ձխախտտ լինի. գնացի բաց-արի
արկղը եւ ցանկացածըս գըտայ նորա մէջ. բայց
աւել ուրախացայ, երբ-որ այնտեղ մի Աստուա-
ծաշունչ եւս գըտայ :


Երեք կերպ՝ գործ-ածեցի ձխախտտըս .

առաջի կերպը այս էր՝ բերանըս առի դալար տերեւը, որ խիստ թունդ գոլով՝ թըմրեցուց ինձ. երկրորդ կերպը այս էր՝ ածուխների վրայ այրեցի մի քանի հաստ տերեւ ու քիթըս բռնեցի նորա ծուխի վրայ ու որքան զօրութիւնըս հասնում էր՝ հոտ էի անում նորանից. իսկ երրորդը այս էր՝ թաթախեցի շաքարօղիի մէջ եւ հիւթը խըմեցի: Այս խմիչքը անակընկալ հարբեցուց ինձ ու ես շուտով քուն մըտայ, եւ մինչեւ միւս օր այնպէս մընացի. եւ երբ-որ զարթեցայ քնիցս՝ տկարութիւնըս բաւականին թեթեւացել էր, ակտորժակըս յետ էր դարձել. այնուհետեւ քանի գընում էի՝ առաւել եւ առաւել առողջանում էի:

Յուլիսի 4 ին. սկսեցի Աստուածաշունչ կարդալու. կանոն դրի ինձի համար ամէն օր առաւօտեան եւ երեկոյան նորանից մի մի գլուխ կարդալ. այդ ինձ մեծ մխիթարութիւն պատճառեց: Երբ-որ ես սովորեցայ ամէն բան համբերութեամբ տանել՝ իմ դատը դրութիւնը սկսեց ինձ ամօք եւ մեղմ երեւել:

Երբ-որ զօրութիւնըս միանգամայն նորոգուեցաւ՝ ես միտըս դրի մի ճանապարհորդու-

Թիւն անել: Արդէն տասը ամիս էր որ այս
կղզիի մէջ էի եւ ոչ մի հնար չ'էի գըտնում
նորանից ազատուելու. ես խկապէս գիտէի որ
նորա վրայ ազամորդու ոտ կոխած չէ, ուրեմն
ուզում էի կատարելապէս զննել նորա բնու-
թիւնը, որ գուցէ (միտքումըս կարծում էի) մի
նոր բերք կըգըտնեմ, որ մինչեւ այսօր անյայտ
եւ անճանօթ մընացել է:



Գ Լ Ո Ի Խ 15.

=

Յուլիսի 16 ին սկսեցի ճանապարհորդութիւնըս փոքրիկ ծովածոցի կողմից, որ ինձ ինչպէս նաւահանգիստ ծառայեց, երբ-որ ես ալէկոծեալ նաւից առարկաները աղատում էի: Պետի ընթացքին հետեւելով՝ գեղեցիկ դաշտեր տեսայ, որոնք բարձր գիրք ունենալով՝ ամենեւին ենթարկած չ'էին հեղեղի: Բլուրների ստորոտը բըսնում էին դալար ծխախոտ, գեղեցիկ հալուէ եւ շատ ուրիշ բոյսեր, որոնց անունը ես չ'գիտէի. նմանապէս շաբարի եղէզն, որ միանգամայն առանց մշակութեան եւ հողացողութեան աճում էր:

Յուլիսի 16. աւել յառաջացայ, քանթէ
երեկ. դաշտերը թաւուտ անտառներով լցուած
էին. ձմերուկ եւ ուրիշ սլրտողներ ուր-ասես
բըսած էին. հասուն խաղողները ծառերից կախ
էին ընկած եւ ասես թէ այդեկութի էին սպա-
սում: Աս վերջի ժամանակները հաւաքեցի նո-
ցանից, չորացրի արեգակի տակ եւ պատուական
չամիչ պատրաստեցի. այդ կերպով աշնանը պիտի
ուեննայի առողջարար եւ հաճելի ուտելու բան:
Բոլոր այն օրըս անցրի շրջագայելով եւ առաջի
անգամ վստահեցայ բնակարանիցըս դուրս անց-
նել գիշերըս. հեծայ մի ծառի վրայ, ինչպէս որ
կղզիս հասած օրըն էի արել եւ այնպէս մնացի.
միւս օր շարունակեցի ընթացքըս, երբ-որ չորս
մղոնի չափ տեղ անցայ՝ հասայ մի գեղեցիկ
հովիտ. այնտեղի խոտը այնքան թարմ եւ դա-
լար էր, դաշտագետինը այնպէս կանանչափայլ
էր, որ տեսնողը կրկարժէր թէ մի մշակած
սարտէղ է մըտել. մի գեղեցիկ-էլ առուակ
անցնում էր մէջից: Հիացած կանգնեցայ եւ
երկար ժամանակ հաճութեամբ մըտիկ էի անում
շրջակայ տեսարանի վրայ, ինչպէս որ մի տէր
կամ իշխան իր կալուածքների վրայ է նայում:
Հաս քօքօի, լիմոնի, կիտրոնի եւ սինա-

խընձորի ծառեր դըտայ այնտեղ. բայց տարա-
բախտաբար ամէնն-էլ վայրի, անմշակ էին. բայց
եւ այնպէս լիմանը խիստ լաւ համ ունէր. նորա
հիւթը ջրի հետ խառնած՝ բաւականին զովա-
ցուցիչ խըմիչք էր :

Հատ քաղեցի այս պտուղներից, որոնց
մէջ կար նա եւ խաղող. բոլորը միասին մի
տեղ ժողովեցի ու տուն դարձայ. երեք օր էր,
որ այնտեղ ոտըս չ'էի դըրել. հաստատ մըտքիս
դըրել էի շուտով յետ-դառնալ ու ամաններու
մէջ դնել ժողոված սըտուղները :


Միւս օր երկու պարկ հետըս առած՝
եկայ այնտեղ, բայց ինչ տեսնեմ. նոցա մեծ
մասը վայրի կենդանիները կերել էին կամ
վնասել էին : Միւս անգամին աւել զգուշու-
թիւն բանեցրի. քաղած խաղողները կախեցի
ծառերի ճուղերու վրայ, որ այնպէս արեգակի
տակ չորանան :

Այնքան սիրահարուած էի այս հովիտի
վրայ, որ միտք ունէի միանգամայն այնտեղ
հաստատել բնակութիւնըս. եւ այդ մըտադրու-
թիւնըս անշուշտ կըկատարէի՝ եթէ չի վախե-
նայի, որ մի՛ գուցէ այնուհետեւ հնար չի պըտ-
րեմ՝ ազատուելու այս անմարդաբնակ երկրէն

եւ իմ հայրենիքը չի դառնամ: Բայց եւ այնպէս այստեղ ինձ համար մի ընդարձակ եւ սիրուն դաստակերտ շինեցի, որի չորս կողմը բարձր ցցապատով պատեցի ու ներսի կողմը լցրի նորատունկ ծառերով. մի չուանէ կախուն սանդուղք պընդեցրի սլառի վրայ, ինչպէս որ իմ բերդը ունէր:

Այսպէս երկու բնակարանի տէր եղայ, մինը աւել նման էր քաղաքական տունի, միւսը՝ շինական, իմ դաստակերտի: Բայց երկար չէ կարողացայ վայելելու այս բնակարանը, պատճառ-որ՝ անընդհատ անձրեւները ստիպեցին ինձ իմ առաջուայ բնակարանըս երթալու, ուր նմանապէս տարի հետըս բոլոր չամիչը, որ սատուական չորացել էր,

Երկու հարիւր ողկոյցեց աւել էր այդ պաշարըս:



Գ Լ Ո Ւ Խ 16.

=

Օգոստոսի 15 ից մինչեւ հոկտեմբերի կէսը շարունակաբար եկաւ անձրեւը, որ երբեմն այնպէս սաստիկ էր, որ հնար չի կար տրնից դուրս-կոխել ոտքըս: Եամանակըս ձանձրալի չ'անցնեմ ասելով՝ սկսեցի մառանըս մեծացնել:

Սեպտեմբերի 30 ին թշուառ նաւարեկութեանըս տարեդարձն էր. այդ օրը միշտ հանդիսով էի անցնում՝ պահեցողութեամբ, աղօթքով կամ ուրիշ բարեպաշտ գործերով զբաղած:

Ամաց կամաց սովորեցայ ճանաչել տա-
րուսց եղանակները, ցի՛ աշուն, գարուն, ամառ
եւ ձմեռ. բայց աւանդ, դառը փորձերով:
Արծեմ որ իմ ընթերցողների միտն է, որ ես
ցանելու համար սկսել էի երեսուն հատ
բրինձի եւ քսան հատ գարիի հասկերը, որ
ժայռի ստորոտումը քաղել էի: Ուրեմն՝ սկսեցի
դաշտումը մի փոքրիկ տեղ փայտէ բահովս
մշակելու ու այնտեղ սերմնահատներուս կէսը
ցանեցի. բախտըս էր որ՝ բոլորը չի ցանեցի,
այլ նորա մի մասը, ինչու-որ՝ վարուցանըս չի
յաջողեցաւ: Արայ հասաւ անանձրեւ եղա-
նակը, ցանածըս չ՛բուսաւ, եւ երբ-որ սկսեցին
անձրեւները՝ փոքր ինչ դալարացան նոքա եւ
խսկոյն չորացան: Փոքր ինչ ուշ, ցի փե-
տրուարի մէջ, նորից ցանեցի եւ այս անգամ
աշխատանքըս փառօք պրսակուեցաւ: Թէ եւ
հունձըս փոքր էր, բայց խիստ սպտուական էր,
այս անգամ երկու ստոման բրինձ եւ գարի
ստացայ:

Թանաքըս քանի գընում էր՝ նուազում էր
սյնալէս-որ ստիպուած էի միայն կենացըս ծան-
րակշիռ սարագանները գրելու. իսկ աննշանները
եւ սովորականները զանց էի առնում:

Նոյեմբերի մօտ, երբ-որ անձրեւային եղանակը անցաւ՝ ես սյցելութիւն արի իմ դաստակերտին եւ շատ գեղեցիկ փոփոխութիւններ տեսայ այնտեղ : Յիցերը, որից ես սլատ էի շինել՝ ուռիներու նման ծլել էին, եւ երկայն ճուղեր էին բաց-թողել : Աս անպիտանները կտրեցի, մաքրեցի եւ զօրութիւնըս հասածի չափ աշխատեցայ, որ երեք տարուայ մէջ միանգամայն ծածկեցին մեծ շրջապատըս . նոցա ստուերը այնքան թանձր էր, որ խիստ յարմար էր այնտեղ անցնելու տօթագին եւ երաշտի ժամանակը : Արբ-որ լաւ օրեր էին անում՝ ես միշտ շտապում էի վատ եղանակներու համար պաշար պատրաստել . բայց երբ-որ հասնում էին վատ օրերը՝ ես ուրիշ բաներով էի զբաղում :

Հատ ցանկանում էի սասաւառներ շինել եւ փոքր ինչ գիտէի սյգ ձեռարուեստը, պատճառ-որ՝ երեխայ գոլով ժամանակ առ ժամանակ գնում էի մեր հարեւան (դրացի) կողովագործի մօտ եւ տեսնում էի՝ ինչպէս նա աշխատում էր. պատահում էր որ՝ ես-էլ երբեմն օգնում էի նորան : Յանկարծ միտս եկաւ որ եթէ սյգ բանի համար ուզեմ գործ ածել

ցրցապատիս ճրկուն ճուղերը՝ խիստ յարմար
կ'լինի. եւ յիրաւի որ իսկոյն գընացի այնտեղ,
շատ ճուղեր կըտրեցի եւ բերի բակիս մէջ դրի
չորանալու. երբ-որ անձրեւային եղանակը հա-
սաւ՝ նոցանից շատ սապատներ շինեցի, որոնք
թէ եւ այնքան նուրբ չ'էին, բայց խիստ պինդ
էին, եւ իմ կարեացը յարմար :



Գ Լ Ո Ի Խ 17.

=

Արք-որ անձրեւները դադարեցան եւ օրերը սլայծառացան՝ եւ հաստատ միտըս դրի կղզիիս մէջ մի ճանապարհորդութիւն անել ու դաստակերտիս միւս կողմիցը մինչեւ ծով անցնել: Այդ վախճանին առի հետըս մի հրացան, մի կացին, շատ վառօդ եւ դընդակներ, պարսիմատ, չամիչ՝ ու հաւատարիմ շանըս հետ ճամբայ ընկայ: Արք-որ հովիտը անցայ՝ արեւմուտքի կողմից առաջս ծովը բացուեցաւ, եւ որովհետեւ օրը խիստ սլայծառ էր՝ նորա մէջ պարզ տեսայ մի ուրիշ կղզի՝ մօտ տասներհինգ մղոն հեռի իմ կղզիից: Աս կարծիքի եկայ,

որ վայրենաբարոյ բնակիչներով լցրած է. ուստի ամենեւին ցանկութիւն չ'ունեցայ այնտեղ ոտըս կոխելու :

Այս մասը կղզիի, ուր-որ այժմ էի, միանգամայն տարբեր էր նորանից, ուր-որ ես բնակում էի, եւ դրեթէ հազարապատիկ նորանից հաճելի էր : Հատ թութակներ տեսայ այնտեղ, նոցանից մինը բըռնեցի ու ինքըս ինձի խօսք տուի անպատճառ խօսել սովորացնել նորան : Օրը երկու մղոնից աւել չ'էի առաջ գընում, պատճառ-որ մի եւ նոյն տեղումը հարիւրաւոր անգամ պտոյտներ էի անում, ինչէ որ՝ օգտաւէտ գիւտերը զանց չ'առնեմ. երեկոնները դադարած, վաստակած սովորաբար գալիս հանգըստանում էի մի ծառի վրայ :

Արբ-որ հասայ ծովի մօտ՝ տեսայ որ նորա ափերը անչափ շատ կրիաներով ծածկած էին. նմանապէս շատ թըռչուններ կային այնտեղ, եթէ ուղէի՝ կարող էի շատ սպանել, բայց խնայում էի գընդակներըս, եւ աւել հարկաւոր գործածութեան ու դիպուածի համար պահպանում էի նոցա : Այժեամներն-էլ աւել բաղմաթիւ էին՝ քան թէ իմ բնակութեան կողմերը : Թէ եւ շատ գեղեցիկ էր այս կողմը,

բայց ես ամենեւին ցանկութիւն չ'ունէի բնա-
կելու. ինձ այնպէս էր թուում որ՝ ես օտար
աշխարումն եմ. իմ հայրենիքը հին բնա-
կարանըս էի համարում: Տասներկու միտն
առաջ-գնացի դէպ'ի արեւելք, ու երբ-որ տնկե-
ցի մի մեծ ձող, որ ինձ նշան պիտի լինէր՝ դար-
ձայ բնակարանըս, մտքումս որոշելով, որ միւս
անգամ ներհակ կողմից սկսեմ ճանապարհոր-
դութիւնըս եւ շարունակեմ յառաջ գնալս
մինչեւ-որ դըտնեմ տընկած ձողս:

Տուն դառնալու ժամանակ շունըս մի ուլ
բրոնեց. սյդ դիպուածը ինձ մեծ ուրախու-
թիւն պատճառեց, ինչու-որ՝ վաղուց ցանկա-
նում էի մի անդեայ ունենալու. շանըս որսը
ինձ յոյս տուեց շատ ուրիշ որսեր եւս անելու:
Շուտով մի անուր շինեցի, ձրգեցի ու լի
վզին ու բաւական դժուարութիւն քաշելով՝
տարի նորա մինչեւ դաստակերտըս: Այնտե-
ղից գընացի տուն: Չ'եմ կարող մեկնել՝
ինչպէս ուրախացայ, երբ-որ հասայ տուն ու
վաստակած անգամներուս անկողնի մէջ հան-
գիստ տուի: Մի քանի օր անգործ եւ հան-
գիստ անցրի, ինչու-որ այդ երկարատեւ ճանա-
պարհորդութիւնից խիստ հոգնած էի. յետոյ

գնացի տեսնել թէ ինչ է անում ուր: Քաղցից
ու ձանձրութիւնից խեղճը այնպէս հեղ եւ
հլու էր դարձել, որ առանց ստիպելու սկսեց
ետնիցս ման-գալ, ու այնուհետեւ ամենեւին
չ'էր հեռանում ինձանից, ու շան նման հետըս
գալիս էր ուր-որ երթայի: Թութակըս, որին
մի վանդակի մէջ էի դրել, նմանապէս սկսել
էր ինձ ձանաչելու. տրդէն սովորել էր փոքր
ինչ անուներս արտասանելու:



Գ Լ Ո Ի Խ 18.

=


Տարուայ եղանակը աշնային անձրեւայինն էր ու ցամաք Տասնելուս երկրորդ տարեպտուտը. թշուառ դրութեանըս կամաց կամաց սկսում էի սովորել ու ինքս ինձի մսիթարել. ես արդէն չ'էի համարում ինձի մենակ եւ անտերունջ, պատճառ-որ՝ այժմ կարողանում էի թշուառ օրերըս միտքով դէպ'ի Աստուած դառնալ եւ պաղատել նորա գթառատ ողորմութիւնը : Գործերըս այնպիսի կարգի կանոնի էի դրել, որ ամենեւին չ'էի կարողանում անգործ եւ դատարկ մնալ : Գրեթէ ամբողջ օրըս անցնում էի հոգեշահ խորհրդածութիւններով, որսով, ևն, որ կարողա-

նամ ամէն օրուայ ապրուստըս ճարելու եւ
ապագայիս համար պաշար պատրաստելու. նմա-
նասկէս պարասլում էի ձեռարուեստով :

Դեկտեմբերի վերջին սերմնացանըս նորից
հասունացաւ. նորից եմ ասում, պատճառ-որ
այս աշխարումը երկու անգամ կարելի է ցա-
նել եւ հընձել : Աս արդէն մի անգամ հընձել
էի, եւ այդ անգամուայ հունձըս չափազանց
առատ էր : Այժմ պէտք էր հընձելու, բայց ես
գերանդի չ'ունէի : Այդ տեղ-էլ իմ հնարա-
գիտութիւնը ինձ օգնեց. հին դաշնակներիցըս
մինը առի ու գերանդի շինեցի ու նորանով
կըտրեցի հասունացած հասկերը : Ինչպէս մեծ
էր ուրախութիւնըս, երբ-որ իմ կէս ստո-
ման սերմնահատը երկու ու կէս կապիճ էր
դարձել, կամ այդքանի մօտ, ուղիղը ասել
չ'եմ կարող, ինչու-որ չափ չ'ունէի : Մեծ
քաջալերութիւն ստացայ այս յաջողակ ելքից,
լնամով պահեցի հաւաքած սերմնահատներըս,
որ գարնանը նորից կարողանամ ցանելու. այս-
պէս միտք ունէի քիչ ժամանակից ստանալ
ասպիտակ միջոց ապրուստիս համար, նա՛ եւ
ցանելու սերմանիք :

Անասելի, անհաւատալի դժուարութիւններ

քաշեցի մի կտոր երկիր հերկելու համար, ինչու-
որ երկրագործութեան համար ուրիշ գործիք
չ'ունենալով՝ փայտաշէն բահըս գործածում էի
արօրի տեղ: Մանապէս տափան չ'ունէի, բայց
որպէս զի նորա պակասութիւնը մի կերպով
լցնեմ՝ ծառից երկայն ճուղեր կըտրեցի, կապեցի
նոցա միասին ու այդպէս քաշաքաշ անցրի
հերկած երկրի վրայով: Արջապէս բոլոր արտավարըս
ցցապատով պատեցի: Ամբողջ երեք ամիս
զբաղած էի այս աշխատանքով մինչեւ-որ
անձրեւային եղանակը չի ստիպեց ինձ
թողնելու: Արբ-որ բնակարանըս դարձայ՝
այնտեղ-էլ անգործ չ'մնացի. հազար ու մէկ մանր
մունր պարասմունքներ ամենայն օր պատահում
էին. այդ միջոցին թութակիս խօսել սովորեցրի:
Շատ ժամանակ մարդկային խօսքեր չ'էի լսել,
բաց 'ի իմից. առաջի անգամ թութակըս կրկնեց
իւր անունը «ի՛րուն թութակ» ասելով:



Գ Լ Ո Ւ Խ 19.

=

Հատ ժամանակ է որ մըտքիս դրել էի
ամաններ շինելու. ինձ թուում էր որ՝ եթէ
յարմար կաւ գըտնեմ՝ կարող եմ նըպատակիս
հասնել: Այս աշխարումը արեգակը այնպիսի
ջերմացուցիչ զօրութիւն ունի, որ հարկաւոր
եղածի չափ կարող է չորացնել նոցա: Եթէ
մանրամասնաբար պատմեմ՝ ինչպէս քանի ան-
գամ փորձեր արել եմ այդ մասին, ինչպէս
զանգուած եմ շինել, ինչպէս օտարոտի ձեւեր
եմ տուել շինած անօթներուս՝ հաստատ դի-
տեմ որ՝ լսողը շատ պիտի ծիծաղէ վրաս:

Հատերը փրկւում եւն, պատճառ-որ կաւր բաւական պինդ չ'եղել. շատերը ճաքճքել են, ինչու-որ ժամանակից առաջ դրել եմ արեգակի տակ. վերջապէս՝ շատերն-էլ փշրուել են տեղէ տեղ տանելու ժամանակ, այնպէս որ՝ երկու ամսուայ անխոնջ աշխատանքիս վարձը եղել են երկու կուպտատարաղ ամաններ: Այս երկուսը որ լաւ չորացան եւ անդայան արեգակի տակ՝ դրի երկու մեծ կողովներու մէջ, ու նոցա մէջի դատարկ տարածութիւնը լցրի յարդով, որ չի կոտրուին: Այս հնարքով վերջապէս ունեցայ ամաններ, եթէ ոչ այնքան գեղեցիկ, որքան կարծում էի, բայց ինչ կ'ուզէ լինի՝ այնքան յարմար էին, որ կարող էի նոցա մէջ հեղանիւթ ածել կամ մի բան եփել: Մէկ օր որ կրակի առաջ կանգնած էի՝ նորա մէջ տեսայ ամանիս կտորտանքը քարի պէս կարծրացած եւ կարմրած. այս գիւտը ինձ չափազանց ուրախացուց. իսկոյն մի տեղ ժողովեցի ամաններըս ու աճիւնով ծածկեցի. յետոյ նոցա չորս կողմը այնպէս բոցառատ կրակ վառեցի, որ քիչ ժամանակուայ մէջ ամաններըս կարմրացան, բայց ոչ մինը նոցանից չի տրաքեցաւ. մի եւ նոյն աստիճանի ջերմութեան անընդհատ հինգ-վեց ժամ թողի՝ մին-

չեւ-որ նոցանից մինը հալեցաւ եւ հոսեցաւ. դորա պատճառը այն էր որ՝ կաւի մէջ գըտ-նուած մանրախիճը կրակի զօրութեանը չ'տոկալով՝ հեղուկ էր դառնում, եւ եթէ թողնէի այնպէս՝ անշուշտ ապակի կ'դառնային : Սկսեցի ջերմութեան աստիճանը ցածացնել, բոլոր այն գիշերը քուն չ'եղայ, որ կրակը յանկարծ չ'հանգչի : Առաւօտը որ բացուեցաւ՝ երեք սափորի ու երեք պոյտի տէր եղայ. չ'եմ կարող ասել, որ տեսքով գեղեցիկ էին նոքա, ոչ բայց իմ գործածութեան համար խիստ յարմար էին. նոցանից մինը նաեւ մէջը սպիկի էր ստացել :

Ուրախութիւնիցրս չ'գիտէի ինչ անեմ, երբ-որ միտըս էր գալի որ վերջապէս ունեցայ կերակուր եփելու ամաններ. անհամբերութիւն սպասում էի պոյտերու սառելուն, որ նոցա մէջ ածեմ ջուր եւ դնեմ այծի միս : Երբ-որ արդէն պատրաստ էին՝ իսկոյն առի հարկաւոր բաները ու զարմանալի մաթան եփեցի :

Այժմ ինձ մնում էր մի երկանաքար գըտնել, որով կարողանայի ցորենըս աղալու : Հասօրեր ունայն պտրտեցի սյդպիսի քար. պէտք էր ապառաժների մէջ տաշել. բայց ես ամե-

նեւին կարողութիւնն չ'ունէի այդ տաժանական
աշխատանքը վրաս առնելու. դարձեալ որ դորա
համար հարկաւոր գործիներ եւս չ'ունէի :
Հատ մըտմըտանքներից յետ վերջապէս այսպէս
որոշեցի. առի մի մեծ կոճղ, դրսի կողմը
կացինով տաշեցի, գլորցուցի. մէջը փորելու
համար գործածեցի այն հընարը, որ յայտնի եւ
սովորական է վայրենի ազգերուն, երբ-որ նոքա
ուղում են նաւակ փորել: Յետոյ երկաթա-
ծառից շինեցի մի մեծ եւ ծանր սանդի տոռն :
Երբ-որ այս դըժուարութիւնըն-էլ յաղթեցի՝
մընում էր մի մաղ շինելու, որ պատիճը եւ
թեփը զատեմ ալիւրից : Դորա հնարն-էլ գը-
տայ. խիտ հիւսած կտաւը, որ ունէի, մաղի
տեղը բըռնեց :

Այժմ պէտք էր հնոց. այս աշխատանքն-էլ
ինձ յաջողեցաւ, թէ՛ եւ ոչ առանց չարչարա-
նաց. երբ-որ հնոցը պատրաստեցի՝ արդէն հեշ-
տութեամբ կարողանում էի եփել ոչ թէ միայն
հաց, այլ եւ պղակուտը եւ կարկանդակ :

Հունձըս-էլ քանի գնում էր՝ աճում եւ
առատանում էր, այնպէս որ՝ միանգամայն ստի-
պուած էի ընդարձակել կալս, որ նորա մէջ
աւել տեղաւորուին ցորեն եւ բրինձ. վերջի

Հունձըս մօտ քսան կապիճ ցորեն եւ գրեթէ
նոյն քան-էլ բրինձ բերեց ինձ :

Մի օր ես հաշուեցի՝ արդեօք ինչքան
ցորեն բաւական է ինձ տարին, եւ իմացայ որ
քառասուն կապիճից աւել չ'եմ կարող դործ-
ածել, ու այնուհետեւ այդպէս բրոնեցի բա-
նըս :



Գ Լ Ո Ի Խ 20.

=

Ասել կ'ուզէ որ խելքըս միաբըս դարձած էր գիշեր ու ցերեկ դէս'ի այն հեռաւոր երկիրը, որ ես մի օր դէմ' ու դէմ' իմ' կղզիիս տեսել էի. երեւակայութիւնըս շատ անգամ գայթակղեցնում էր ինձ, հաւատացնելով որ՝ ես հեշտութեամբ կարող եմ հասնել այնտեղ, ու այդ կերպով կըզըտնեմ հընար եւ միջոց ազատուելու այս թըշուառ վիճակէս. բայց այն վտանգները ու այն դըժուարութիւնները, որոնք կից էին այդ ճանապարհորդութեան հետ, ամենեւին չ'էին զարհուրեցնում ինձ. մարդակեր վայրենիներու ձեռք ընկնելից անգամ

երկիւղ չ'էի կրում. այս վերջի վտանգը աւել
ճշմարտանման եւ ստոյգ էր, քան թէ ուրիշներ
ըը, պատճառ-որ իմ հաշուով ես հեռու չի
պիտի լինէի Վարաիրեան կղզիներից, որոնց բնա-
կիւք առանց բացառութեան մարդակերներ էին:

Նախ եւ առաջ կարծեցի թէ այն նաւակը,
որ ալիքները բերել ձրգել էին ծովի ավի՛ կարող
է իմ կարեացը պէտք գալու, ու ես երեք շա-
բաթ շարունակ վաստակեցայ նորոգելու ու
կարկատելու նորա. բայց վերջապէս տեսնելով
որ անհնարին է նորա բանի պէտք ածել՝ միան-
գամայն թողի. բայց աղատութեան իղձը մի
րոպէ հանգիստ չ'էր տալի: Սըտքիս եկաւ որ
վայրենիներու պէս դիւրին կերպով կաղնի ծա-
ռից շինեմ մի նաւակ. այդ շինութեան կերպը
խիստ հասարակ եւ սոսկական է, որ չէ պա-
հանջում շատ գործիներ: Ուրեմն սկսեցի այդ
տաժանական աշխատանքը՝ առ ոչինչ գրելով
այն ամէն դժուարութիւնները եւ արգելքը,
որոնք ամէն քայլիս կարող էին ինձ հանգիպել:

Նախ եւ առաջ մի ահագին ծառ կըտրե-
ցի, որի նմանը գուցէ Վիրանան երբէք բըսուցած
չ'լինէր Սողոմոնի տաճարի համար. բունի
մօտ նորա հաստութիւնը հինգ ոտնաչափ եւ

տասը մատ էր, իսկ քսան ոտնաչափ նորանից
հեռի մինչեւ այն տեղը, ուր-որ ճուղերն էին
բըսած՝ չորս ոտնաչափ եւ քսան երկու մատ
հաստ էր : Ինչպէս ասացի՝ դժոխային չարչա-
րանք էր այս ինձ համար. ինչ դըժուարու-
թիւններ կրեցի, մինչեւ-որ կըարեցի, ճիւղերից
ազատեցի, — անհրնարին է խօսքով մեկնելը.
երեսուն օր անընդհատ աշխատեցայ դորա վրայ :
Վացինըս, ուրագըս ու ամէն ունեցած գործի-
ներըս անդադար գործածութեան մէջ էին. մի
ամիսի չափ-էլ տաշում եւ հարթացնում էի
արտաքին մասը, որպէս զի նաւակի պատշա-
ճաւոր ձեւ կարողանամ տալու նորան. երեք
ամիս գործածեցի միայն մէջը փորելու համար :
Այս ամէն դժուարութեանց փոխարէն իմ ան-
խոնջ վաստակը փառօք պըսակուեցաւ : Պատ-
րաստած նաւակըս քըսան վեց մարդ կարող էր
իւր մէջ տեղաւորել, ո՛ւր մընաց որ ինձ եւ
իմ հարկաւոր պաշարը :

Քանի-որ մըտիկ էի անում աւարտած
աշխատանքիս վրայ՝ ուրախութիւնիցըս խելքըս
գլխիցըս թըռչում էր. երջանկութիւնըս կրկնա-
պատկելու համար ինձ ուրիշ բան չ'էր մընում,
բայց եթէ ծովը սահեցնել նորա. ահա՛ այդտեղ էր

ամենամեծ դժուարութիւնը. բայց ես ամենեւին
չ'վախեցայ. սկսեցի մինչեւ ծով հարթաց-
նել այն տարածութիւնը, որ տեղով-որ պիտի
տանէի նաւակը. առ մեծի տարաբախտութեանըս
այդ հնարն-էլ չ'օգնեց, պատճառ-որ՝ նաւակի
ճանրութիւնը զօրութիւնիցրս վեր էր, տեղի-
ցը շարժել անգամ չ'էի կարողանում: **Յետոյ**
ուղեցի մի նեղ ճանապար փորել մինչեւ ծովը,
որի միջով պէտք էր սահեցել նաւակս. բայց որ
հաշուեցի թէ այդ աշխատութեան համար քիչ
քիչ տասներկու տարի պիտի գործածել՝ իսկոյն
թողի այդ հնարը: **Վարանքըս քանի գնում**
էր՝ մեծանում եւ սաստկանում էր: Այս գոր-
ծով զբաղած էի, երբ-որ լրացաւ չորրորդ տա-
րին այս կղզիի մէջ ոտք դրնելս, եւ սկսեց
հինգերորդը: Քանի ժամանակ է որ անդա-
դար հոգեշահ խորհրդածութիւններ էի անում
առանձնութեանըս ժամանակ, որ իմ սրտումը
մի այնպիսի նոր եւ անյայտ զգացմունքներ էր
թափում, որ միանգամայն մտիթարում էր հո-
գիս եւ թեթեւացնում էր առօրեայ տաժանական
վաստակըս:



Գ Լ Ո Ւ Խ 21.

=

Մաւից ազատած առարկաները կամ միանգամայն հնացել, մաշուել էին, կամ կիսամաշ էին. թանաքըս նմանապէս պրծել էր. վրան այնքան ջուր էի ածել որ՝ դրեթէ մէջը ամենեւին սեւութիւն չ'էր մնացել: Շորերըս օրէ օր մաշվում էին, բանի պէտքական քանի մի հատ շապիկ էր մնացել. իսկ միւսները բոլորը քրքրուել էին. այդ մնացածն-էլ խնայողութեամբ էի գործ ածում. բայց այս երկրի ջերմութիւնը այնպէս անտանելի է, որ մարդ ստիպուած է շատ անգամ միայն շապիկով մնալ ամբողջ օրը: Մանապէս անհնարին է գլխա-

բայ մնալ բայ օղի տակ, անսպառնառ գլուխը
պէտք է ծածկել, թէ չէ՛ գլխացաւը անպակաս
է լինում:

Այս հանգամանքները ինձ ստիպեցին
փոքր ինչ մըտածել ապագայիս վրայ, որ մի՛
դուցէ մերկ մնամ բոլոր մնացած ժամանակը,
որ պիտի անցնեմ այս մենաւոր կղզիի մէջ.
այդ սրտածառաւ միտքըս դրի բանի պէտք ածել
այն հին ու մին շորերը եւ լաթերը, որ չորս
տարի առաջ աղատել էի նաւից, եւ յիրաւի
որ՝ ինչպէս եւ իցէ կարեցի ինձ համար մի վեր-
նագգեստ, երկու բաճկոնակ եւ երկու վարտիք.
ասելն-էլ աւելորդ է որ՝ կարած հարաւներըս
ամենեւին նախանձելի բաներ չ'էին. բայց այն
ժամանակուայ եւ հանգամանաց նայելով՝ ինձ
համար խիստ սրտուական եւ յարմար էին:

Բոլոր իմ՝ սպանած չորքոտանի կենդա-
նիներու կաշին պահել էի այն յուսով որ՝ նոքա
մի օր ինձ պէտք կըզան: Այդ կաշիներից եւս
կարեցի ինձ համար գըզակ, վարտիք, բաճկո-
նակ. այս հագուստն - էլ ինձ համար խիստ
սրտուական էր, սրտածառ-որ՝ կարողանում էր
ցուրտից եւ անձրեւներից սաշտպանել ինձ:

Այդ կաշիներէից նմանապէս շինեցի մի հովանոց, որ մի եւ նոյն ժամանակ սաշտպանում էր ինձ արեգակի կիզիչ ճառագայթներից եւ անձրեւներից. բայց նա մի անյարմարութիւն ունէր, ինչ է՛ր ծալվում. բայց համբերութեամբ եւ աշխատանքով վերջապէս այն աստիճանին հասայ որ՝ այդ անհարթութիւնն-էլ հեռացրի. իմ ձեռնաշէն հովանոցը ծալվում եւ բացվում էր, ինչպէս-որ ուզում էի:

Հինգ տարի շարունակաբար անցրի այս սովորական կեանքս՝ առանց մի նշանաւոր պատահմունքի. այդ միջոցին գլխաւորաբար զբաղած էի մի ուրիշ նաւակի շինութեամբ, որ առաջուանից փոքր էր: Հինելու տեղը ընտրել էի կէս մղոն հեռի ծովից, եւ երկու տարի ժամանակ պէտք էր մինչեւ նորա ծով հասցնելըս, ինչու-որ՝ մի ջրանցք փորեցի դորա համար վեց ոտք խորութեամբ եւ չորս ոտք լայնութեամբ:

Այժմուայ նաւակըս այնքան մեծ է՛ր, որ ես կարողանայի նորանով լայնարձակ ծովը մըտնել ու ցամաք հասնել. առ այժմըս բաւական համարեցի միայն կղզիիս չորս կողմը նաւել: Նաւակըս լաւ սլատրաստեցի ամէն


հարկաւոր կազմաճքներով, մէջը տընկեցի կայմ,
նորա վրայ քաշեցի մի առադաստ. երկու ծայ-
րին մի մի արկղ սընդացուցի, որ նոցա մէջ
անվնաս պահպանուին ուտելու պաշարներըս եւ
յէնքերըս : Մաւակի յետին կողմը սընդացուցի
հովանոցըս, եւ այնուհետեւ երբեմն փորձի ու
վարժութեան համար փոքրիկ ճանապարհորդու-
թիւններ էի անում : Մաւակըս խիստ արագա-
շարժ ընթացք ունէր. այդ կողմանէ միամտեցայ
ու սկսեցի ճամբու պաշարներ պատրաստել.
այդ վախճանին պատրաստեցի տասներկու հատ
գարիի հաց, մի պոյտ բրինձի խիւս, մի շիշ
շաքարօղի, կէս այծ, վառօդ, գնդակներ եւ վեր-
ջապէս երկու հատ հաստ վերնաղգեստ, որոնց-
մէն մինը հագնելու, միւսը ծածկուելու համար :





Նկար՝ Յ. Պատկանեան.

Ոտքնդօնը իւր նաւակի մէջ.



Գ Լ Ո Ւ Խ 22.


=

Նոյեմբերի 6 ին, վեցերորդ տարին իմ
իշխանութեան կամ գերութեան (որը ուզէք
իմացաէք) այս կղզիի մէջ ես ձեռնարկեցի այս
փոքրիկ ճանապարհորդութիւնը: Աղջիւս որ ինքը
իրան բաւականին փոքրիկ էր, բայց ահագին
բարէ ափերով պատած գոլով՝ խիստ ընդարձակ
տեղ էր բըռնուժ, որ ինձ ստիպեց մեծ շուրջ
անելու նորա չորս կողմը: Ծովը հանդարտ
էր, բայց հազիւ թէ փոքր ինչ առաջ գնացի՝
մինչէլ տեսնես մի հոսանքի մէջ ընկայ, որի
ընթացքը այնպէս արագ էր, ինչպէս-որ է ջրաղաց-
քի ջուրը սահանքի մէջից անցնելու ժամանակ:

Անհնարին էր նաւակիս ընթացքը կասեցնել կամ
թէ՛ նորա ափերի մօտ պահել. անմեկնելի զօ-
րութիւն առաջ էր մղում նորա հոսանքը, եւ
իմ ամէն ջանքը անօգուտ էին : Լնքըս ինձի
արդէն անհրաժեշտ կորած էի համարում, սլառ-
ճառ-որ եթէ բաց ծովը մտնէի՝ անշուշտ սո-
վատանջ պիտի մեռնէի, այն մասին որ՝ առանց
երկարատեւ ճանապարհորդութեան ոչ մի տեղ
չ'էի կարող հասնել. իսկ այդքան ժամանակուայ
պաշար չ'ունէի հետըս : Ա՛լս, ինչպէս երա-
նելի տեղ էր երեւում ինձ այն ժամանակ իմ
կղզին, որի նմանը, իմ կարծիքով, ոչ մի տեղ
չ'կար : Երկու մղոն հեռացած էի ցամաքէն,
եւ թէպէտ հընար չ'կար ափ հասնելու ջուրի
հակառակ ընթացքէն՝ ՚ի վերայ այսր ամենայնի
յոյսըս չ'էի կորցնում եւ ամէն հնարը ՚ի դործ
դընում էի նորա մօտենալու կամ դոնէ այնքան
շատ չ'հեռանալու նորանից : Սօտ միջօրէին
յաջողակ քամի բարձրացաւ, եւ նաւակըս հան-
դարտ առաջ մղեց դէպ'ի կղզին, որից արդէն
այնքան հեռացել էի, որ հեռուից հազիւ կարո-
ղանում էի նշմարել. այս դիպուածը խիստ
քաջալերեց ինձ, եւ ես իսկոյն պարզեցի առա-
գաստը : Առ մեծի երջանկութեանըս մի ուրիշ

Հոսանքի մէջ մըտայ, որի ընթացքը ուղիղ դէ-
պի կղզիս էր. հազիւ թէ վըայ մի ժամ անցաւ՝
ես ցամաք հասայ : Այնքան մեծ էր ուրախու-
թիւնըս, որ անհնարին է խօսքով բացայայտե-
լը, երբ-որ ակներեւ մահից փրկուած տեսայ
անձըս. սրտանց գոհացայ Աստուծոյ նորա ան-
ճառելի ողորմութեանը, որ անգաղար հեղում
էր ինձպէս անարժան ծառայի վըայ : Հտա-
պեցի նաւակըս մի ասլահով տեղ կապել եւ ին-
քըս վազեցի դէպ'ի դաստակերտըս : Պատի
վըայից մտայ բակը ու պառկեցայ մի հով տե-
ղումը, եւ որովհետեւ օրն 'ի բուն վաստակած
դադարած էի՝ տեղն 'ի տեղ քուն մըտայ :

Ապշած մնացի տեղումըս, երբ-որ քընի-
ցըս զարթած՝ ականջիս հասան այս խօսքերը.
« Ուօրինզօն, խեղճ Ուօրինզօն, ո՛ւր էիր » :
Այս ձայնը սռաջի նուազ ինձ մեծ տատա-
մնութեան մէջ ձըգեց. բայց յետոյ նկատեցի որ
այս խօսքերը ասօղը թութակն էր, որ ցանկա-
պատի վըայ թառած՝ ասես թէ շնորհաւորում
էր իմ յաջողութեամբ ցամաք հասնելը :



Գ Լ Ո Ի Խ 23.

=

Փորձերը եւ ճանապարհորդութիւնները բաւական հողնեցուցին եւ ձանձրացուցին ինձ. մի տարիից աւել ոչինչ բան չ'ձեռնարկեցի, եւ միանգամայն հանդարտ անցուցի ժամանակըս: Այս միջոցին շատ կատարելագործեցայ զանազան արուեստներու մէջ. խիստ վարպետ բրուտ դարձայ եւ առաւել եւ առաւել դեղդեղկացուցի ամաններըս՝ աւել յարմար ձեւ տալով նոցա: Բաց 'ի դորանից՝ մի ծխաբարշ շինեցի, եւ այս ունայն զբօսանքը այնքան ուրախացուց ինձ, որ չ'եմ կարող ասել: Նմանապէս կո-

ղովներ հիւսելու մէջ շատ յառաջադիմութիւններ արի. մեծ մեծ կողովներ շինեցի, որոնց մէջ դնում կամ պահում էի այծերուս միսը, կրիայի ձուերը եւ ցորենը :

Վառօդըս սկսել էր հասնելու. առանց նորա հնար չ'ունէի այնուհետեւ ճարել իմ հարկաւոր մսեղէն պաշարը : Ութը տարի պահեցի այծըս այն յուսով որ՝ մի օր անդեպ կ'ունենամ նորանից. բայց տարաբախտաբար ուրիշ այծեր չ'կարողացայ կենդանւոյն բըռնել : Նախ եւ առաջ որոգայթներով ուզեցի որսալու. բայց նոքա խիստ թոյլ գոլով՝ կամ կըտրտած էի գըտնում նոցա ամէն անգամ, կամ կըծած : Միտք արի ուրիշ հնարներով որսալ նոցա. այդ վախճանին շատ փոսեր փորեցի այն տեղումը, ուր-որ սովորաբար արածում էին այծեամները. այդ փոսերը ծածկեցի բարակ ճուղերով եւ նոցա վրայ փըռեցի բրինձի եւ ցորենի հասկեր : Առաջ ու առաջ այծեամները գալիս ուտում էին հասկերը եւ մի քանիսը նոցանից թէ՛ եւ ընկնում էին փոսի մէջ. բայց կարողանում էին գտնել փախչելու հնար. բայց վերջապէս այնպէս կատարելագործեցի որոգայթներըս, որ մի առաւօտ բըռնեցի մի մեծ ծեր

այծեամ եւ երեք հատ ուլ, որոնցից մինը արու-
էր, իսկ երկուսը մատակ էին :

Ծեր այծեամին բայ թողի, բայց երեք
ուլերուն կապեցի, եւ մեծ դժուարութեամբ
տուն տարի: Առաջ ու առաջ նոքա չ'էին ու-
ղում ուտել. բայց քանի մի օր քաղցած մնալով՝
ախորժակով կերան ցորեն եւ ուրիշ սերմնա-
հատներ, եւ կամաց կամաց ընդելացան ինձ :

Այժմ սէտք էր միտք-անել ինչպէս նոցա
մի փակած տեղումը սլահել, որ չ'կարողանան
փախչել կամ ուրիշ վայրի այծեամներ չ'գան
եւ չ'խառնուին նոցա հետ: Այդ ձեռնարկու-
թիւնը խիստ դժուար էր մի մարդու կատարել,
բայց եւ այնպէս կարի հարկաւոր էր մակառ
ունենալ. դորա համար ընտրեցի մի դաշտավայր,
որի մէջից անցնում էին երկու առուակ, եւ որ մի
անտառի էր կըլած: Արկու հարիւր քան կան-
դուն երկայնութեամբ եւ երկու հարիւր լայնու-
թեամբ տեղ սլատեցի ցցասլատով, որի վրայ
շատ աշխատեցայ. այդ միջոցին այծեամներըս
արածում էին մօտիս. նոցա ոտերը կան-
խադոյն կապել էի, որ չ'փախչին: Կամաց
կամաց սովորեցրի նոցա ազուռիցս դարի առ-
նուլ:

Մէկ ու կէս տարուայ մէջ այժեամներուս թիւը հասաւ մինչեւ տասներկու, եւ նորանից յետ երկու տարիից՝ քառասուն երեք հատ ունեցայ. թող թէ ապրուստիս համար նոցանից շատ մորթեցի :

Ա երջի ժամանակները միտըս դրի այժեամների կաթից առտընին պիտոյիցըս համար բաներ պատրաստելու. այս խորհուրդը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց. այդ վախճանին իսկոյն մի մառան շինեցի : Հատ անգամ այժեամներից օրը 8—10 կուժ կաթ էի կթում. նորանից պատրաստում էի կարագ, պանիր եւ ուրիշ կաթնեղէն ուտելիք :

Ո՛հ, ի՛նչպէս սքանչելի է Աստուծոյ բարութիւնը, ի՛նչպէս գիտէ նա հազար ու մէկ ճանապարհերով ամօքել մարդուս դառնադոյն վիճակը :



Գ Լ Ո Ի Խ 24.

=

Ո՛վ իմանայ՝ ինչպէս պիտի ծիծաղէին վրաս մարդիկ, եթէ տեսնէին ինձ ճաշի նըստած իմ բոլոր ընտանեացը հետ, որոնք մի եւ նոյն ժամանակ իմ հպատակներն եւս էին, եւ որոնց կենաց ու մահու վրայ անսպասան իշխանութիւն ունէի :

Սիրական թութակըս միայն իրաւունք ունէր հետըս խօսելու. շունըս որ ծերութիւնից փոքր ինչ տխուր էր դարձել՝ միշտ նստում էր աջ կողմումըս. երկու կատուս նստած սեղանի երկու ծայրին՝ սպասում էին որ ես նոցա-էլ անուշ կերակուրներից մաս հանեմ :

Այի օր սաստիկ ուղեց սիրտըս ճանապարհորդել մինչեւ կղզիս ծայրը, եւ նոր զննութիւններ անել այն տեղ : Աթէ այս օտարոտի զգեստներովս եւ զէնքերովս յայտնուէի որպէս եւ իցէ քաղաքումը՝ անշուշտ ծիծաղից պիտի թուլանային մարդիկ կամ վախից լեղիները պիտի սլատառէր :

Գլխիս հագել էի մի ահագին մեծութեան եւ անճոռնի ձեւով դրդակ այծեամի կաշիից կարած. շինքիցըս կախ ընկած էր այծեամի կաշի, որ պաշտպանում էր վիզս անձրեւից ու տօթից. վարտիքըս, կարճ վերարկուս եւ անձեւ կօշիկներըս նմանապէս պատրաստած ու կարած էին այծեամիներու կաշիէ. կաշեայ գօտիիցըս փոխանակ սուրի կամ թուրի կախել էի մի խարտոց ու մի կացին. մի ուրիշ կաշեայ փոկ կախ տուել էի վզիցըս դէպ'ի ձախ կողմըս ընկած, որի ծայրից պընդացրած էին երկու հատ սլարկ՝ մինը վառօդով եւ մյուսը կարմրեայ դընդակներով լցրած, քամակիցը կախել էի՝ մի սապատ. ուսիս հրացան առած եւ գլխուս վրայ մի կոպտատարազ եւ անհետիւտ հովանոց : Այս էր իմ զէնքը ու զարդը : Դէմքըս նմանապէս բաւական ծիծաղաշարժ էր. մօրուսըս եւ



պէխերըս երկար ժամանակ չ'սափրած գոլով՝
անասելի երկայն էին եւ սարսեցուցիչ հայե-
ցուած տալիս էին ինձ :

Երբ-որ հասայ կղզիիս ծայրը՝ խիստ
զարմացայ տեսնելով որ՝ ծովը միանգամայն
խաղաղ էր. բայց սուսեւ զարմացայ, երբ-որ
հետքը անգամ չի գըտայ այն երեւելի հոսան-
քին, որ ինձ ակներեւ մահից ազատեց : Երկար
մըտածելով վերջապէս այն եզրափակութեանը
տէրայ, որ այն հոսանքը պէտք է ծովի խաղաց-
քին առգրել. ուրեմն յոյս ունեցայ մի օր նաւա-
կըս բնակարանիս մօտ բերել. բայց յիշելով այն
վտանգը, որից մեծ դժուարութեամբ աղա-
տեցայ՝ իսպառ թողի այդ ցանկութիւնը : Սի-
այն թէ երբեմն երբեմն նըստում էի նաւակ ու
երկու քարընկեցի չափ հեռանում էի սփից :



Գ Լ Ո Ի Խ 25.

=

Միւս օր ուղում էի նաւակիս մօտ գնալ, յանկարծ ճամբումը գետնի վրայ պարզ տեսայ մարդու ոտի հետք. իսկոյն կանգնեցայ տեղումըս ասե՛ս թէ կայծակով խրված կամ թէ գերբնական տեսիլքով ապշեցած : Չորս ստոյտըս նայեցայ, ուշադրութեամբ ականջս ամէն կողմ դարձրի, բայց ոչինչ չ'տեսայ եւ չ'լսեցի : Յետոյ գնացի ծովի ափը, բայց այն տեղէլ մարդու հետք չ'գտայ :

Չ'իմանալով ի՛նչ կարծեմ այս հանգամանայ վրայ՝ սլլայլած եւ շփոթած դարձայ դէպ'ի բնակսրանըս. իւրաքանչիւր քայլափոխիս յետ

էի նայում ու ճամբուն պատահած թուփերը
թշնամի էր ձեւայնում ինձ վրդոված երեւա-
կայութիւնը :

Եամանակըս չ'կորցրած գընացի ապաս-
տանեցայ բերդիս մէջ, ու ամբողջ գիշերը
սչքըս չ'կարողացայ փակել: Սէկ կարծում
էի, որ սյն հետքը սատանայինն է. բայց աւել
սռողջ մըտածելով՝ հերքում էի սյդ խելա-
ցնոր կարծիքը. ուրիշ միտքեր աւել սարսափելի
ու աւել ճշմարտանրման գալիս էին գլխիս :
Ես արդէն կարծում էի, որ հակառակ քամի-
ները մարդակեր վայրենիներուն բերել ու ձրգել
են կղզիիս մէջ, որոնք տեսնելով նաւակըս՝
կարծել են որ կղզին մարդաբնակ է, ու սյդ
պատճառաւ շատ մարդակերներ հետերը առած՝
եկել են աւերել ու կողոպտել իմ բնակարանը:
Վերջապէս ես երեւակայում էի, որ արդէն
ընկել եմ նոցա ձեռքը, որ նոքա ինձ մորթել են
ու իւրանց բարբարոսական զուարճութեանը հա-
մար պատրաստել են: Սյս սարսափելի խորհր-
դածութիւններով պատած՝ չ'էի իմանում թէ ինչ
ձեռնարկեմ: Սի մարդու ստուերը, նորա մի
հետքը ձրգեց ինձ մահառիթ երկիւղի մէջ. ես
որ քանի մի օր առաջ դառնապէս ամսոսում

էի մարդկութեան ցեղից սյսալէս զատուելուս
համար, եւ մի մարդ տեսնելն փոխանակ յու-
սահատութեան՝ անսայման ուրախութիւնս սլիտի
պատճառէր: Այս խորհրդածութիւները կամաց
կամաց հանդրատացուցին ինձ. բաց'ի դորանից
այս եւս միտք արի թէ՛ շատ կարելի է որ ես
ինքըս անցած լինիմ այդ տեղերից, ուրեմն
այժմ իմ սեպհական հետքը ինձ սարսափեցուց:
Այսպէս ինքըս ինձի քաջալերելով դուրս-եկայ
սպաստարանիցըս, ուր-որ ամբողջ երեք օր
փակուած մնացել էի. ջուրըս հատել էր. այ-
ծեամներըս-էլ երկար միջոց չի կթած մընացել
էին, որով խեղճերը շատ սլիտի չարչարուած
լինէին:

Ահով դողով նորից դնացի այն տեղը.
բայց երբ-որ փորձեցի եւ տեսայ որ՝ վերը յի-
շած հետքը իմ ոտի հետքից անհամեմատ
մեծ էր՝ առաւել զարհուրած, քանթէ չորս օր
առաջ՝ յետ-դարձայ դէս'ի բնակարանս եւ բոլոր
մարմինըս դողդրղում էր՝ ինչպէս-որ տենդի
ժամանակ: Ինչ վնաս, մտածեցի ինքըս ինձի,
որ վայրենիները երբեմն երբեմն գալիս են այս
տեղ, կղցիս զուարճալի ու սլրտղաբեր է, ուրեմն
զարմանալի բան չէ՛, եթէ նոքա հազարից մէկ

այցելութիւն են անում: բայց այդ այցելութիւր
ինձ համար վտանգաւոր է. իմ բնակարանը
ամէն կողմից ծածկած է. ուրեմն ես կարող եմ
այնտեղ խաղաղ եւ անվրդուլ կեանք անցնել.
բայց եւ այնպէս սկսեցի մի նոր ցանկապատ
շինել հողապատիս չորս կողմը. իսկ հողապա-
տըս ստուարացրի մինչեւ տասը ոտնաչափ. նորա
զանազան կողմերումը հինգ ծակ բացի այնքան
ընդարձակ, որքան-որ պէտք էր նոցա մէջ թելըս
արձակ մըտցնելու ու դուրս-հանելու համար.
նոցա մէջ թնդանօթներու տեղ՝ դրի հինգ հատ
պատրուգաւոր հրացան, այնպէս որ՝ երկու բո-
պէի մէջ կարող էի թշնամեացրս դէմ ամէնն-էլ
նետել: Բնակարանիս, բերդիս ու հողապատիս
չորս կողմը մի նոր ցըցապատով պատեցի. այս
վախճանին տընկեցի նոցա շուրջը մի ազգ
ուռիի, որ վեց տարիից այնպէս թաւախիտ եւ
անթափանցելի դարձաւ, որ այնուհետեւ ոչ ոք
չ'էր կարող մըտածել թէ՛ նորա մէջ կայ բնա-
կութիւն կամ մի արարած :

Մի եւ նոյն ժամանակ այժեամներըս-էլ
անվտանգ պահելու համար հողս տարի. այս
նպատակով անտառիս զանազան կողմերումը
մակաղներ շինեցի՝ ուր հինգ-հինգ, վեց-վեց

այծեամներ տեղաւորեցի այնպէս որ՝ եթէ թշնամիները մինը աւերէին, միւսը անվնաս պիտի մընար :

Յանկանալով ցանկանում էի աղօթք անելու, բայց փորձը ինձ սովորեցուց որ՝ անհանգրստութիւնը, շփոթը շատ անգամ արգելք են լինում ջերմեռանդ աղօթելու, ինչպէս-որ շատ հիւանդութիւններ կան, որոնք նաեւ վերջի տագնապի ժամանակ չ'են թողնում հոգեվարքին՝ ի բոլոր սրտէ զղջալու եւ ապաշխարելու :



Գ 1 ՈՒ Խ 26.

=

Միայն մի հատ հետքը ինձ ստիպեց այսփան ժամանակ անխոնջ եւ անընդհատ աշխատելու. ամբողջ երկու տարի անդադար երկիւղի մէջ էի, երբ-որ մի օր սովորականից աւել հետու ճանապարհորդելով՝ հասայ մի կողմ, ուր մինչեւ այն ժամանակ ոտըս դրած չ'էի. յանկարծ ինչ եմ տեսնում առաջիս,—գետնի վրայ ուր-ասես ցրիւ ընկած մարդու գանգեր, ձեռներ, ոտեր եւ ուրիշ ոսկորներ եւ նոցա մօտ խարոյկից մնացած շիջած խանձողներ, աճիւն, ածուխ, ևն. եւ մի բոլորշի հողէ նըստարան, որի

վրայ անշուշտ նստած պիտի լինէին վայրենիները
իւրեանց բարբարոսական խընջոյքը կատարելու
համար : Իսկոյն փախայ սոյդ տեղից. բայց նոյն-
հետայն շուարած կանգնեցայ. ասե՛ս թէ արիւ-
նըս սառեցաւ երակներուս մէջ : Արբ-որ կա-
մաց-կամաց խելքըս վրաս եկաւ՝ ՚ի բոլոր սըր-
տէ գոհացայ Աստուծոյ, որ նա նաւաբեկութե՛ն
ժամանակ ինձ ձրգեց կղզիի այն կողմը, ուր-որ
ես բնակութիւնըս հաստատեցի, եւ ոչ այս տե-
ղերումը, սրտաճառ-որ ինչպէս նկատեցի այժմ՝
մարդակերները գալիս են իմ կղզի ոչ այլ ինչ
պատճառաւ, բայց եթէ իւրեանց խընջոյքը կա-
տարելու : Այս մակաբերութիւնը ինձ միանգա-
մայն հանգըստացուց : Տասնըութը տարի ան-
վտանգ ապրելից յետ՝ յոյսըս Աստուծոյ վրայ
գրրած՝ կարող էի էլի ապրել սոյնտեղ :

Բայց այս սարսափելի տեսարանը երկար
ժամանակ ինձ խորին մըտածողութեան եւ
տխրութեան մէջ ձրգեց . շատ ճիգ արի,
մինչեւ որ կարողացայ սովորական կեանքըս
վարել :

Չէի համարձակում հրացանըս նետելու,
եւ եթէ հաղիւ երբէք կրակ էի վառում՝

սյդ-էլ մեծ զգուշութեամբ էի անում, վա-
խենալով որ՝ չ'լինի թէ մուկը տեսնելով դէ-
պի ընակարանըս գան, ուստի շատ ածուխ
սլատրաստեցի, եւ փոխանակ փայտի միշտ այն
էի գործ ածում, երբ-որ պէտք էր լինում
հաց եփել կամ մի ուրիշ կերակուր պատ-
րաստել:



Գ Լ Ո Ի Խ 27.

=

Երբ-որ մի օր ծառի ճուղեր էի կրտ-
րում ածուխ շինելու համար՝ մի ժայռի ետեւ
տեսայ մի քարանձաւի մուտք: Հետաքրքրու-
թիւնըս շարժեց նորա մէջ մըտնելու, եւ հա-
ղիւ թէ մըտել էի ներսը՝ իսկոյն լեղասպտառ
դուրս-փախայ մէջից: Այս երկիւղիս պատճառը
այն էր որ՝ մութ քարանձաւումը տեսայ աստղի
պէս երկու փայլուն աչքեր: Այլայ քիչ միջոց
անցնելից յետ ամօթըս եկաւ, որ այդպէս վախ-
կոտ եմ, ուստի ձեռիս մի վառած փայտ առած՝
նորից ներս մըտայ. բայց հաղիւ թէ երեք քայլ
առաջ էի գնացել՝ երկիւղըս կրկնասպտիկ

աւելլացաւ. յայտնի լսեցի ծանր եւ խորին հառա-
չանք, եւ յետոյ անորոշ եւ աննշանակ խօսքեր,
եւ յետոյ նորից մի հառաչանք՝ աւելլ բարձրա-
ձայն եւ աւելլ սարսափելի: Պաղ քրտինքը
իջաւ երեսիս վրայ, դլխիս մազերը տէգ տէգ
կանգնեցան. բայց ինքըս ինձի քաջալերեցի՝
միտըս բերելով Աստուած, եւ յուսալով նորա
ամբաւ ողորմութեան վրայ, որ մինչեւ այս օր
աղատել էր ինձ ամէն կերպ փորձանքներէ եւ
վտանգներէ: Փոքր ինչ առաջ գնացի եւ ինչ
տեսնեմ. մի ահագին այծեամ մահուան մօտ
ծերութիւնից՝ սլառկած էր գետնի վրայ: Բանը
տեղեակ իմանալով՝ միամիտ եղայ, եւ միւս օր
միտըս դրի գնալ եւ ուշադրութեամբ զննել քա-
րանձաւը: Եւ յիրաւի՝ հետըս ճրագ առած
եկայ: Այս անգամին լաւ զննեցի քարայրը եւ
իմ կարեացը շատ յարմար գըտայ, պատ-
ճառ-որ նորա ներսը խիստ լայն եւ ընդարձակ
էր, եւ առաստաղը ութը աստիճան բարձրու-
թիւն ունէր: Ամէն կողմից պատերը ճրագի
լուսով հազար ու մէկ գոյներով ցօլացին, չ՛գի-
տեմ ինչ էին այդ փայլուն առարկաները՝ անդա-
մանդ, թանկագին ակեր, թէ ոսկի: Ինչ եւ
իցէ՛ քարայրը ինձ շատ դիւր-եկաւ. չոր ու

Հարթ յատակը մանր խիճով էր ծածկած. պատերի վրայ ոչ մի վնասաբեր արտաշնչութեան կամ խոնաւութեան նշան չ'կար, եւ մէջը ոչ մի թիւնաւոր սողունի հետք չ'էր երեւում. միայն մի անյարմարութիւն էի տեսնում,—այդ մուտքի նեղութիւնն էր. բայց այդ-էլ ունէր իւր լաւ կողմը, ի՞նչ դորանով ասպահոված էր քարայրը: Այս գիւտը ինձ չափազանց ուրախացուց. իսկոյն բերի եւ այս քարայրի մէջ պահեցի բոլոր հարկաւոր առարկաներըս, եւ մանաւանդ զէնքերըս:



Գ Լ Ո Ւ Խ 28.

=


Այսպէս քսան երեք տարի անցուցի կղզիս մէջ եւ այնքան ընդերացայ այս կերպ կենցաղավարութեան, որ ուրիշ բան չ'էի ցանկանում, քայց եթէ կենացս բոլոր մնացորդ օրերը այնտեղ անցնել՝ պատած ամէն հարկաւոր եւ օգտաւետ պարկաներովս. շանրս եւ թութակիս ընկերակցութիւնը ինձ մեծ զուարճութիւն էր տալի. վերջապէս մըտադիր էի մինջեւ վերջին օրը անցնել քարայրիս մէջ. նա՛ եւ երջանիկ կարող էի համարել ինքրս ինձի, եթէ վայրենիները երբէք չի շփոթէին իմ խաղաղ կեանքը.

բայց երկինք ուրիշ վճիռ էին արել իմ վիճակին :

Մի օր Սեպտեմբերի ամսին (որ հունձի սովորական ժամանակն էր) արեւը ծագելիս ես զարմացայ՝ կէս մղոն հեռու ինձանից տեսնելով ծովի ափին մի սայծառ լոյս : Մեծ տազնապի մէջ ընկայ, երբ-որ իմացայ թէ՛ վայրենիները եկել հասել են կղզիիս ափը՝ ոչ այնքան հեռու բնակարանիցրս : Հտապով գրնացի բերդըս, լցրի բոլոր հրացաններըս եւ պատրաստացայ պատերազմի : Երկու ժամ անընդհատ ունայն սպասելով՝ ձանձրացայ այս անձուկ տազնապովը, ուստի բարձրացայ ժայռի վրայ, երեսիս վրայ պռոկեցայ գետնին ու հեռազխտակով տեսայ ինը մարդակեր վայրենի՝ մի վարդիկ խարոյկի շուրջ նըստած. ըստ երեւութիւն նորքա սպասում էին ջրի տեղատուութեանը, ոչ յետ դառնան իւրեանց տեղը : Երբ-որ սկսեց տեղատուութիւնը՝ նորքա նըստան իւրեանց նըստակների մէջ ու թիավարելով դնացի ճառացան :

Երբ-որ նորքա աներեւութացան աչքէս՝ առի զէնքըս ու եկայ ծովի ափը, ուր-որ քիչ ժամանակ առաջ վայրենիները դուարձանում

ու պար դալիս էին : Այս անգամին-էլ, ինչպէս եւ առաջ, դեռնի վրայ ցրուած կեցել էին նոցա բարբարոսական խրնջոյքի նշանները : Այս տեսարանով այնպէս շփոթեցաւ երեւակայութիւնըս, որ երազումըս ուրիշ բան չ'էի տեսնում, բայց եթէ աւերմունք ու արիւնահեղութիւն : Ի վերայ սյսր ամենայնի՝ տասնըՏինգ ամիս անցաւ, ու սյդ միջոցին ես ոչ մի անգամ չ'տեսայ մարդակերներուն :



Գ Լ Ո Ւ Խ 29.

=

Մայիս ամսի մէջ մի գիշեր՝ սարսափելի փոթորիկ բարձրացաւ. ծովի կողմից թնդանօթի որոտմունք հասան ականջիս: Իսկոյն բարձրացայ ժայռի վրայ, որ տեսնեմ թէ ինչ է. յանկարծ տեսայ լոյս եւ երկրորդ անգամ լսեցի թնդանօթի որոտումը: Արծելով թէ մի նաւ վտանգի մէջ է՝ ես իսկոյն մի բլուրի վրայ ահագին կրակ վառեցի: Արրորդ որոտումը եւ նորանից յետ շատ ուրիշները լսուեցան մի եւ նոյն կողմից: Ամբողջ գեշերը անշէջ պահեցի խարոյկը: Իրւսագէտին վաղեցի ծովի ավի

եւ սիրտըս տրոր տրոր եղաւ վշտից, երբ-որ տեսայ մի նաւ, որ գիշերըս խրփուել էր ժայռին ու ջարդուել էր: Յանկանալով ցանկանում էի, որ այս նաւաբեկութիւնից գոնէ մի անձն ազատուած լինէր. երբէք առանձնութիւնը ինձ այնքան անտանելի չ'էր թուել, որքան-որ այժմ:

Մի քանի օրից յետ ծովի ալիքը ափը ձըգեցին մի երիտասարդ նաւաստիի մարմինը: Ինչ չ'էի տալ, եթէ հնար լինէր շունչ տալու այս անշնչացած մարմինին: Ծովը խաղաղ էր. հետաքրքրութիւնըս չարչարում էր ինձ տեսնել այս խորտակած նաւը: Ծովի մակընթացութեանը եւ տեղատուութեանը տեղեակ գոլով՝ փորձ փորձեցի մօտենալ նաւին. եւ յիրաւի որ ուղիղ երկու ժամից նաւակի մէջ նըստած՝ հասայ նորան: Քըստըմնելի տեսարան բացուեցաւ աչքիս առաջ: Նաւը, որ ըստ երեւութիւն Սպանիական էր, ասե՛ս թէ շղթայած կապուած էր ժայռերու մէջ, եւ ըստ մեծի մասին ջախջախուած: Նորա մէջ ընկած էին մին մինի գրկած երկու խեղդուած մարդ. ոչ մի կենդանի էակի հետք չ'էր մնացել բաց՝ի մի փոքրիկ շունից, որ սովից միանգամայն թուլացած

էր. դորա հետըս առի : Մաւակիս մէջ դար-
սեցի շատ արկղներ, մի տակառիկ պոյտերով
լցրած, մի մեծ վառօղաման, մի կաթսայ, մի
սրճաման, ու տեղատուութեան ընթացքով յա-
ջողութեամբ կղզիս հասայ : Այս նոր աւարն-էլ
տարի քարայրիս մէջ : Արնդուկների մէջ գլտայ
քանի մի հատ զգեստներ, կտաւիք ու մի նշա-
նաւոր գումար փող :



Գ Լ Ո Խ Խ 30.

=

Նորից սկսեցի սովորական կեանքս վարել. բայց այս առանձնութիւնից ազատուելու իղձըս երբէք մըտքիցըս չ'էր դուրս դալի, կամ գոնէ այդ դառը վիճակի մէջ մի ընկերուհիներս մեծապէս պիտի մխիթարէր ինձ : Վերջի կարօտութիւնըս այնքան սաստկացել էր որ՝ միտքըս դրի մի վայրենի ձեռք ձրդել, թէ եւ դորանով մեծ վտանգ-էլ դալու լինէր գլխիս : Ամէն օր գընում ու սլտորտում էի արկածքներ. մարդակերներու հետ հանդիպելը այժմ ինձ այնքան ցանկալի էր, որքան-որ առաջները սարսափելի :

Այսպէս առանց պատահմունքի տասնը-
ութը ամիս անցնելից յետ՝ մի օր յանկարծ
ծովի ափին տեսայ վեց հատ նաւակ, որոնց
մէջից վայրենիները ցամաք էին իջել: Այս բազ-
մութիւնը միանգամայն շփոթեց իմ՝ յուսալի
ակրնկալութիւնը, պատճառ-որ՝ եթէ ամէն մի
նաւակի մէջ միջին թուով վեց-վեց մարդ նըս-
տած լինէին՝ ուրեմն ես մենակ սլիտի պատե-
րազմէի երեսուն վեց հոգու հետ, որ բնակա-
նապէս վեր էր իմ զօրութիւնից:

Բայց մի քանի ըրպէ մըտածելով՝ աներ-
կիւղ պատրաստեցայ արիւնահեղ կռուի. բայց
աշխատեցայ այնպէս կանգնել որ՝ բոլոր մար-
մինրս պաշտպանած լինէր մարդակերների ղէն-
քից: Սձտ երեսուն վայրենի ծիծաղելի շարժու-
ածքով թռչտում ու պար էին դալի խարոյկի չորս
կողմը: Քանի ըրպէից յետ նաւակից քարշելով
դուրս-հանեցին երկու թշուառական, առաջինին
տեղն՝ ի տեղ մորթեցին, երեք վայրենի պատառ
պատառ արին նորա ու մարմնոյ կտորները պատ-
րաստեցին իւրեանց բարբարոսական խընջոյ-
քի համար: Այս միջոցին երկրորդ թշուառա-
կանը փոքր ինչ աղատ դուրով՝ յոյս ունեցաւ
ինքը իրան փրկելու, ու զօրութիւնը հասածի

չափ սկսեց վազել ծովի ափովը, որ հանում էր դէպի իմ բնակարանը :

Առաջ ու առաջ ես խիստ վախեցայ. բայց յետոյ փոքր ինչ հանդարտեցայ, տեսնելով որ նորա ետեւից միայն երեք մարդ ընկան վազելու, եւ փախրստականը առաւել եւ առաւել հեռանում էր նոցանից : Իմ բնակարանը հասնելու համար՝ տարաբախտը պիտի անցնէր մի փոքրիկ ծովածոց. այդ արգելքը նորան չի սարսափեցուց. չհայելով ջրի խորութեանը՝ ընկաւ նորա մէջ ու լող-տալով անցաւ նորա միւս ափը, եւ առաջուայ պէս արագութեամբ վազում էր : Ընդհակառակն նորա հալածողները կասեցան ափի մօտ. նոցանից մինը յետ-դարձաւ, իսկ մնացած երկուսը ընկան լող-տալու, բայց գրեթէ երկպատիկ կամաց եւ դանդաղ քանթէ կալանաւորը :

Աղձմտանքըս ինձ ասում էր թէ՛ ես սարտաւոր եմ փրկելու այս թշուառականի կեանքը. իսկոյն ցած-իջայ ժայռից, առի հետըս երկու հրացան, զնացի ու կանգնեցայ հալածողների ու փախրստականի մէջ տեղը. ձեռերիս շարժուածով ու աղաղակովս իմաց-տալիս էի նոցա կանգնել տեղերումը. բայց ինչպէս



Նկար՝ Յ. Պատկանեան.

Ռօրինչօնը Ռւրբաթի կեանքը աղատու՛մ է.

որ նկատեցի՝ փախըստականը ինձանից առաւել վախենում էր քան թէ հալածողներից: Այս արիւարար յարձակեցայ հալածողներից մինի վրայ ու հրացանիս կոթով տեղն՝ ի տեղ սպանեցի. երկրորդը այս տեսներով՝ կանգնեցաւ, սլատրաստեց աղեղը, որ նետով սպանէ ինձ. բայց ես նորա յառաջեցի ու հրացանըս նետելով՝ նորան-էլ սպանեցի: Ատեղճ փախըստականը թէ եւ իւր թշնամիներից ազատուած տեսաւ անձը, բայց այնքան զարհուրած էր հրացանիս կրակից ու որոտաձայն հրն չիւնից, որ անշարժ մնացել էր տեղումը, եւ նորա այլայլած դէմքից ես նկատում էի աւել փախչելու, քան թէ ինձ մերձեւնալու ցանկութիւն: Հազար ու մէկ նշաններով ես նորա հրամայում էի ինձ մօտենալու. բայց նա երկար ժամանակ տարակուսելով՝ վերջապէս վստահեցաւ մօտենալու, եւ իւր երախտագիտութիւնը ցոյց-տալու համար՝ ամէն տասը քայլափոխին ծունր էր դնում: Աւ երբ-որ միանգամայն մօտըս հասաւ՝ ծունր դրեց առաջիս ու երկրպագութիւն արաւ ինձ, բարձրացուց ոտըս ու դրեց գլխու վրան, որով, ինչպէս ես հասկացայ, կամենում էր ցոյց-տալ իւր հաւատարմութեան երդումը: Նայց բանը դեռ եւս

միանգամայն չ'էր սրծել, պատճառ-որ՝ առաջի վայրենին չ'էր սպանած, այլ միայն փոքր ինչ ուշաթափ էր եղել սաստիկ հարուածից: Այս պարագան ես նշանով իմաց արի իմ ստրուկին, որ մի քանի անհասկանալի խօսքեր արտաբերելից յետ՝ սուս թուրըս ու մի հարուածով թոցրեց թշնամիի գլուխը:

Երբ-որ այս թեթեւ պատերազմը վերջացուց՝ թռչտելով դարձաւ դէպ'ի ինձ, ու ինչպէս երեւում էր՝ այս յաղթութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց նորան:

Իսկոյն տարի հետըս իմ քարայրի մէջ ու խոնջացեալ մարմինը կազդուրելու համար՝ տուի նորան հաց, խաղող եւ ջուր. սովը եւ հող-նութիւնը չարաչար տանջել էին խեղճին: Աշտանալից յետ՝ մատով ցոյց-տուի նորան մի յարգալից անկողին եւ հրամայեցի փոքր ինչ պառկել եւ հանդըստանալ նորա վրայ:



Գ Լ Ո Ւ Խ 31.

=

Այս նոր ընկերակիցըս բարձրահասակ, պընդակազմ եւ քսան հինգ տարեկանի մօտ մատաղահաս երիտասարդ էր: Մարմնոյ կազմուածքը ցոյց էր տալի մեծ ոյժ եւ արիութիւն՝ առանց վայրագ կատաղութեան. նորա ժպտը քաղցր եւ հաճելի էր, մազերը երկայն եւ թուխ, ճակատը բարձրադիր, աչքերը կրակի նման ցոլուն, բերանը գեղեցիկ, ատամները սիրուն շարուած ու փղոսկրի նման սպիտակափայլ:

Աէս ժամ քնելից յետ՝ դուրս-ելաւ քարայրից ու եկաւ իմ մօտ, որ այն միջոցին այժեամբերից կաթ էի կթում: Ամէն կերպ նշան-

ներով ցոյց-տուեց առաջուայ նման թէ՛ այսու-
հետեւ ուրախութեամբ պատրաստ է ինձ յա-
ւիտեան հլու եւ հնազանդ լինելու: Աս-էլ իմ
կողմանէ կարողացածիս չափ հասկացրի նորան,
որ ես շատ բաւական եմ նորանով: Աթի մէջ
բրդեցի հաց ու տուի նորա ուտելու, եւ այս
կերակուրը նորան շատ դիւր-եկաւ:

Հատ չ'անցաւ վրայ, որ ես սկսեցի նորա
հետ խօսել: առաջ ու առաջ նորա հասկացրի
որ՝ այսուհետեւ նորա անունը Ուրբաթ պիտի
կոչուի՝ ՚ի յիշատակ ուրբաթ օրուայ նորա ազա-
տութեանը: Աս-էլ իւր կողմանէ սովորութիւն
արաւ ինձ «պարոն» անուանելու, եւ պէտք
եղած ժամանակը կարողանում էր այդ կամ ոչ
ասել անգլիերէն:

Հատ ուրախացաւ Ուրբաթը, երբ-որ ես
խոստացայ նորան հագնելու շորեր տալ. ինչպէս
նկատում էի՝ մերկութիւնը նորան շատ հաճելի
չ'էր, թէ՛ եւ ՚ի ծննդենէ մինչեւ այն օր չ'գիտէր
հագուստի գործածութիւնը ու կարիքը: Արբ-որ
պատահամբ անցանք այն տեղից, ուր-որ թա-
ղած էին երկու սպանած վայրենիները՝ Ուր-
բաթը նշանով ինձ իմաց էր տալի թէ՛ պէտք
է հանել փոսից եւ ուտել: Այս բանը լսածիս

պէս՝ եւ խոժոռացուցի դէմքըս, ու ցոյց-տուի նորա թէ՛ բարկացած եմ, եւ հրամայեցի անյապազ հեռանալ այդ տեղէն: Մա առանց դիմադարձութեան կատարեց հրամանըս:

Յետոյ գնացինք խընջոյքի տեղը, որ ոսկորներով, կիսակեր մներով ու բարբարոսական հացկերոյթի ամէն կերպ քրատըմներէ նշաններով ծածկած էր: Դողի ու սարսափի մէջ ընկաւ բոլոր մամինըս. նշաններով իմաց-տուեց ինձ Ուրբաթը, որ երեք վայրենի դերի զոհ եղան այն օր, եւ ինքը չորրորդն էր, որ նմանապէս կրելու էր նոյն վիճակը:

Հրամայեցի Ուրբաթին հաւաքել այս թշուառներու մնացորդը, վառել մի մեծ խարոյկ ու այրել նորա մէջ: Նկատեցի որ՝ ըստ-րուկիս սիրտը խիստ ուզում էր այս մսի կտորտանքից փոքր ինչ ուտել. բայց եւ խըստութեամբ արգելեցի նորան այս խուժադուժ կերակուրը, եւ նա չ'համարձակեցաւ հրամանիցըս դուրս-գալու:

Նորք-որ տուն դարձայ՝ հոգս տարի Ուրբաթի հագուստի մասին. տուի նորան կտակէ վարտիք, կաշիէ բաճկոնակ ու գդակ, որ ամէ-

նը իմ ձեռքով ու բաւականին սիրուն կարած էին : Խիստ ուրախացաւ, երբ-որ տեսաւ իրան հազնուած այնպէս, ինչպէս որ նորա տէրն էր ցո՛ւն ես, եւ շուտով ընդելացաւ այդ նոր փոփոխութեանը :

Երբ-որ երեք-չորս օր միասին կեցանք՝ ես կամեցայ դարշեցնել նորան մարդու միս ուտելից ու այդ վախճանին միտըս դըրի կենդանեաց մըսի ճաշակ տալ նորան. տարի փարախըս եւ այնտեղ հրացանովս մի փոքրիկ այծեամ սպանեցի : Խեղճ՝ Ուրբաթը տեսնելով որ ես հեռուից կարողանում եմ սպանել՝ բոլոր մարմնով սկսեց դողալու. հրացանիս ներգործութիւնը նորա համար նոր իմն հրաշք էր թուում : Խակոյն բացեց բաձկոնակը ու սկսեց մարմինը շփել՝ վիրաւորած չէ՛ արդեօք. յետոյ ծունր դրեց առաջիս ու երկայն բարակ ճառեր ասաց, որով — ինչպէս կարծում էի — աղաչում էր որ իրան-էլ չ'սպանեմ : Ես միամըտացրի նորան ու հրամայեցի վեր-առնել սպանած այծեամը : Այդ միջոցին նորից լցրի հրացանըս ու սպանեցի մի թուլթակ. Ուրբաթը չի տեսաւ լցրածըս, եւ կարծում էր թէ՛ հրացանիս մէջ անհատական զօրութիւն կայ սպանե-

լու. եւ եթէ թոյլ տայի՝ նա անշուշտ երկրպա-
գութիւն սխտի տար թէ՛ ինձ եւ թէ՛ հրա-
ցանիս :

Նոյն երեկոյին քերթեցի այժեամի կաշին,
միսը կտոր կտոր բաժանեցի ու նորա մի մասը
եփեցի : Ափած մսից տուի Ուրբաթին, որին
շատ դիւր-եկաւ այն : Միւս օր ուտեցրի նորան
խորոված միս. իմ բաժինը կապեցի մի չուանի
ծայրին ու հրամայեցի Ուրբաթին որ կրակի վրայ
պտուտ-տայ : Արբ-որ այդպէս խորոված մի-
սից-էլ կերաւ նա՝ հազար ու մէկ ծիծաղելի
շարժմունքով կամենում էր ինձ հասկացնել որ
խիստ համով է այդպէս պատրաստածը, ու
այնուհետեւ խօսք տուեց ամենեւին մարդու
միս չ'ուտել :

Որովհետեւ այժմ ես երկու փոքր սխտի
կշտացնէի՝ ուստի ընտրեցի մի ընդարձակ դաշտ
ու սկսեցի նորա վարել Ուրբաթի հետ, որ
իւր բոլոր զօրութիւնը հասածի չափ օգնում
էր ինձ : Մի եւ նոյն ժամանակ հոգս էի անում
նորա խօսել սովորեցնելու, ու նկատեցի որ
խիստ ժրաջան էր նա եւ այդ գործումը :
Արբ-որ սկսեցինք կամաց կամաց միմեանց հաս-

կանալու՝ Ուրբաթի ուրախութիւնը չափ չ'ունէր՝
ես-էլ իմ կողմանէ մեծ զուարճութիւն զգացի,
երբ-որ գտայ մի բանաւոր անձն, որին կարո-
ղանում էի հաղորդել մտացրս գաղափարները:
Ուրբաթը քընքոյշ սիրով սիրեց ինձ, ես-էլ
նմանապէս սերտ բարեկամութեամբ կապուեցայ
նորա հետ :



Գ Լ Ո Ի Խ 32.

=

Երբ-որ Ուրբաթը սկսեց ասածըս հասկանալու՝ մի օր ուղեցի իմանալ, կարօտե՛լ է արդեօք նա իւր հայրենիքը, ու սկսեցի նորահետ այսպէս խօսելու. «Մի՛թէ երբէք չի պատահել որ՝ քու հայրենակիցք կուուի մէջ յաղթող դուրս գան:» Ուրբաթը ինձ ժրպտալով պատասխան տուեց.— Հա՛, մենք միշտ լաւ կուուել:— «Թէ որ այդպէս է՝ ասպա ինչո՞ւ դու գերութիւն ընկար:»

— Իմ հայրենակիցներ շատ կուուել համար: — «Իսկ ինչպէս քեզ գերութիւն առին:» — Նոքա շատ շատ քան թէ իմ

Հայրենակիցներ, ուր ես լինեմ: Իմ հայրենակիցներ յաղթել նոցա ուրիշ տեղ, ուր ես չ'լինեմ: Այնտեղ իմ հայրենակիցներ բռնեմ մէկ, երկու, շատ հազար: —

Ես. ինչո՞ւ բու հայրենակիցները քեզ չ'ազատեցին թշնամիների ձեռքից:

Ուրբաթը. Նորբա բերել մէկ, երկու, երեք եւ ինձ նաւակի մէջ. իմ հայրենակիցները ամենեւին նաւակ չի կայ:

Ես. Աստ, խնդրեմ, ինչ են անում քու հայրենակիցները բռնած գերիներուն: Ուտո՞ւմ են նմանապէս, թէ ոչ:

Ուրբաթը. Հայ. իմ հայրենակիցները նմանապէս մարդ ուտել, ամենեւին ուտել:

Ես. Ո՞ւր են տանում նոցա ուտելու համար: Ուրբաթը. Ամէն տեղ տանել, ուրտեղ լաւ գըտնել:

Ես. Այստեղ-էլ երբեմն բերում են:

Ուրբաթը. Հայ. այս տեղ եւ շատ տեղ:

Ես. Այս տեղ-էլ եկել ես:

Ուրբաթը. Հայ, ես այս տեղ գալ, ասաց նա ցոյց-տալով կղզիիս հիւսիսա-հարաւային կողմը:

Մի քանի ժամանակից յետոյ նորա հետ

այն կողմով անցնելիս՝ Ուրբաթը ճանաչեց այնտեղը, ուր-որ նոքա եկել էին մեծ խընջոյք կատարելու համար, ու պատմեց ինձ որ՝ այն օր նա ու իւր ընկերակիցքը կերել են քսան տղամարդ, երկու կնիկ եւ մի երեխայ: Քսանից աւել չ'էր կարողանում համարել, եւ ինձ հասկացնելու համար՝ գետնի վրայ շարեց պէտք եղածի չափ մանր քարեր, եւ խընդրեց հաշուել նոցա թիւը:

Ես նորան հաղարաւոր հարցմունք էի անում մերձակայ կողմերու, երկիրներու, ծովի ու բնակչաց վրայ. կարողացած եւ իմացած խրատները տալիս էր ինձ այդ մասին. նմանապէս ասաց որ՝ հեռու հեռու իրա աշխարհից կենում են սպիտակ եւ մօրուքաւոր մարդիկ. բաց՝ի դորանից ես հարցրի թէ՛ ինչպէս պէտք է անել, որ դըտնեմ այդ սպիտակ մարդիկներուն, եւ նա ինձ ասաց որ՝ այդ խիստ հեշտ է, միայն թէ պէտք է մի մեծ նաւակ ունենալ:

Այս ամէնը ինձ յոյս տուեց մի օր հաւատարիմ՝ Ուրբաթիս օգնութիւնով այս մենաւոր կղզիից ազատուել:

Ես ամէն հնարը եւ միջոցը՝ի դործ դրում էի յարմար ժամանակին խօսակցութեան

ժամանակ նորա հոգու մէջ քրիստոնէական կրօնի սկզբունքը մըտցնելու: Մի օր ես նորան հարցրի. «Ո՞վ է ստեղծել երկիրը եւ ծովը»: Նա ինձ պատասխան տուեց որ՝ այդ ամէնի ստեղծողը Բօնաբմուքէ անունով մի ծերունի է, որի տարիքը աւել երկար են քանթէ լուսինի եւ աստեղներուն, որին ամէն արարած անուանում է Օ՛, եւ ամէն մարդ յետ իւր մահուան գնում է նորա մօտ:

Այս դիպուածը յարմար համարելով՝ ըսկսեցի նորան պատմել իսկական Աստուծոյ վրայ ամենահարկաւոր բաներ, որով ուզում էի ծանօթացնել նորան իւր Ստեղծողի հետ: Մտադրութեամբ ականջ էր դնում նա իմ պատմածը եւ ըստ երեւութին ուրախութեամբ ընդունում էր այն. մտնաւանդ Յիսուսի Քրիստոսի մեր փրկութեան համար աշխար գալն՝ չափազանց շարժեց նորա հետաքրքրութիւնը. բաց՛ի դորանից ես ցոյց տուի նորան թէ՛ ինչպէս պէտք է աղօթել Աստուծոյ, որ թէ՛ եւ երկինքումն է կենում, բայց մեր ամէն մի խօսքը լսում է:

— Ո՛հ, ասաց նա ինձ, եթէ ձեր Աստուածը այդքան բարձր տեղից լսում է, ուրեմն նա մեր աստուածից անհամեմատ մեծ եւ հզօր պիտի

լինի, ինչու-որ Բոնաբոնուբէն միայն այն ժա-
մանակ է լսում մեր խնդրուածը, երբ-որ մենք
գնում ենք սարի վրայ, ուր-որ նա կենում է:—
Այսպէս փոքր առ փոքր նորա սիրտը բացուե-
ցաւ կրօնի ամենասուրբ ճշմարտութեանցը հա-
մար: Ես անձանձիր խնդրում էի Աստու-
ածանից, որ նա օգնէ ինձ այս սրբազան գոր-
ծումը, այսինքն՝ մի կռապաշտ անձն դարձնէ
դէպ'ի ճշմարիտ աստուածալաշտութիւն. սլատ-
ճառ-որ՝ մինչեւ այն օրը ես ինքրս-էլ շատ սա-
կաւ միտք արել էի հոգեշահ գործերու եւ
խորհրդածութիւններու վրայ:

Գ Լ Ո Ի Խ 33.

=

Ահա՛ այսպէս խիստ երջանիկ կերպով երեք տարի անցուցի: Իմ սիրական Ուրբաթը հեշտութեամբ կարողանում էր հետըս աղաս խօսել: Ես նորան սլատմեցի գլխիցըս անցած ամէն սլատահմունքը, նա՛եւ այն թէ՛ ինչպէս անցուցի օրերըս կղզիի մէջ. բացատրեցի նորան թէ՛ ինչպէս կաղմուած են հրազէնները եւ ինչպէս նոքա գործ են ածվում:

Յոյց տուի նորան այն նաւակի մնացորդը, որ ես աղատել էի ալէկոծեալ նաւից: Ուրբաթ փոքր ինչ նայելով նորա վրայ՝ ասաց.— Սորա նմանը ես տեսել եմ՝ իմ հայրենակիցների

մօտ : — Յետոյ մանրամասնաբար պատմեց թէ՛ այն նաւակի մէջ տասներեօթը սպիտակ մարդ ալէկոծութիւնից աղատուած՝ հասան մեր ափը, եւ ահա՛ չորս տարի է որ՝ այնտեղ կենում են: Եւ զարմացայ ու հարցրի նորան թէ՛ ինչպէս պատահել է այդ, որ վայրենիները չ'են կերել նոցա: Ուրբաթը ինձ պատասխանեց թէ՛ նոքա մեր եղբայրներն են. մեզ չ'փնասողին մենք-էլ չ'ենք փնասում. մենք միայն նոցա իրաւունք ունինք ուտելու, որոնց կռուի մէջ գերի կ'առնունք:

Այս խօսակցութիւնից յետ շատ ժամանակ անցաւ, երբ-որ մի պայծառ օր Ուրբաթը մի բարձր բլուրի վրայ կանգնած՝ տեսաւ Ափրիկաի ցամաքը, սկսեց թռչնոտել ու պինդ պինդ աղաղակել.— Ո՛հ ո՛հ, ես տեսնում եմ իմ հայրենիքը, իմ հայրենակիցներուն:— Այս ուրախութիւնը ինձ մեծ տրխրութեան ու երկիւղի մէջ ձրգեց: Եւ վախեցայ որ՝ մի՛ գուցէ ցանկանայ նա ինձ թողնել այս առանձնութեան մէջ ու ինքը երթայ իւր հայրենի երկիրը, ու հարցրի թէ՛ մի՞թէ ուղում է դառնալ իւր առաջուայ տեղը, նորից վայրենանալ ու մարդու միս ուտել: Այս հարցմունքըս նորան խիստ

շփոթեց ու նա գլուխը շարժելով ինձ պատասխան տուեց.— Ո՛չ, ո՛չ. ես կ'սովորեցնեմ նոցա երջանիկ կեանք վարել, ճըշմարիտ Աստուծուն աղօթք եւ երկրպագութիւն անել, ու խրատ կ'տամ մարդու մսի տեղ ուտել ցորենի հաց, կաթ եւ անասունի միս. բայց աւել ուրախ կ'լինէի, եթէ դու եւս ինձ հետ դայիր այնտեղ. եթէ դու չ'ես յօժարիլ դալու՝ ես-էլ չ'եմ երթալ այնտեղ:—

Այդ մասին աւել միամիտ լինելու համար՝ ես երեսանց ցոյց-տուի, իբր թէ ուղում եմ նորա միայնակ ուղարկել իւր հայրենի աշխարհ: Այս առաջարկութիւնը մեծ յուսահատութե՛ մէջ ձրգեց խեղճ Ուրբաթին. առաւ նա կացինը, տուեց ինձ ու ասաց.— Դ՛ա՛ւ է որ այս կացինով այս բոպէիս սպանես ինձ, քանթէ մենակ ուղարկես իմ հայրենիքը:— Այս ասելու ժամանակ աչքերը արտասունքով լիքն էին ու խօսքերը այնպէս սրտաշարժ, որ ես միանգամայն միամլտեցայ նորա դէսի՛ ինձ ունեցած հաւատարմութեանը մասին: Այս խոստացայ Ուրբաթին որ՝ երբէք չ'եմ բաժանուիլ նորանից՝ ներհակ իւր կամայը:

Իսկոյն մտադիր եղայ ճամբայ ընկնել դէ-

պի այն երկիրը, ուր-որ Ուրբաթի պատմելով
կենում էին սպիտակ, ի՞նչ եւրոպացի մարդիկ.
այդ խորհրդով նորոգուեցաւ իմ մէջ ազա-
տութեան յոյսը, որով պիտի տեսնէի իմ բաղ-
մակարօտ հայրենիքը: Սամանակ չ'կորցրած՝
սկսեցի Ուրբաթի հետ միասին հարկաւոր բա-
ներ պատրաստելու: Նաւակը փորելու ժամա-
նակ ինձ շատ օգնեց նա այնպէս որ՝ մի ամ-
սուսյ մէջ միանգամայն աւարտեցինք այն. ուրիշ
երկու շաբաթ-էլ գործածեցինք ձողերով ու
լծակներով մինչեւ նորա ջուրը հասցնելը:
Նմանապէս մի կայմ պընդացրի նաւակի մէջ
տեղը եւ կայմի վրայ մի եռանկիւնի առագաստ,
եւս եւ մի խարիսխ եւ պարան. բայց ինձ
ոչինչ այնքան չ'չարչարեց, որքան ղեկը,
որի վրայ գրեթէ նոյնքան ժամանակ գործա-
ծեցի, որքան որ նաւակի:



Գ Լ Ո Ի Խ 34.

=

Գորանից յետ մօտ երեք ամիս զբազաճ էի առագաստ, զեկ, կայմ եւ ուրիշ հարկաւոր առարկաներ սլատրաստելով. Ուրբաթին սովորեցրի նաւակ կառավարել, քի՛ առագաստը սլարզել, խարիսխ իջեցնել կամ բարձրացնել, թիավարել, զեկը պէտք եղած կողմը ուղղել, և՛, այնպէս-որ՝ կարճ ժամանակումը նանել ամենաճարտար նաւաստիի գործը կարող էր կատարել: Երբ-որ ամէն բան սլատրաստ էր մեր ճանապարհորդութեանը՝ մին-էլ տեսնեմ մի առաւօտ Ուրբաթ լեղապատառ վազելով դա-

լիս էր. այնպիսի արագութեամբ թուաւ արտա-
քին պատնէշի վրայից, որ ասես թէ ոտերը
գետնին չի կպան. դեռ եւս հեռուից կանչում
էր՝ «Պարոն՝ վայ, փորձանք. սյստեղ, նաւակ-
ներ»: Աւել բան չի կարողացաւ արտաբերել
խեղճ երիտասարդը, որ գրե՛թէ կիսակենդան
էր վերահաս վտանգից. թերեւս նորան այնպէս
էր թուում որ՝ վայրենիները ոչ այլ ինչ բանի
համար եկել են մեր կղզի, բայց եթէ նորա
միայն մորթելու եւ ուտելու: Այս կարողացա-
ծիս չափ քաջալերեցի նորան ասելով որ՝ եթէ
իմ օրինակին կ'հետեւի ու ճշդիւ կ'կատարէ
հրամանը՝ ես շուտով պատրաստ եմ իմ անձը
վտանգի մէջ ձրգելու, քանթէ նորան: Ուրբաթ
խոստացաւ ինձ որ՝ եթէ կ'հրամայեմ՝ նա
պատրաստ է ինձ համար մեռնել: Յետոյ
տուի նորան մի փոքրիկ բաժակով շաքարօղի,
որ նա խմեց եւ զուարթացաւ: Առինք հետերըս
հրացաններըս ու ատրճանակներըս. ես մերկա-
ցուցի թուրըս ու գետիցս կախեցի, ու նա մի
կացին առաւ ձեռին:

Այսպէս պատրաստուելից յետ՝ բարձրա-
ցանք մի բլուրի վրայ, ու սյնտեղից սկսեցինք
նկատելու մեր թշնամիներուն, եւ տեղեակ

իմացանք որ՝ նորա թուով քսան երեք հատ էին, եւ հետերը ունէին երեք կալանաւոր, որոնց առանց երկբայութեան պիտի մորթէին եւ ուտէին :

Յամաք հասած տեղը իմ փոքրիկ նաւահանգրատին խսիտ մօտ էր : Մի թաւ անտառ կար մեր մէջ, որի յետնից գնալով սյնքան մօտեցանք, որ հրացանի գընդակը հեշտութեամբ կարող էր հասնել, եւ նորա ոչ մի կերպով չ'էին կարող մեղ տեսնել: Առիկ մնջիկ սյնքան մօտեցանք նոցա որ՝ պարզ կարողանում էինք տեսնել նոցանից ամէն մինին, որոնք մի խարոյկի չորս կողմը նստած՝ ուտում էին մի մորթած եւ խորոված կալանաւորի միսը : Քանի մի քայլ հեռու մի ուրիշ թշուառական ոտերը կապած՝ ընկած էր աւազի վրայ, եւ սպասում էր նոյն աղետալի վիճակը. եւրոպացի էր նա եւ Ուրբաթի ասելովն՝ մինն էր նոցանից, որոնք հիւրընկալութիւն էին գըտել նորա հայրենակցաց մէջ :

Տեսայ որ ոչ մի բոպէ պէտք չ'էր կորցնել, պատճառ-որ արդէն երկու մարդակեր տեղերից վեր-կեցան ու մտադիր էին խեղճին

անկնայ մորթելու: Արբ-որ նորա քակեցին նորա ոտքի կապանքը՝ ես ասացի Ուրբաթին. «Դէ՛հ, ժամանակը հասել է. արա՛ ինչ-որ կ'հրամայեմ», ու իսկոյն երկու հրացաններըս միասին արձակեցինք թշնամեաց վրայ: Ուրբաթը այնպէս ճիշդ նշան արաւ եւ արձակեց որ՝ մի հարուածով երկուսին տեղն՝ ի տեղ սպանեց ու երեքին-էլ չարաչար վիրաւորեց. ես սպանեցի մինին ու երկուսին վիրաւորեցի: Մնացածները սարսափած վեր-թռան տեղերից ու չ'դիտէին թէ որ կողմը պէտք էր փախչել, որ փրկուին ակներեւ մահից: Նորից արձակեցինք հրացաններըս, ու թէ՛ եւ այս անգամին սպանեցինք միայն երկուսին, բայց շատերը վիրաւորուեցան այս հարուածներից: Այդ ժամանակ մենք դուրս-եկանք անտառից. ես ուղղեցի քայլերըս դէպ'ի այն թշուառականը, որ քանի մի բոպէ առաջ կարծում էր արդէն իւր անձը հեռու ամենակերպ օղնութիւնից, եւ Ուրբաթը վաղեց նաւակներից մինի վրայ, որի մէջ երեք վայրենի նստած՝ ուղում էին աղատուել:


Աս քակեցի շտեղճ կալանաւորի ոտքի կապանքը ու հարցրի թէ՛ ո՞վ է նա: Քրիստո-

նեայ եմ, սրատասխանեց նա ինձ: Հազիւ թէ կենայ նշոյլ մնացել էր նորա վրայ. տուի նորան փոքր ինչ օղի, որով կազդուրուեցաւ նորա թուլացած զօրութիւնը: Յետոյ իմացայ որ՝ նա Սարանիացի էր: «Պարոն, ասացի նորան, եթէ ոյժըդ կըհասնի՝ առ սյս ատրճանակը ու թուրը եւ գործ ածէ, ինչպէս-որ պէտք կ'համարես մեր թշնամեաց դէմ»: Այս զէնքը մի նոր ոյժ տուեց նորա թուլացած մարմինին, կատաղարար յարձակեցաւ իւր թշնամեաց դէմ ու շատերին տեղն 'ի տեղ թրով գետնին գլորեց: Միւս կողմանէ Ուրբաթը կացինը ձեռին՝ ուրիշներին էր չարաչար հալածում. եւ այս գործը այնպիսի յաջողութեամբ առաջ-տարինք որ՝ քսան մէկ թշնամիից միայն երեքը կարողացան իւրեանց նաւակի մէջ փախչել, որոնք ոյժերը հասածի չափ քարշում էին թիւերը, որ մահից ազատուին: Մենք գուցէ նոցա կըհալածէինք՝ եթէ նոցա թողած նաւակներից մինի մէջ չի տեսնէի երրորդ կալանաւորին, որ ոտերը պինդ կասրած ընկած էր նաւակի մէջ. գրեթէ կենդանութեան նշոյլ չ'էր մնացել թշուառականի վրայ: Սկսեցի քակել նորա ոտքի կապանքը. բայց խեղճ կալանաւորը կարծելով որ



Նկար՝ Յ. Պատկանեան.

Ռօբինզօնը աղատում է կալանաւորին.



ուզում եմ նորա սպանել՝ աղիողորմ՝ ձայնով
ողորմութիւն էր խընդրում: Հրամայեցի Ուր-
բաթին որ մի դաւաթ շարքաողի տայ նորան :
Հաղիւ թէ տեսել էր նա այդ թշուառականին՝
խակոյն սկսեց նորան դրկել, լալ, ծիծաղել,
թռչոտել. յետոյ վաղաւաղ եկաւ իմ մօտ եւ ասաց
որ այդ կալանաւորը նորա հայրն է: Անհնարին
է խօսքով բացատրել նորա հրճուանքը, երբ-որ
նա տեսաւ իւր հօրը աղատուած անդուծ թշնա-
միներու ձեռքէն: Մէկ մըտնում էր նաւակի
մէջ, մէկ դուրս էր գալի այնտեղից, մէկ նո-
րից մըտնում էր նաւակի մէջ ու նստում էր
հօրը մօտին: Նորա սառած ձեռները տար-
ցներու համար՝ կէս ժամի չափ դնում էր կուրծ-
քի վրայ. յետոյ առնում էր ոտերը ու պինդ
պինդ շփելով՝ ուզում էր կաշկանդած կապան-
քի ցաւը ամոքել: Բայց այն նաւակը, որի մէջ
աղատուեցան վայրենիները սյդ միջոցին անե-
րեւութացան մեր աչքից: Յաղիւ թէ երկու
ժամ էր անցել՝ մին-էլ տեսնես մի ուժգին փո-
թորիկ բարձրացաւ ծովի վրայ, որ անշուշտ
արդելեց նոցա ողջ եւ առողջ իրանց տեղը
հասնելու:

Ուրբաթին մօտըս կանչեցի ու հրամայե-

ցի որ տայ իւր հօրը մի կարկանդակ ու փոքր ինչ
չամիչ. Սպանիացիին-էլ նմանապէս տուի ինչ
ասես ուտելու բան, ու հրամայեցի Ուրբա-
թին, որ նորա ցաւոտ ոտերը շփէ: Նա ջեր-
մեռանդութեամբ կատարում էր հրամանըս. բայց
շուտ շուտ գնում էր հօրը մօտ, որ իմանայ
նորա առողջութիւնը:



Գ Լ Ո Ի Խ 35.

=

Այժմ պէտք էր հողս անել հիւանդ հիւրերիս իմ բնակարան տանելու մասին: Մի ակնթարթի մէջ ուժեղ Ուրբաթը ձգեց Սպանիացիին իւր ուսերու վրայ, տարաւ դրեց նաւակի մէջ, ուր-որ նորա հայրն էր, նաւակը ձգեց ջուրը, ու թի քարշելով հասցուց նոցա մինչեւ նաւահանդիստ:

Բաւականին դժուարութիւն քաշեցինք, երբ-որ ուղեցինք այդ երկու տարաբախտներուն նաւակիցը դուրս-հանել, պատճառ-որ ոչ մինը եւ ոչ միւսը զօրութիւն չ'ունէր օտքի վրայ կանգնելու կամ ման-դալու: Չեռաց մի սրտ-

դարակ շինեցինք, դրինք նորա վրայ տկարնե-
րուն ու տարինք մինչեւ բնակարանիս սրատ-
նէշը. բայց այնտեղ-էլ մեծ դժուարութիւն
հանդիպեցաւ մեզ, քի՛նչ հնարով սկիտի
մըտցնէինք նոցա բնակարանիս մէջ, որ ինչպէս
յայտնի է պատմաճներէս, ամենեւին դուռ
չ'ունէր :

Ճարլս կըտրած ստիպուեցայ բնակարա-
նիցըս դուրս շուտով մի նոր վրան շինել, որի
համար գործ ածեցի հին առադաստներըս. այդ
վրանի մէջ դրի երկու անկողին ու երկու
վերմակ :

Երբ-որ հիւրերիս տեղաւորեցինք՝ միտք
արինք յետոյ նոցա ոյժը կազդուրելու մասին.
այդ վախճանին սրատրաստեցի գեղեցիկ ճաշ :
Մի տարեկան ուլ մորթեցի, նորա կէսը խա-
շեցի եւ կէսը բրինձի հետ միասին խորովեցի :
Երբ-որ հիւրերըս կշտացան՝ նստանք միասին
ու սկսեցինք խօսելու : Ուրբաթի հայրը հաւա-
տացնում էր որ՝ եթէ երթամ նորա երկիրը,
նորա հայրենակիցքը ինձ սիրով կ'ընդունեն.
միւս կողմանէ Սպանիացին հաստատում էր
որ՝ եթէ նորա տասնըութը ընկերակիցներուն
մի հնարով կարողանայի իմ կղզի բերել տալ՝

նոցա օղնութեամբ կարող էի մի նաւ շինել, որ հեշտութեամբ կըհասցնէր մեզ մինչեւ մի Եւրոպացւոց երկիր: Այդ առաջարկութեանը եւ յօժարեցայ միայն այն սլայմանաւ, որ նոքա ինձ պիտի ճանաչեն իրանց տէրը. եւ պիտի հնազանդին իմ ամէն մի հրամանիս մինչեւ-որ իմ նշանակած եւ ցանկացած տեղ հասնելն. բայց եւ այնպէս այդ երկարատեւ ճանապարհորդութիւնը վեց ամիս յետաձգեցի, մինչեւ որ կարողանամ բաւականին սրաշար սլատրաստել տասնը-վեց հոգու համար, որոնք ինձ հետ միասին պիտի ճանապարհորդէին: Չորսըս միասին անխոնջ սկըսեցինք վարելու մի մեծ դաշտ, ու ցանեցինք քսան երկու կապիճ գարի ու տասնըվեց կապիճ բրինձ:


Այս ամէնից յետոյ՝ Ուրբաթին եւ նորա հօրը Սպանիացւոյ վերատեսչութեան տակ՝ ի դործ դրի ատաղձագործութեան, իմ նաւի համար պատրաստել տասներկու հատ մեծ տախտակ՝ երեսուն հինգ ոտնաչափ երկայնութեամբ, երկու ոտնաչափ լայնութեամբ եւ չորս մատնաչափ հաստութեամբ:

Մի եւ նոյն ժամանակ միտըս դրի բազմացնել այժեամներուս թիւը. այդ նըպատակով

քսան երկու հատ ուլ բրոնեցիներ, բաց ՚ի դորանից՝ խիստ շատ խաղող քաղեցինք եւ չորացուցինք ճամբու պաշարի համար:

Հունձերըս այնքան առատ էր որ՝ դիւրութեամբ կարող էին կերակրուել նաեւ այն հիւրերը, որոնց մտադիր էինք հրաւիրելու մեր մօտ: Արք-որ այս ամէն պատրաստութիւնը արինք պրծանք, Սպանիացին եւ Ուրբաթի հայրը ընկան ճանապար՝ նոյն խակ նաւակով, որով իմ կղզին էին հասել նոքա, խուժադուժ մարդակերներուն զոհ լինելու համար: Ինչ-որ պէտք էր նոցա ճամբու համար՝ բոլորը տուի, ու միասին պայման դրինք թէ՛ ի՛նչ ու ի՛նչ պիտի անեն նոքա, երբ-որ յաջողակ վերադառնան կղզիս:

Յետագայ պատմութեանըս մէջ կ'իմացուի թէ՛ ի՛նչ անակընկալ դիպուած արդելք եղաինձ սպասել նոցա վերադառնալուն:



Գ 1 Ո Ի Խ 36.



Նոցա դնալից յետ ութը օր անցել էր՝ յանկարծ մի առաւօտ Ուրբաթ քնից վերկացուց ինձ ասելով թէ՛ «Պարոն, նորա եկան:» Եւ իսկոյն առի հետս հեռադիտակըս ու բարձրացայ ժայռի վրայ, բայց անասելի մեծ էր իմ զարմանքը, երբ-որ ծովի վրայ սլարզ տեսայ մի մեծ նաւ՝ երկու ու կէս մղոն ավից հեռու խարխախ ձգած կղզիիս հիւսիսա-հարաւային կողմը: Նաւի շինուածքով իմացայ որ՝ նա Անգլիացուց է, նմանապէս եւ նաւակը, որ յաջողակ քամիով մօտենում էր դէպ՛ի ափ:

Խօսք չ'ունիմ նկարագրելու այն զգաց-

մունքը, որ ծընուցին իմ մէջ այս նոր եւ
անակրնկալ հանգամանքները. միանգամայն շփո-
թեցայ եւ ամենեւին չ'էի կարողանում հաս-
կանալ արդեօք ինչ դիպուածով այս կողմերը
եկած պիտի լինի Անգլիացւոց նաւը: Մինչ
այս մինչ այն՝ նաւակը ցամաք հասաւ կանգնած
տեղիցս քառորդ մզոն հեռու:

Երբ-որ մէջի մարդիկը ոտերը ցամաք
դրին՝ տեսայ որ նոքա թուով տասնըմէկ հատ
էին, մէջերից երեքը անգէն էին եւ կալա-
նաւորի պէս կապած կապկըսած, ու նոցանից
մինի դէմքը ցոյց էր տալի վերջին աստիճանի
յուսահատութիւն: Նաւաստիները ցրիւ-ընկան
կղզիի ամէն կողմը ու սկսեցին ման-գալ: Մնա-
ցած երեք կալանաւորը նըստած էին դետնի
վրայ. նոցա տխուր դէմքը միտըս բերեց իմ
դառը վիճակը, երբ-որ առաջի անգամ ոտըս
դրի այս կղզիի վրայ: Հատ ուզում էի աղա-
տել այս թշուառականներուն: Ես եւ Ուրբա-
թը մեծ զգուշութեամբ պատրաստուեցանք
արիւնահեղ կռուի:

Ախօրուսյ դէմ երբ-որ տօթը սաստկա-
ցաւ՝ չարագործները զնացին անտառ, որ այն
տեղ ստուերի տակ զովանան: Երեք կալա-



Նկար՝ Յ. Պատկանեան.

Անգլիացի նաւաստիւոր.

Նաւորը նմանապէս սրառկած էին մի մեծ ծառի տակ, որոնք ինձանից խիստ մօտ էին, բայց նաւաստիներից սյնքան հեռու, որ նոքա չ'էին կարող տեսնել նոցա: Այս մօտեցայ կալանաւորներուն իմ սարսեցուցիչ շորերըս հագած. առաջ ու առաջ նոքա խիստ վախեցան ինձանից, բայց որ յետոյ միամտեցուցի միանգամայն ասելով թէ՛ ամենեւին միտք չ'ունիմ նոցա վնասելու, նոցանից մինը ինձ ասաց, որ նա Վաւապետն է, եւ դարձեալ որ՝ նորա նաւաստիները ապստամբել են իւր դէմ, եւ ուզում են նորա, իւր տեղակալին ու մի ճանապարհորդի թողնել այս ամայի կղզիի մէջ: Այս նոցա խօստացայ ամէն կերպ վնասը յանձնս առած՝ ազատել այդ տարաբախտութիւնից, եւ աւազակների ձեռից յետ խլել նաւը, եթէ նոքա կ'համաձայնին ինձ եւ իմ ստրուկին Անդլիա հասցնել. նոքա միաբերան խօսք տուին կատարել այս առաջարկած սրայմաններըս: Այս բանը վճռելից յետ՝ առին նոքա ինձանից երեք հատ հրացան, վառօդ, գնդակներ ու արիաբար յարձակուեցան ապստամբներու վրայ: Մեր առաջի գրոհը սյնապէս անակընկալ ու սաստիկ էր, որ առանց մէկ կորուստի սպանեցինք գլխաւոր

վրդովի չներից երկուսին. մնացածները տեսնելով առաջներին անփախուստ մահ՝ ողորմութիւն խնդրեցին. մենք յօժարեցանք նոցա ողորմութիւն շնորհել միայն այն պայմանաւ, եթէ նոքա-էլ իրանց կողմանէ կ'օգնեն մեզ նաւը յետ խլելու ասլըստամբներու ձեռքից, ու իսկոյն կապեցինք նոցա ձեռները ու ոտները:

Այդ միջոցին մանրամասնաբար պատմեցի նաւապետին գլխիս եկած բոլոր անցքը, որ նա ուշադրութեամբ եւ կարեկցաբար լսում էր: Յետոյ տարի նորան բերդիս մէջ, ցոյց-տուի բոլոր հարստութիւնս, ինչ-ասես ուտելու բան տուի նորան, ու յետոյ միասին խորհուրդ արինք թէ՛ ի՛նչ հնարքով պէտք է նաւը ձեռք ձգել, եւ ի՛նչպէս կալանաւորի նաւի վրայ մնացած քսան վեց հոգուն հնազանդեցնել, որոնք վաղ կամ ուշ կարող էին մեզ չարաչար վնասել: Նախ եւ առաջ ծակեցինք նաւակի յատակը, որ ասլստամբի չներուն պէտք է լինի:

Իսկոյն տեսանք ծովի վրայ մի ուրիշ նաւակ, որի մէջ նըստած էին տասը զինաւորած նաւաստի. փոքր ժամանակից յետ նոքա կասեցան այն տեղ, ուր որ կեցել էր յատակածակ նաւակը. նաւաստիները տեսնելով նաւակի թշուառ

դրութիւնը՝ սկսեցին բարձր ձայնով աղաղակելու ու կանչելու իրանց ընկերներուն, բայց ՚ի զուր. նոքա կամ չէին լսում նոցա ձայնը, կամ վախում էին սլատասխան տալու: Նորեկ նաւաստիներից երեքը մնացին, իսկ միւս եօթը զուրս-եկան նաւակից ու գնացին իրանց ընկերներուն դըտնելու: Սեճ զգուշութեամբ յառաջ էին գնում, միմեանցմէ ամենեւին չէին բաժանվում ու չէին վստահում շատ հեռանալու ծովի ափից: Աւել սլինդ սկսեցին աղաղակել եւ կոչել իրանց ընկերներուն. բայց որ երկար ժամանակ սլատասխան չէին ստանում՝ ուղում էին յետ-դառնալ դէս՚ի նաւակը: Նաւապետը տեսնելով-որ չարագործները կ'փախչին մեր ձեռից՝ խիստ տխրեցաւ. բայց ես իսկոյն հնարը գըտայ նոցա ձեռք-ձգելու: Ուրբաթին եւ տեղակալին ուղարկեցի նաւահանգըստի արեւմրտեան կողմը եւ սլատուիրեցի որ՝ այնտեղաց աղաղակեն. այս լսելով ասըստամբիչները նաւակը դէս՚ի նաւահանգիստ տարին. նաւակի մէջ մնացին երկուսը ու մնացածները գնացին այնտեղ, որ կողմից-որ լսել էին աղաղակը: Ուրբաթ տեղէ տեղ փոխփխտելով եւ իւր աղաղակով նոցա հրասուրելով՝ այնքան հեռացուց եւ խո-

րացուց թաւ անտառների մէջ, որ եթէ նոքա վերադառնալու եւս միտք ունենային՝ կէս գիշերից առաջ չ'էին կարող հասնել մինչեւ թողած նաւակը: Այս միջոցին մենք տեղեկացանք երկու նաւաստիներու մասին, որոնք նաւակի մէջ նստած՝ սպասում էին իրանց ընկերներուն. եւ երբ-որ մութը կոխեց եւ նոցա ցրիւ-ընկած ընկերները յետ դարձան՝ մենք իսկոյն յարկա-կեցանք նոցա վրայ. եւ որովհետեւ մեր թիւը նոցա անյայտ էր, նոքա զարհուրեցան եւ զէն-քերը ցած-դրած՝ ողորմութիւն խնդրեցին: Այս գլխաւոր կառավարող ծրարած մեծ հանդիսով սրտած էի. այս խորամանկութիւնը խիստ հարկաւոր էր նոցա սրտի մէջ ահ ճըգելու համար, եւ աստատմբեալներուն հաւատացրինք, որ յիսուն հոգի սպառազինած թիկնապահ ունիմ:

Հրամայեցի որ ամէնի ձեռները ոտները կապեն, իսկ գլխաւոր աստատմբիչներուն բաց'ի դորանից տանեն եւ իմ քարայրի մէջ պահեն. նմանապէս մեր մէջ խորհուրդ արինք որ՝ ով-որ անկեղծ սրտով կ'զղջայ եւ կ'սոստանայ ուղղուելու՝ ողորմութիւն կ'ստանայ, եւ այդ հնազանդեալներու ձեռնտուութեամբ տիրել նաւին:

Տասներկու հնազանդեալներուն հետը

առած՝ դնաց նաւապետը դէպ'ի նաւ եւ կարծ՝
միջոցումը կէս մի ուժով եւ կէս մի քաղցր
խօսքերով յաղթեց մնացեալ ապստամբներուն:

Եօթը անգամ թընդանօթ արձակելով նա-
ւապետը իմաց-տուեց ինձ, որ ամէն բան կար-
գաւորած պատրաստած է, ու փոքր ինչ ժա-
մանակից յետոյ՝ ինքը եկաւ մօտըս ու ցընծալի
ձայնով աղաղակեց.

«Իմ սիրական, իմ աղատիչ, ահա՛ քու
«նաւը. այսուհետեւ այն եւ նորա մէջի բոլոր
«եղածը քեզ է պատկանում, նմանապէս եւ մենք
«ամէնըս պատրաստ ենք քու սպասուն:»



Գ Լ Ո Ի Խ 37.

=

Աւելիքս դարձրի դէպ'ի ծով ու քառորդ միջոնի չափ հեռու ափից տեսայ նաւը՝ խարխուս ձգած ու կանգնած: Այսուհետեւ ազատութեանքս մասին թէ եւ միանգամայն աներկբայ էի, բայց հոգւոյս հրճուանքը այնքան մեծ էր, որ այս անակընկալ երջանկութիւնից քիչ մնաց որ դալկացած գետնին չ'զլորուեցայ, եւ այդ անշուշտ կըպատահէր, եթէ նաւապետը չի բռնէր ինձ: Երկար ժամանակ չ'էի կարողանում բերնիցըս խօսք դուրս-հանել, ասե՛ս թէ լեզուս կապուել էր. յետոյ որ շատ եւ երկար լացի՝ աչացս յորդառատ արտասուները սիրտըս

Թեթեւացուց : Միմեանց ազատիչ անուանելով
գրկուեցանք նաւապետի հետ : Ինչ-որ պէտք
էր՝ բոլորը տուեց ինձ նա. բաց յայնմանէ՝ ոտի-
ցըս գլուխ նոր հագուստով զարդարեց : Յետոյ,
ինչպէս գլխաւոր կառավարչին է վայել, կան-
չեցի մօտըս ապստամբած նաւաստիներուն ու
հրամայարար ասացի որ՝ նոցա օրինազանցու-
թեան եւ պախարակելի վարուց համար պէտք
էր կախ-տալ. բայց ես ողորմելով նոցա թշուառ
վիճակին՝ պատրաստ եմ՝ ի բոլոր սրտէ ներել
եւ մոռանալ նոցա արած յանցանքը, եթէ կ'յօժա-
րին մնալ կղզիիս մէջ, եւ այնտեղ երջան-
կութեամբ անցնել օրերը : Առքա շնորհակալ
եղան ինձանից այս առաջարկութեանըս համար :
Յետոյ տուի նոցա զանազան հարկաւոր խրատ-
ներ եւ կանոններ՝ թէ ինչպէս պէտք է անել,
որ կարողանան խաղաղ եւ երջանիկ ապրել :
Նմանապէս սովորեցրի նոցա ինչպէս պէտք
է վարել, ցանել հընձել, խաղող քաղել եւ չո-
րացնել : Յայտնեցի նոցա, որ շուտով գալու են
տասներկեց հոգի Սպանիացիք, եւ պատուիրեցի
որ՝ ընդունեն նոցա իւրեանց մէջ եւ իրար հետ
հաշտ ապրին : Այդ վախճանին մի յանձնարա-
րական նամակ գրեցի եւ հրամայեցի, որ նոցա

ձեռք հասցնեն : Իսկ զէնքերից շատը նոցա
տուի, եւ նաւապետին խնդրեցի որ՝ նաւից
վառօղ բերել տայ, այն եւս նոցա մէջ հաւա-
սար բաժանեցի : Արջապէս սովորեցրի նոցա
թէ՛ ինչպէս սկտք է բուծանել եւ պարար-
տացնել այծեամբերը, կաթ կթել, իւղ եւ պա-
նիր շինել :



Գ Լ Ո Ի Խ 38.

=

ՍԿԼԱ օր առի հետըս հաւատարիմ՝ Ուր-
բաթին եւ ընկայ ճանապար. բայց կղզիս թող-
նելու ժամանակ չի մոռացայ առնուլ հետըս
ինչպէս յիշատակ իմ երկարատեւ սլանդխտու-
թեանը՝ նաեւ կաշիէ գդակըս, հովանոցակըս
եւ թուլթակըս, եւս եւ այն փողը, որ մինչեւ
այն օր ինձ համար միանգամայն անօգուտ էի
համարում:

ՍՀԱ՛ այսպէս 1686 ին Ղեկտեմբերի 19
ին դուրս-եկայ կղզիիցս, ուր անցրել էի .բսան
ուլթը տարի, երկու ամիս եւ տասներկեց օր:
Ղանապարըս յաջողակ էր. 1667ին, Յունիսի

ին հասայ Անգլիա, ուր 35 տարի ոտըս չ'էի դրել աստանդական կեանք վարելով՝ հեռու իմ կարօտեալ հայրենիքէն : Արբ-որ ծնած քաղաքս հասայ՝ մեր ընտանիքներից ոչ ոքին կենդանի չի գտայ. հայրըս, մայրըս վաղուց գերեզման էին մըտել՝ անմխիթար սգալով իմ վըայ : Աս սըսակուեցայ, եւ այժմ ունիմ երկու որդի ու մի դուստր. գերդաստանիս մէջ վայելում եմ բարեբաստիկ եւ խաղաղ կեանք. մերձաւոր բարեկամացս եւ ծանօթներիս ընկերութիւնը, նոցա խօսակցութիւնը եւ այն մաքուր զուարճութիւնը, որ բղխում է նոցա կենակցութիւնից՝ այժմ կենդանացնում եւ զարդարում է իմ կեանքը, որից երկար ժամանակ իսպառ զըկել էին իմ սեպհական մոլութիւնները :

Վ ե ը ջ .

ՀԱՄԱՌՈՏ

Ի Ա Ռ Ա Ր Ա Ն

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

200000

100000

Main body of faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



ՀԱՄԱՌՈՑ ԲԱՌԱՐԱՆ

=

Ադուռ, այնքան որքան-որ փակած ձեռքը կարող է իւր մէջ պարունակել. բուռ. *ավուռ՝
Горсть.

Ախորժակ, ուտելու կամ՝ խմելու ցանկութիւն.
*իշթաչ. Аппетитъ.

Ածուխ, այրած փայտ, որ չէ՛ կարող բոց (*ալէֆ) արձակել, անծող, գործիւ. *բումուր.
Уголь.

Ակնթարթ, կոպրի, արտևանունքի (*քիփրիք) շարժուածը, որ խիստ շուտ իջնում և բարձրանում է. նաև բուպէ, վայրկեան.
Мгновеніе ока.

Աղալ, աղօրիքով (ջաղացքով) մանրել, փոշի դարձնել. Молоть.

Աճիւն, տաք մոխիր. *քուլ:

Ամայի, անշէն, դատարկ տեղ. *եապան. Пустырь.

Այդ եկու թք, խաղող քաղելու ժամանակ, քաղոց :

Այծեամն, վայրի (*եաբանի, *չօլի) սյծ, որ սիրում է սարերումը կենալ. Серна.

Անդամանդ, թանկագին քար (ակ), որ ամէնից փայլուն և կարծր է. *էլմաղ. Алмазь.

Անդեայ, շատ անասուններ՝ կով, եղ, ոչխար, լեռ, որ միասին հաւարուած են. *սիւրիւ. Стадо.

Անդունդ, ծովի մէջ խոր փոս, որի յատակը մարդ չի կարողացել հասնել. Бездна.

Անկողին, *դօշակ, կողանք, *եաթախ. Посталя.

Անհարթուի, անյարմարուի, դժուարուի, ինչ որ անհանգստուի է պատճառում. Неудобство.

Անձուկ, նեղ, դժուար. Тѣсный, стѣсненный.

Անուր, երկաթէ կամ սղնձէ շրջանակ, որ անցնում են շան վիզը. Ошейникъ.

Ապագայ, դեռ ևս չհասած, բայց գալու ժամանակը. Будущее.

Ապահովել, երկիւղէ կամ փնասէ ազատ պահել. Обезпечивать.

Ապառաժ, մեծ և պինդ քար, որ գետնի վրայ
հաստատուած է. Скала.

Ապաստան, փրկուելու, ազատուելու տեղ.
Убежище.

Ապիկի, կաւէ ամանի մէջի փայլուն ծեփը.
*սրբ Глазурь.

Առադաստ, մեծ և լայն կտաւ, որ քամու
առաջ պարզած՝ առաջ է քշում նաւը.
*եէլբէն. Парусь.

Առաստաղ, առիք. Потолокъ.

Առարկայ, աի՛ ինչ որ մարդս կարող է տես-
նել, զգալ և հոգւով ճանաչել. Пред-
метъ.

Առողջամտութիւն, ուղիղ դատմունք, ան-
սխալ մտածողութիւն. Здравый разсудокъ.

Առուակ, փոքրիկ վազող ջուր, փոքրիկ գետ.
Ручеёкъ.

Ատաղձ, շինուածքի համար պատրաստած
փայտեղէն նիւթ. Лѣсъ.

Ատաղձագործ, փայտեղէն առարկաներ շինող,
հիւան. *դուրգետար Плотникъ.

Ատրճանակ, *թափանջա, *փշտոֆ. Писто-
летъ.

Արկածախնդիր կեանք, որսէս և իցէ ձեռ-

նարկութիւն, որի վերջը կամ կատարածը
բախտից, սխտաճմունքից է կախած:

Արկածք, չի կարծած ու չի սպասած փոր-
ձանք կամ սխտաճմունք. Приключение.

Արճամարճել, բանի տեղ չ'դնել, անարգել.
Пренебрегать.

Արտաշնչուի, որպէս և իցէ ջրոտ առարկայի
շողի (*բուղ) ցնդելն. Испарение.

Բակ, որմասպատած արձակ տեղ՝ տան առաջ
կի՞ նորա չորս կողմը. *Տայաթ, *աղպար.
Дворъ.

Բահ, գետինը փորելու թի՛ երկաթէ ծայրով.
*պէլ, *քիւրէք. Заступъ.

Բաճկոնակ, առնացի կարճ հալաւ, որ հագ-
նում են վերարկուի տակ. *զպուն. Зы-
пунъ.

Բլուր, լեռնակ, հողաբլուր, *օպա. Холмъ.

Բրուտ, կաւեղէն ամաններ շինող. Гончаръ,
горшечикъ.

Պանդ, գլխի ոսկորը, *խաֆա. Черепъ.

Պետաբերան, այն տեղ ուր-որ գետը թափ-
վում է ծովի կամ ուրիշ գետի մէջ.
Устье рѣки.

Գերանդի, դանակի նման ծուռ բերանով
գործի, որով ցորենն հնձում են. Серпъ.

Գիշատիչ, պատառող (գազան) Хищный.

Գնդասեղ, *թօփլու ասեղ. քորոց. Булавка.

Գրպան, *ճէպ, *ջիբ. Карманъ.

Դալար, կանանչ, թարմ, մատղաշ. Зеленый,
свѣжій.

Դաշնակից, սրայմանով կասուած. Союзникъ.

Դաստակերտ, քաղաքից դուրս շինած տուն,
կալուածք. Дача.

Դարձուած, փողով ասլրանք դնել, գնած
ասլրանքը ծախել, նորից դնել, եւ. այս-
պէս փողի գործածութիւնը ասվում է
դարձուած. Комерческій оборотъ.

Դիտաւորութիւն, որպէս և իցէ բան կատա-
րելու միտք կամ ցանկութիւն. Намѣреніе.

Եղէգն, ջրային բոյս, *ղամիշ. Камышъ, тро-
стникъ.

Երակ, մարմնոյ այն անօթները, որոնց միջով
անցնում է արիւնը. *դամար. Жилы.

Երաշտ, անանձրև եղանակ, անձրևի սակասու-
թիւն, չորութիւն. Засуха.

Երևակայութիւն, այնպիսի կարողութիւն
մտաց, որով մեղանից հեռի կամ միան-

դամայն չ'տեսած առարկաները կարող ենք
ձևացնել, կամ աչքերուս առաջ բերել
Воображение. imagination.

Երկանաքար, աղօրելի կլոր և տափակ քարը,
որով ցորենը կ'ազան. Жерновъ.

Երկբայելի, դժուար կատարելի, կասկածելի.
Сомнительный.

Օբաղել, ուշկը մի բանի վրայ դրած՝ աշխա-
տել, պարապել. Заниматься.

Ընթացք, վազելը, առաջ գնալը. Ходъ, курсъ.

Թարմ, մատղաշ, կանանչ, նոր, 'թաղա.
Свѣжій, молодой.

Թափառել, այսկողմ այնկողմ անդործ, ան-
նպատակ ման-դալ. Таскаться, блуждать.

Թիակ, երկայն և բարակ փայտ, որով վարում
են նաւակը, *քիւրէկ. Весло.—ևս և հող են
փորում. Лопата.

Թնդանօթ, պատերազմական մեծ և ծանր դոր-
ծի՝ պղնձէ կամ թափծու երկաթէ շինած.
*թօփ, *ղարբազան. Пушка.

Թուլթակ, թռչունի մի աղցը, որ կարողա-
նում է մարդու պէս փուքեր արտասանել.
Попугай.

- Չայո, սար կամ բլուր միայն քարից բաղկացած. Скала.
- Իջեան, ճամբորդի խնջնելու ու հանգստանալու տեղ. Станція, подворье.
- Իրաւաբան, օրէնք գիտցող, փաստաբան. Правовѣдъ, адвокатъ.
- Լաստ, մին մինի հետ ամրացած գերաններ որ ջրի երեսին լող է տալի՝ տախտակէ յատակի նման. Плотъ.
- Լծակ, երկայն ձող երկաթէ կամ փայտէ՝ ծանրութի բարձրացնելու հիւր. Рычагъ.
- Խաղացք, ծովի կանոնաւոր բարձրանալը և ցածանալը, որ ասլում է՝ մակընթացութի և տեղատուութի. Приливъ и отливъ.
- Խանձող, այրած փայտի կտոր. Головня.
- Խարիսխ, մագլաւոր երկաթ, որով կանգնեցնում են նաւը. Якорь.
- Խարոյկ, մին մինի վրայ կուտած շատ փայտեր՝ այրելու հիւր. Костёръ.
- Խիւս, փափուկ եփած կորեկ, ցորեն կի՞ մի ուրիշ ուտելու սերմնահատ Кашица.
- Խնջոյք, կեր ու խում. *քէֆ. Ппрушка.
- Խոհանոց, կերակուր եփելու առանձին սենեակ կամ տեղ. *աշխանա. Кухня.

Խոնաւութի, թացութի. *նամութի. Сырость.

Խոպանացած, անբեր, փշարեր դարձած (երկիր) :

Խոտորուիլ, ուղիղ ճանապարհից դուրս-գալ, ճոռիլ. Уклоняться.

Խորշ, անկիւն, *քունջ, *քոշա, *սուճախ. Уголь.

Խորճիթ, սստիկ տուն, խուց, աղքատ բնակարան. Лачужка, избушка.

Ծանրակշիռ, ծանր, թանկագին, հարկաւոր. Важный.

Ծխախոտ, *թութուն, *թամբարու. Табакъ.

Ծխաքարշ, *չուբուղ. Чубукъ, трубка.

Ծովածոց, ծովի մասը՝ մտած կամ առաջացած դէպի ցամաք երկիր. Заливъ.

Կաթսայ, սղնձէ կամ թափծու երկաթէ՛ կերակուր եփելու աման. *խալկին, *ղաղան. Котёлъ.

Կալ, ցորեն կասելու (ի՞ր ցորենը յարդէն բաժանելու) տեղը. *հարման. Гумно.

Կալանաւոր, դերի առած. *եէսիր, բանդ դրած. Невольникъ, узникъ.

Կալուածք, ինչք, կայանք, և ասլուս՝ է մանաւանդ երկրի, ագարակի համար. *մուլք. Помѣстье.

- Վայմ, երկայն և հաստ ձող (*տիրէք) նաւի
մէջ տնկած, որի վրայ կախում են առա-
դաստը (*եէլքէն). Мачта.
- Վապերտ, մազեղէն կամ բրդէ սփռոց. *խա-
լի, *խալիչա. Ковёръ.
- Վասպիճ, աման և չափ սերմնահատներու:
- Վարևոր, կարի հարկաւոր, խիստ պէտքական.
Необходимый.
- Վարկանդակ, հացի պէս խմորեղէն՝ մէջը
պէսպէս անուշեղէն լցրած. Пирогъ.
- Վարկաուել, երկայնացնել, ձգել, տարածել.
Протягивать.
- Վիտրոն, լիմոնի նման ստուղ, բայց մեծ նո-
րանից. *բադրանդ. Цитронъ.
- Վիրք, չափազանց սէր կամ յօժարութի դէպի
մէկ բանի, և մանաւանդ ասվում է վատ
բանի հմբ, ինչ արբեցողուն, դողուն, ստուն.
Страсть.
- Վոզմնացոյց, տուփ (*ղութի) որի մէջ կախած
է երկաթ, որի մազնիսած կողմը միշտ
դառնում է դէպի հիւսիս. Компасъ.
- Վոզովագործ, սասլատ, զամբիւղ, *սէփէթ-
շինող. Корзинщикъ.
- Վրիայ, ծանրաշարժ երկակենցաղ (ինչ ջրի և

երկրի վրայ կեցող) կենդանի, որի մէջքը
ծածկած է ոսկորէ սնակով. *թօղբաղա.
Черепуха.

Արօն, պաշտօն որ հատուցանում են մարդիկ
Աստուծոյ, հաւատ. Религія.

Հալուէ, հնդասանի ծառ, որի փայտը խիստ
հոտաւէտ և ծանր է. Алоэ.

Համոզել, յորդորել, խրատով և խնդիրքով
յօժարեցնել, խելքի բերել. Убѣждать.

Հասկ, հասուն ցորենի, գարիի և ուրիշ
սերմնահատներու գլուխը. Колось.

Հարեան, դրացի, *ղօնշի. Сосѣдь.

Հարթ, կոկ և տախակ, *դուղ. Гладкій,
плоскій.

Հեռագիտակ, հեռուից տեսնելու համար
գործի. *գիւրբին. Подзорная труба, те-
лескопъ.

Հետք, ոտքի կոխած նշանը. *իդ. Слѣдь.

Հերկել, վարել, գործել երկիրը. Пахать.

Հիւթ, մսի, խոտի, պտուղի, ևն, ջուրը, հե-
ղուկը. *էօղ. Сокъ.

Հլու, խօսք մտիկ անող, հնազանդ. Послу-
шній.

Հնոց, կերակուր եփելու, սննեակը տարացնելու

Համար՝ փայտ վառելու տեղ. *փուռ, *սօ-
սրա. Печь.

Հոսող, վազող. Текучій.

Հովանոցակ, ձեռք բռնելու փոքրիկ վրան՝
անձրեկից կի՞ սրեզակից պաշտպանուելու
Համար. ЗОНТИКЪ.

Հրացան, *թօփ, *թիւֆէնկ. Ружьё.

Չանձրալի, սրտամաշ, սիրտը նեղացնող.
Скучный.

Ղաշարան, ճաշ ի՞ կէսօրուայ հաց ուտելու
սենեակ. Столовая.

Ղարս, եղ, գիրուց, *չաղ. Жиръ, тукъ.

Մախաթ, փայտէ կոթով սուր երկաթ՝ կաշի
ծակելու համար. *բիզ, Шило.

Մակաղ, ոչխարների, կովերի համար պատած
տեղ՝ գիշերուայ հանգստեան համար. Ов-
чарня.

Մանրախիճ, խոշոր աւաղ (*խոււճ). Хрящъ.

Մատակ, էգ կենդանի, քած. *դիշի. Самба.

Մառան, ուտելիքը պահելու տեղ. *քիւէր.
Кладовая.

Մատնա չափ, մատի չափ մեծութիւն. Вершокъ.

Մարդակեր, մարդու միս ուտող. Людоѣдъ,
каннибаль.

Մեղամաղձու թիւն, սեւամաղձու թիւն. *սեղտա
վիշտ, տխրութիւն. Меланхолия.

Միջատ, մանր կենդանիներ, ինչպէս՝ ճանճ,
մեղու, թրթուր, ևc. Насѣкомое.

Մղոն, տարածութեան, երկայնութեան չափ.
(չորս վերստի հաւասար) Миля, lieu.

Մոլեկան, յիմարական, ցնորական. Сума-
збродный.

Մոխիր, սյրած բանի մնացորդը. *քուլ. Пепель.

Սասթան, յմսի հետ եփած, եռ-տուած ջու-

Սասջուր, յրը. *եահնի. Бульонъ.

Յատակ, տափ, տակ որպէս և իցէ խոր բա-
ներու, զ՞ տակառի, գետի, ծովի. Дно.

Յարկ, *խաթ. Этажъ, ярусъ.

Յեսան, դանակ, թուր, մկրատ սրելու քար.
Оселокъ.

Նախախնամութիւն, Աստուծոյ իմաստութիւնը,
գութը, խնամքը՝ որով կառավարվում է
աշխար. Промыселъ Божій.

Նաւ, *գեամի. *կէմի. Корабль.

Նաւակ, փոքրիկ նաւ, որ թիակ քարշելով
մանացնում են ջրի վրայ. *խայէխ. Лодка.

Նաւապետ, նաւի մէջ գլխաւորը, մեծը. Ка-
питанъ.

Նաւարկութիւն, նաւով ճանապարհորդութիւն.
Кораблеплавание.

Ներկայութիւն հոգւոյ, արիութիւն, քաջութիւն, վտանգից չ'այլայլելը. Приеутствие
духа.

Նեցուկ, թոյլ ծառերը հաստատ սահելու
համար՝ նոցա դէմ դրած ձողը կամ գերանը.
Подставка.

Նպատակ, վախճան կամ վերջ, որին մարդ
ցանկանում է հասնել. Цѣль.

Նստարան, երկայն աթոռ առանց յենարանի,
որի վրայ շատ մարդ կարող է նստել.
Скамейка.

Շահէն, բաղէ թռչունի մի ալգը. *ղառչղա.
Кречать.

Շաղափ, ծայրը ստուտակաւոր երկաթ՝ ոլորելով
փայտ ծակելու համար. *բուռղու.
Буравъ.

Շաքարօղի, շաքարից շինած օղի *ռօմ.
Ромъ.

Ողկոյղ, խաղողի փունջ, կուղ. Гроздь.

Ովկիանոս, համառարած ծով, որ սատում է
աշխարհ. Океанъ.

Ոտնաչափ, տարածութիւնը կրունկից մինչև մատ. Футъ.

Որոգայթ, թռչուն կի՞ գազան բռներու գործիք. *դուղախ. Ловушка.

Որս, վայրի անասուն բռները կի՞ սպանելը. *ալ. Охота.

Որսալ, որպէս և իցէ կենդանի բռները՝ կի՞ վաղելով քամակից, կամ հրացանով խփելով, կամ ցանցով, կամ մի ուրիշ հնարով. ОХОТИТЬСЯ.

Ուլ, նոր ծնած այծ, այծի ձագ, *բալա. Козлёнокъ.

Ուղիս, բարձր տեղից վաղող կի՞ առատ անձրևի ջուր. Потокъ.

Ուղղահայեաց, այս կողմ՝ այն կողմ չի՞ ծրուած, ուղիղ. Перпендикулярный, отвѣсный.

Ուշկ, մտած ուղղութիւն, ձկտումն. Вниманіе.

Ուսի, ճկուն ստերով ծառ է. *սէօկիւթ. Ива.

Ուրագ, փոքրիկ կացին, *սլալթա. Топорикъ.

- ՊաՏարան, կերակրեղէն կի՛՛հ հագուստեղէն սա-
հելու տեղ. *քամօղ, *տօլար. Шкашь, ко-
модъ.
- ՊաՏեցողութի՛ն, կերակուրէ, մարմնային զու-
արձուէ՛ հեռանալը կի՛՛հ չափաւոր վայելելը.
Воздержаніе.
- Պատառարաղ, *չանգալ, *չաթալ. Вилка.
- Պատգարակ, տեղէ տեղ ձեռքով՝ հիւանդ,
բեռն կի՛՛հ մի ուրիշ բան տանելու գործի.
Посилки, качалка.
- Պատիճ, ցորենի կի՛՛հ ստղոյ կեղև. *խարուղ.
Шелуха.
- Պարան, հաստ շուան. Канатъ.
- Պարկ, *տօւրակ, *խուրջին. Мѣшокъ.
- Պարսիմատ, չորացրած հաց. Сухарь.
- Պղակուտր, անուշ խմորէ օղակներ. *սի-
միթ. Крендель.
- Պոյտ, կաւէ աման, սուտուկ, կճուճ. *հօռ-
շուխ. Горшокъ.
- Ջանք, աշխատանք, վաստակ, *խայրէթ. Ста-
раніе.
- Ջրաղացք, ջուրի աղօրիք. Ջաղացք. Водяная
мельница.

Ջրհան, ջուր հանելու մեքենայ, *թուլումաւա.
Нососъ.

Սահանք, գետի կամ ջրանցքի մէջի պատը,
որ պէտք եղած ժի՛նակը կարելի է բար-
ձրացնել կի՛ք ցածացնել՝ ջուրի ընթաց-
քը արդելելու կի՛ք արձակելու համար.
Шлюзы.

Սայլակ, միանիւ կի՛ք երկանիւ փոքրիկ սայլ
(*արարա). Тачка, тележка.

Սանդի տոռն, *հավանկի կոթը. Пестъ.

Սաւատ, կողով, *սէփէթ. Корзинка.

Սափոր, ջուր պահելու կաւէ աման, փարջ.
Кувшинъ.

Սինալսնձոր, Չինմաչինի խնձոր, *փու-
թօքալ. Апельсинъ.

Սողուն, ճճի, սողացող կենդանի, որդունք.
Пресмыкающійся.

*Ստէրլին, Սնդլիացոյ դրամ, որի արժէքը
25 ուրլի թղթադրամ է. Стерлингъ.

Ստոման, մեծ կուժ. Жбанъ.

Ստորոտ, սարի, բլուրի կի՛ք մի ուրիշ շինութիւն
ներքին մասը, տակը. Подошва.

Ստրուկ, սեպհական ծառայ՝ փողով դնած կի՛ք

գերի առած. ճորտ, *եէսիր. Рабъ, не-
ВОЛЬНИКЪ.

Սրճաման, սուրճի (խաճվէ) աման. Кофей-
НИКЪ.

Վանդակ, թռչուն կի՛ կենդանի սրահելու տեղ,
որի սրտերը հիւսած են երկաթէ թերե-
րով կի՛ բարակ փայտերով. *զաֆէս. КЛѢТКА.

Վառօղ, բարութ. Порохъ.

Տագնապ, սրտադող, նեղութի՛ն, անհանդատու-
թի՛ն, հոգ, *սխլէթ. Тоска, безпокойство.

Տախտակամած, նաւի վերի յատակը կի՛ երե-
սը. Палуба.

Տարածութի՛ն, մի առարկայի երկայնութի՛ւնը, լայ-
նութի՛ւնը և խորութի՛ւնը. Пространство.

Տարափ, առատ ու սաստիկ անձրև. *սաղա-
նախ. Ливень.

Տարեգարձ, տարեգրոտտ, տարուսյ յետ դառ-
նալը. Годовщина.

Տափան, վարած, գործած դաշտը հարթաց-
նելու համար՝ ատամնաւոր գործի. Бо-
рона.

Տեղատուութի՛ն, ծովի ջրի իջնելը. Отливъ.

Տենդ, զողջուց, մարմնոյ զողալը, ջերմ. Ли-
хорадка.

Տերև, *եափրաղ, *փօթօլ. Листъ.

Տէգ, ձեռքով ձգելու սրածայր զէնք. *մզրախ.
Копьё.

Բոսէ, մի ժամի (*սահաթի) 60երորդ մասը.
Минута.

Յցասրատ, մին մինի մօտ տնկած ցիցերից
(*խաղուլսներ) սրատ. Частоколь.

Փոկ, չուանի նրա երկայն և բարակ կաշի,
*ղայիշ. Ремешка.

Փորոտիք, փորի մէջի եղածը. աղիք. По-
троха.

Քառորդ, մի ամբողջի չորրորդ մասը, *չա-
րէք. Четверть, ($\frac{1}{4}$).

Քարընկէց, մի քարի ձգուած երկայնութիւն
չափ:

Քիստ, ցորենի հասկի գլուխը:

Քսակ, փող պահելու լաթէ աման. *քիսա.
Кошелёкъ.

Քստմնելի, այնպէս երկիւղալի, որից մարդուս
մարմինը փշաքաղ է լինում:

Քօքօ, Ամերիկայի ստուղ՝ մեծութիւն երե-
խայի գլխու չափ, համը նուշի նման է.
Какао.

Օղի, հարբեցնող խմիչք. *արաղ. Водка.

Օրագիր, օրական գրած ծանօթութիւներ կի՛
գիտելիք. Дневникъ, журналъ.

Օրամէջ, երկու օրը մի անգամ: Черезъ
день.

Օրավար, փոքրիկ արտ, որ կարելի է մի
օրուայ մէջ վարել կի՛ գործել:

